



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

720

ԳԱՂՏՆԻ ԱՏԵԱՆ ԱՆԿԱԽ ԴԱՏԱԿՈՐԱՑ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

Յ. Պ. Ա. Վ. Ե Մ Ե Ա Ն

ԳԱՂՏՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ԳԻՐՔ Ա.

ԴՈՐՄԱՍԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԳՈՐԾ ԶՈՐՐՈՐԴ

Կ. Պ Օ Լ Ի Ա

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. Փ Ա Փ Ա Զ Ե Ա Ն

ԱՆ ԳԵՏՆԱՑԱՐԻ ԹԻՒ 40

1871 —

9(43)

- 24

ԳԱՂՏՆԻ ԱՏԵԱՆ ԱՆԿԱԽ ԳԱՂՏԱԿՈՐԱՑ

2012

Гайдукъ дѣлалъ
Свояя землю и възмѣ

155

9(43)

Printed in Turkey

85

9-24

ԳԱՂՏՆԻ ԱՏԵԱՆ ԱՆԿԱՒ ԳԱՏԱԿՈՐԱՑ


ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

Յ. Դ. Ա. Հ Ա Մ Ե Ա Ն

ԳԱՂՏՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ ԳԻՐՑ Ա.

ԳՈՐԾԱՍՔԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

ԳՈՐԾ ԶՈՐԲՈՐԴ



Կ. Պ Օ Լ Ի Ա

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՓԱ.ՓԱ.ԶԵԱՆ

ՀԵԶԻՐ ԿԱՆ ԳԵՏՆԱՅԱՐԿ ԹԻՒ 40

- 4874 -

2004

12588

ԵՐԱԾՈՒՅՈՒՆ
ՎԱՐԴԱՐԱՅԻ ՎԱՐԴԱՐ

ԱԼԲԱՐԱՐԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ա պատրաստության մեջը պահպանության մեջը



1558
34 R

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ Ազգային Գրադարան

1781

Տ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

Տ. Ա. ՄԱԿԱՐՅԱՆ

8. 0. 9. 0. 8. 0.

Ամէն մարդկային ընկերութիւն, իւլ
մանկութեան ժամանակ, քեթրող կը-
զերին աղդեցութեան կարօտ եղած է»

Ինտիմումն՝ ազգերը վայրենութեան
խաւարին մէջ կը քայլեն . ընկերական
կապերէն շատն անծանօթ է անոնց . կը-
րօնից , կառավարութեան , աղդայնու-
թեան գաղափարները չունին . Յայն-
ժամ կղերը , բանաստեղծական լեզուա-
կը գաստիարակէ զնոսա . յայնժամ Ու-
փէոսներ , Մուսայներ կ'երդեն ասու-
ուածազդեցիկ ներդաշնակութիւնն ան-
տառներէն , լիռներէն , անապատներէն
կը ձգէ ուշադիր վայրենեաց խումբեր .
Խօքա՝ կը զրօննուն , կը յուզին , կը գո-
րովին , կ'ուսնին . քերթողք կ'ազնուա-

ՅԸՆԵՆ, կը բարձրացնեն նոցա միտքերը, կը կրթեն նոցա սիրտերը, ընկերական սիրոյ կայծը կը բորբոքին ամենուն հոդոյն մէջ, համապատասխանատութիւնը կը հաստատեն կը դինեն զնոսա, յօդուտ ընդհանուրին, յօգուտ ազգին, զոր կը կազմեն. — ճշմարիտ մարդարէք գուցէ իրենք ըլլան

Բայց ժողովրդոց այդ մանկութեան ժամանակը կ'անցնի. երիտասարդութիւնը ընդհառապ կը հասնի իւր դիւշադնական արիութեամբը դինեալ, քերդող կղերին կառուցած տաճարներուն քով հոյակապ պալատներ կը բարձրանան, ի ընակութիւն արքայից. — սոքա՝ զոյդ ընդ կղերին՝ տէր են եղած ամբողջ ազգի մը, միլիոնաւոր կուրծքեր նոցա համար կը չնչեն, նիղակները՝ սուրերը՝ վահանները նոցա համար կը շառաչեն. սահմանակազմի դաշտին վրայ մահուան անով ննջող քաջերը նոցա համար իներ են դիտապատ: — կազմուած ժողովրդեան մը բախտին վրայ կը տիրեն

Վեհապետք և կղերը, որնախ դաստի-
արակեց զնա իւր աստուածային նուազ-
ներովը, բայց արդ կրդաւէ նորա ա-
ղատութեան դէմ, զար և ինքը ներ-
շընչեց մանկանց սրտերուն մէջ:

Սակայն թագաւորաց զինուորական և
քաղաքական զօրութենէն իրաւամբ եր-
կընչելով, և ժողովրդեան ալ սէրն ո-
համարումը չկորումելու վտանգէն դըր-
դեալ կղերը կը ջանար զարքայս տեսակ-
մը հնագանդութեան մէջ բռնել աստ-
ուածային պատուհանն սպառնալով կամ
վարձատրութիւնը խոստանալով: որով
ժողովրդոց իրաւանց վաստաբան կր-
կանգնէր յաճախ: ազգերն ուրեմն իրենց
իրաւունքը երբեմն կընդունէին իրեւ
նորէ, և ոչ այլ կերպով: :

Քըիստանէութեան ծագելէն քիչ մը
տուած քրորմք իրենց իշխանութիւնը
ձեռքէ վախցնելու վրայ էին: Արամազ-
դայ շանթն անզօր էր խորախորհուց
իմաստափին անսահման մտացը վրայ
չէր կրնար սարսափ ձղեւ Հռովմայեցի:

ազնուականին սրտին վրայ , չեր զօրէք
նաև խոնարհեցունել պատերազմողը , որ
որէն ու տիգէն դատ ուրիշ բանի վրայ
հաստատուն հաւատ չեր ընծայէր :

Յայնժամ Հրէաստանի խորէն ձայն մի
լոււեցաւ . եղծեալ ընկերութեան մէջ ,
անի՝ աստուածային բարբառ թուեցաւ :
— Այն ժամանակ սմէն աղղերը , դիւ-
ցազնական քաջութեամբ , արբեալ ա-
ռետարանական բարոյականով , իրենց
կրօնական վաղեմի շէնքն սկսան տապա-
լել : զ՞իոս կործանեց մեծ բարոյախօս
մը , արդի և ապագայ յառաջդիմու-
թեան ծնունդ տուողը . Աղիմպոս խո-
ւարհեցաւ , ու անյայտ եղաւ :

Նոր կղեր մը յաջորդեց առաջնոյն ,
աստուածային ճշմարտութիւններ ու վը-
սեմ ստութիւններ քարողելով . փոխու-
նակ Աստղեան տօնախմբութեանց հր-
բաւիրելու զժողովուրդս զերկինս ցու-
ցուց մատնանիշ . փոխանակ կուոզու-
թեամբ արքայից հետ միանալով զազ-
դրս նուաճելու , ու ամկին՝ ստրիին սե-

զանակից ու բախտակից եղառ , վեհապետաց հետ կռուելով , զառաջինն պաշտպանեց , հաւասարութեան , եղբայրսիրութեան մարդավայել դաղափարները տարածելով անդադար :

Տակաւին այնուհետեւ այդպիսի արմատական յեղափոխութիւն մը չէ յուզած զմարդկային ընտանիքը :

Յազմենց Քրիստոս , հաւասարութեան այն մեծ ախոյեանը :

Բայց երբ թագաւորք և իշխանք երկրի նոր կղերին առջին՝ թագերնին լսնարհեցունելով նորա քարողութիւններն ընդունեցին , ու հրաժարեցան իրենց խախտեալ մոլորութիւններէն . երբ կղերը քաղաքներու , գաւառներու , ազգերու վրայ սկսաւ տիրել « պատօնական կերպիւ » , յայնժամ , ո՛հ , յայնժամ միայն՝ Մեծ Վարդապետի բարոյականէն հեռացան

Ժողովուրդք դարձեալ աներեսոյթ եղան . — Խօսելոյ ու խորհելոյ ազատութիւնը , հաւասարութեան մեծ սկզբ-

բունքը, անզգամի մը հնարած ցնորսա-
կան բանդուդուշանքն ու ոճիրը հա-
մարուեցաւ :

Մարդկային Ազգը, կղերին ու վե-
հապետաց ստից ներքեւ վիտացաղ այն
մը իւնները, խորհող էակ ըլլալու յան-
շանքն ունէր . — ուստի տղիտութեան
սեատիսուր քողը տարածեցին համօրէն
քրիստոնեայ ազգաց վրայ . ամէն բան
կղերին աչերով պիտի տեսնէին . ամէն
բան նորա ականջով պիտի լսէին . նորա
պէս պիտի խորհէին . նորա պէս պիտի
խօսէին . . . :

Ընդհանուր մարդկութիւնը մեքե-
նայ մ'էր եղած, զոր կղերը ըստ քմաց
կը շարժէր :

Ա. Ընկերութիւնը իւրիաւոնքնե-
րէն ի սպառ հրաժարած կը թուէր . . .
ուրիշ բան չէր տեսնուէր. բայց միայն
կղերը՝ որ թագաւորաց, իշխանաց ազ-
նուականաց և ասմկաց վրայ միօրինակ
կ'իշխէր : — այսպիսով ու այսպիսով — . այս
Հեղինտկներուն ամենն ալ եկեղե-

զականաց կարգեն էին : Դաստիարակութիւնն իրենք կ'աւանդէին , որպէս և ուղէին : Աստուածաբանութիւնը դեռագոյն դիտութիւն մը համարուած էր , որոյ մէջ բովանդակուած էին միւս ամէն տեսակ դիտութիւնք և արուեստը . աստուածաբանութիւնը նոցա աղբխարը կը նկատուէր , իբր բացարձակ պատճառ ամենայնի :

Հումկ ուրեմն , կաթոլիկութիւնը զօրանալով , և Հոռվիմայ Պապերն ալ , իրենց հայրապետութիւնն ի բազմաց հետէ Տիրերիս գետին մէջ ընկղմած ըւրալով , սկսան լոլոր աշխարհի միահեծան տէր ըլլալու յաւակնիլ . . . : Թողաւորներ կ'օծէին . և այսու իրենք պարզեած կ'ըլլային արքայական իշխանութիւնն ի դիմաց Աստուծոյ , ուրոյ պաշտօնը կը տրուէր նոցա յերկրի

Գրիգոր է Պապը բացարձակ իշխանութեամբ կը դիտէր ամենուն վրայ (ըլլայոր օծեալներւն դպչիք) կը դու

ուար . և քրիստոնեայք ողջոյն՝ Երմիւ-
զածութեամբ և դողութեամբ կը հը-
նաղանդէին :

Բայց , ինչո՞ւ ծածկենք կղերին սու-
մարդկութիւն մատուցած մեծամեծ ծա-
ռայութիւնները . անկեղծ ըլլանք :

Ովկ կամ ի՞նչ կարող եր փրանկթա-
ղաւորաց և այլոց իշխանաց գործած հա-
րըստահարութիւններուն և սոսկալի ոճ-
րագործութեանց չափ գնել , եթէ ոչ
եկեղեցին . հէք անիրաւեալն ո՞ւր կըր-
նար դարձունել զիւր արտասուաթոր ա-
չերը . ո՞ւր կընար դիմել պաշտպանու-
թիւն և խաղաղութիւն գտնելու հա-
մար , եթէ ոչ առ կղերն

Սակէ զատ եկեղեցին միջին դարու-
բարբարոսաց ձեռքէն մատենադրական
անդին զանձեր փախուցեր պահեր է.
դարուց ի դարս :

Բայց ինչո՞ւ զժողովուրդս չէ հրաւի-
րած այն դանձից մասնակից ընելու ըզ-
նոսա . ինչո՞ւ միայն ինքը ինքնամոլու-
թեամբ վայելերէ իբերիութիւնս այն

մտաւորական մնունդը : Ինչո՞ւ այն մատենից մէջէն քաղած դիտնականութեամբը լսնդընը է մտաց վրայ ունեցած իշխանութիւնն ըստ կարելոյն երկարել : Ինչո՞ւ մարդկութեան վրայ տարածուած տղիտութեան անարժան խաւարը վարատելու վոյլթ չէ տարեր

Այս է իւր մեծ յանցանքը :

Այո՞ւ այս պատճառաւ անարդարանալի է :

Այսպէս մինչև տասներորդ դար բոլոր Եւրոպա , մանաւանդ Ֆրանսա , տղիտութեան խաւարին մէջ անցուց , մնապաշտական երկիւզով ու հաւատքով և մարդկութեան պատիւը մոռնաւով : Մինչև այն առեն ազգերը կղերին տիրապետութեան լուծը կրեցին :

աւե միա ժամկե : Այս տան մաքրացուածու
ունի խառնութիւր նախագ ։ Ավագն ըմբաւ
հայութ ու բայց բառ ։ Եղանց բան դպիսական է և
արդյուն այլառակաց ուոյ մի ոչ օհատանշակա

նու ։ Երոպա այս վիճակին մէջ գտնուած
ատեն , ամենազօր , ընդարձակ և զար-
հուրելի ընկերութիւն մը իւր բաղմա-
տեղն ճիւզերը Գերմանիոյ ամէն տե-
զերը տարածեր էր :

Ս. Նի՛ Ս. Նկախ-Գատաւորաց ընկերու-
թիւնն էր , որոյ հաստատութեան պատ-
ճառը դիտնականք հետեւեալ կերպով
ֆիր պատմեն :

ամ ունի դաշտայր մաս ելույթ այս և իսկ
անոնց ունի քառական այս ։ Այս Ա : իսկ
: Ա. Հանդի ցեղաց մաս ելու պատաշին

Գ.

Ը. — Թ գարուն մէջ , Գաղղիոյ թագա-
սորը Մեծն Կարոլոս , Եւրոպիոյ զըեթէ
բոլոք Ալեմանեան աշխարհներուն տի-

րած էր : Գերմանիոյ կայսրութիւնը
 չեռք անցուցեր էր : Եւ եթէ Կ.Պօլովյ
 իրենէ կայսրուհւոյն առաջարկութիւնն
 ընդունէր, ողջոյն Եւրոպիոյ միահեծան
 տէրը պիտի լինէր : Պապերու աշխար-
 հական կառավարութեանը պաշտպան
 կանգնելով՝ շատ մը թաղաւորաց, իշ-
 խանաց յաղթելով Խոտալիոյ ալ տիրած
 էր : Գրականութեան խրամոյս կ'ուժար
 դիտնականները իւր շուրջը համախըմ-
 բելով՝ առատապէս կը վարձատրեր ըզ-
 նուա, և այլոց ալ օրինակ տալու հա-
 մար՝ ինքն ալ կը գրէր : ուսումնական
 ընկերութեանց անդամակից ըլլալը պա-
 տիւ կը համարէր : Իւր նուածած ակ-
 գերը, երախտագէտ կղերին ազգեցու-
 թեան նպաստովը և իրեն զօրութեանը
 ձեռքով անբարրառ կը հնապանգէին .
 բաց ՚ի Սաքսոնեայիներէն, որ յարառե
 ապստամբութեամբ՝ կը խնդրէին իրենց
 կրայ ծանրացող լուծը թօթափել : Ա-
 նոր համար Մեծն կարուս յանախ ըս-
 տիպուեցաւ իր կլիէ ժխնդրութեան սառաւ

կոթեանը . ի զուր անապատ դարշուց
բոլոր Սաքսոնեան . Գերմանիոյ աղա-
տորդի քաջ զաւակները՝ հայրենասի-
րութեան և ազատութեան սիրովը վառ-
ուած , կը քամահեին մահը , ու իրենց
նախնի անկախութիւնը դարձեալ կը
ջանային ձեռք ձգել :

Մեծին կարուսի լայնածաւալ կայս-
րութիւնը դիւրակործան շենք մ'էր ,
անի կրնար կանգուն մնալ , եթէ իրեն
պէս որդի ու յաջորդք ունենար : Բայց
դժբախտաբար իւր կենդանի մնացած
որդին , Լուդովիկոս Հօրլ բարեմանու-
թիւններէն բոլորովին զուրկ էր : Մինչ
կայսեր կենդանութեան ժամանակ Սաք-
սոնեացիները կ'ապստամբէին անդադար
ու թափառական Նորմանտիացիները
կ'իշխէին գրեթէ նորա աշաց առջև ան-
պատակութեանց խիզախել . ինչպէս տը-
կար Լուդովիկոսը պիտի դօրեր ազգաց
պատկառելի ընել զիւր անձը և երկիւզ
ազգել ապստամբաց վրայ . ինչպէս այն
բազմաթիւ և իրարմէ լիզով , բարքով

Ան. զանազանեալ ժողովուրդները մի և
 նոյն լուծին տակ պիտի կարենար ըրո-
 նել: Խոր հօրը փառաց ճաճանչը հա-
 մօրէն կայսրութեան վրայ կը նշողէր .
 և մեծարանք ու արսափի կ'աղդէր ա-
 մենուրեք. ու՞ր էր իրեն իրաւունքն առ
 փառս, մեծարանս և առսարսափօ: Ասկէ
 զատ Մեծին Կարոլոսի լուծն ընդունող
 աղդերէն շատը նորա մահուան կ'ոպտ-
 սէին անհամբերութեամբ դայն դիւրաւ
 թօթափելու համար: Հռչակաւոր Վե-
 հասլետը խորաթափանց մոքովը զայս
 քաջ ըմբռներ էր. իւր նուաճած ազ-
 գերուն դիւցազնական քաջութեան փոր-
 ձըն ալ տռած ըլլալով՝ գրեթէ կը մար-
 գարէանար իւր որդւոյն թողելու ժա-
 ռանդութեան՝ յետ իւր մահուն մաս մաս
 ըլլալուն վրայ: Աւստի այս կացութիւնը
 Կուդովիկոսի հասկցնելէն յետոյ, զնա
 կայսրութեան մասնակից ըրաւ, աչքին
 առջև տիրապետութեան դաս պալու
 համար: Խոկ ինքը, կենաց վերջին օ-
 րերը որդւոյն նաեւմասաւեր ապագա այսին

Վրայ աւնեցած չափակուշակ խորհուրդ
ներով անցնելէն յետոյ ։ կնքեց կեան
քը 814ին։

Արդ ։ հաւանական չէ որ հանձարա-
միտ կարօլոսը ապագային սպառնելեաց
առջև համակամութեամբ գլուխը խո-
հարհեցնելով՝ նախատես կամքով նորա
տռաջընառնելու հնարմը երկնած չըմայ։
Հաւանական չէ որ իւր ժողովուրդները
սիրող և նոցա բարօրութեան նետու-
մաւ եղող կայսրը՝ անհմնճար որդւոյն
սպագայն չափահավելով՝ զնա աղդաց
վրէժինդրութեան նշաւակ թողած ըւ-
լայ։ Անոր համար կը կարծուի որ դադու-
նի ոստիկանութիւն մը հաստատած ըւ-
լայ իւր կայսրութեան ամեն գաւառ-
ներուն մէջ, մանաւանդ ՚ի Գերմանիա,
ուր որ այդ ընկերութեան մէջ գտնը-
ւող դատաւորները զժողովուրդս կը
դատէին և կայսերաց ճշդիւ կ'իմա-
ցընէին իրենց խուզարկութեանց ար-
դիւնքը։ Աւստի այդ ոստիկանութիւնը
ընականարար վեհապետոց գործին ըւ-

լուսվ՝ անձնաւէք կը ծառայէք անոնց,
և քանի քանի անզօր կայսերք այն ըն
կերութեան վրայ յեցեալ՝ զօրութիւն
և ոյժ գտած ըրբալու են արդեօքարաւ,

ու Եամսութեան ունաւ Ա-վարաւ
ունի այսու ոյ մասի ուղարկութ և այսու^ւ
առջանք ու հայոց և Նորին նուն ամս
արածնի Հայութաւառավաշխաչ մասի մաս

Պ. : Եշիսոսու ոյ

յ և Եամսութեան ուղարկութ, ունաւ Ա
մի Հայութաւ քառական ոյ և Եամսութեան
առջանք Ամ ուղարկութաւ ուղարկութ ու ուղար
կայց այդ ոստիկանութիւնը, կայսե
րաց այն արթուն պահապանը, տակա
տու տակաւ նոցա իշխանութենէն ենեւ
լուի անկախութեամբ գործել սկսաւ,

Յայժամ զարհութելի ընկերութեան
մը կերպարանն առաւ։ Կալուածապե
տական ընկերութեան մը մէջ, ուր ա
նիրաւութեանց և հարստահարութեանց
վերջը չէր դար, ժողովրդեան, ուամ-
կին հուսկ ուրիմն խոնարհեցաւ ըս-
տը ըկութեան մէջ, Անկախ-Գատաւու-

բաց ընկերակցութիւնն տրդարութիւնն
կը մատուցանէր : Ի շնորհա անտարա-
կոյս աղքատին , սարկին , ընդդեմ ա-
շազակին և ազնուականին . . . :

Գաղտնի-Առեանը պաշտպանած ը-
լալու է ղուամիկն , վասն զի նորա վրայ
քնաւ յարձակում չէ ըրած . թէպէտե-
ասի Անկախ-Գատաւորներէն մեծապէս
կը սարսափէր :

Զարմանք , արքայից հաստատած մէկ
ընկերութիւնը ժամանակ անցնելէն յե-
տոյ իւր դէնքերը անոնց դէմ դարձու-
ցեր էր : Մարդկութեան իրեն նպաս-
տին կարօտ ըլլալը տեսնելով՝ նոցա տ-
նարդական լուծը թօժմափեր էր : Քան-
զի ամեն ընկերութիւն , իւր գովելի
նպատակին համնելու համար ազատու-
թեան տարրին անհրաժեշտ պէտք ու-
նի , տուանց որոյ քիչ տոենէն կը կոր-
ծանի իսպառ :

Վենք հոռ հեղինակէն առելի բան չենք
կարող ըսել Անկախ-Գատաւորաց ըն-
կերակցութեան վրայ : Այս միայն պի-

ամի աւելցնենք որ միջին դարու ընկերութեան մէջ մտաւորական, կրօնական մեծ յեղափոխութեան մը կարապեան եղաւ . իւր գաղտնի խորհուրդ ներով, կանոնագրութեամբքը, արարողութեամբքը Յովհաննէս—Հիւսի և Լուտերի ծամբայ բացաւ, և սոքա ալ վերջ տուին այն ընդհանուր աղիտութեան, որ ծանրացեր էր բոլոր Եւրոպիոյ վրայ՝ կղերին խնամքովը :

Բայց, աւազ, այդ ընկերակցութիւնը ժամանակ անցնելէն յետոյ եղծաւ, Ղերմանիան պառակտող կուսակցութեանց սկսեց ծառայել. Փոխանակ արդարութիւն մատուցանելու, անձնական վրէժներու լուծուելուն նպաստեց . Փոխանակ եղեռնաւորը պատուհանելու, անմեղին վրայ յարձակեցաւ :

Այս եղծման գլխաւոր պատճառը գուցէ բազմաթիւ ազնուականաց յիշեալ ընկերութեան մէջ գիւրաւ ընդունիլն ըլլայ . որով յաճախ ոճրադործք, անողատուհաս մնացին :

Ողորմելի՛ մարդկութիւն . ինչո՞ւ գովելի հաստատութիւն մը կ'եղծանի , կամ կը կործանի . ինչո՞ւ շահասիրութիւնը , փառասիրութիւնը կը պղծեն զայն . ինչո՞ւ մարդկային յառաջդիմութեան չը հետեիր , չ'առաջնորդեր այնմ , նորա ոկղբնապատճառ ըլլալէն յետոյ . ինչո՞ւ իւր նախնի ցուցակէն մազ մ'ալ չը շեղելով կ'անհետանայ . ինչո՞ւ , ինչո՞ւ . . .

Դժբախտաբար զրեթէ ամէն հաստատութեանց պատմութիւնը այսպէս է . այսպէս է նաև արդի քրիստոնէութեան յետախաղաց ընթացքը . . .

Անկախ — Գատաւորաց ընկերակցութեան մէջ ատեն մը այնքան անկարգութիւններ դործուեցան , ամեն կարդաց մէջ այնպիսի խառնակութիւն մը տիրեց , որ մնացած ողջամիտ անդամակիցք զարհուրելով՝ ջանացին վերտտին կազմակերպել զընկերութիւնը նոր հիմանց վրայ , մանաւանդ այնպիսի ժամանակ մը , յորում մտաւորական յեղափոխութիւնը մծաենալով՝ ընդհանուր

շարժման մէջ էր Գերմանիան : Տաներորդ դարը անցնելէն յետոյ ժողովուրդը սկսեր էին խլրտիլ : Զիրենք խեղդող անձուկ շրջանակէն դռւրս ելնելու փորձ փորձեցին , մտածութիւնը որ ըստ ինքեան անսահման է , բխեալ յանսահմանէն , անկոպար տարածութեան հետամուտ եղաւ , շղթայները կոտրեց . և որ օրմ' ալ յազատութենէ յափրշտակեալ , սկսեց երկնաճեմ դաւագ մէջ անարդել շրջիլ :

Ուստի , ընկերութիւնը , յորում կը գտնուին երկրին ամեն հանճարամիտ , և աղատասէր մարդիկը , փորձեց համայնաշարժ յեղափոխութեան մէջ նետուիլ , բայց այն առաջին և վերջին քայլն եղաւ :

Տկարացաւ ընկերութիւնը , ա՛լ իւրծերութեան ժամանակն անցեր էր , նոր ոերնդեան մտաւորական անկախութեան աւելի ծառայութիւն չէր կրնար մատուցանել :

Օր մ'ալ Արկիտմօնտ կայսրը տապարի

հարուածը տալրվ խորտակեց իսպառ
Անկախ—Դատաւորաց ընկերութիւնը ,
որ շատ չարիք , բայց և անդին բարիք
ալ ըրեր էր Գերմանիոյ կրօնական տ-
զատութեանը համար , ինքը նախ մտրդ-
կութեան առջև հարթեր մաքրեր էր
ազատութեան նուիրական ճանապարհը :

Առաջի Յովհաննէս—Հիւս և Լուտէր
գլեհապետո , զազնուականս և զռամիկս
պատրաստուած տեսան իրենց վարդա-
պետութիւններն ընդունելու , ապա թէ
ոչ անկարելի կ'ըլլար իրենք ժողովուրդ-
ները նոցա սովորական հնազանդութե-
նէն ապստամբեցնել մինչ Գաղղիան ,
Սպանիան և Իտալիան կաթոլիկ կղերին
ըուծին տակ կը հեծէին :

Մարդկութիւնն ուրեմն ընկերու-
թեանց կարօտ է իւր մտաւորական յա-
ռաջդիմութիւնը դէպ ի կատարելութիւն
մղելու համար : Այն ընկերութիւններն
ալ յարատեւութեան և անշահասէր հոգ-
ւոյ կարօտ են իրենց նուիրական նպա-
տակին հասնելու համար : Բայց դրժ-

բախտաբար մարդիկ իրենց բարի եւ-
աանդէն պաղելուն , և վառասիրու-
թեան ու քաղաքականութեան հոգին
ալ ամէն մարդասիրական հաստատու-
թիւններն յուզելուն և կործանելուն
պատճառաւ , հարկ է որ նորանոր ըն-
կերութիւններ առաջնոց յաջորդեն ,
նոր սերնդեան պիտոյից համեմատ ցու-
ցակ մը յօրինելով . . . ,

Եւ միշտ այսպէս եղած է . ինչպէս են
Տաճարականք , Յիսուսեանք , Ոօզ-Գրու-
այի ընկերակցութիւնը , որք մի և նոյն
բախտին վիճակած են , Ընկերութեան
մ'ալ կործանուելուն գլխաւոր պատճառ-
ներէն մին ալ ժողովրդոց դաստիարակու-
թեան համեմատ ցուցակնին չը վերաքըն
նելին է .

Հիմա ընդհանուր աշխարհիս վրայ
երկու հզօր ընկերակցութիւնք կը տի-
րեն «Աղատ-Որմնադիրք» և Համազ-
գայինը ինդէքսավունալու :

Աղատ-Որմնադրաց ընկերակցութեան
ոկիզրն սիծանօթ մնացած է : Ումտնք ի-

բեն աղբիւրը ենել ուղելով մինչև
նախնի Յունաստանի և Եգիպտոսի դաշտ-
նեաց դիմեր են . այլք միջին դարու
մէջ խնդրեր են զայն . ինչ և իցէ , այս
մեղ կարեւոր է խոստովանիլ , որ վերո-
յիշեալ ընկերակցութիւնը , երկրագըն-
տիս ամէն ազգերը իրարու եղբայր ը-
նելով , և բարեգործութեան ու բարո-
յականի դանձերը բաշխելով օր մը պի-
տի յաջողի դուցէ զարհուրելի պատե-
րազմաց վերջ տալ , որ , հայրենասիրու-
թեան քողին տակ ծածկեալ փառասէր
քաղաքականութեանց արգասիք են մի-
այն :

Իսկ Համազգային Խնճեանակօնալ անուա-
նեալ նօր ընկերակցութեան դալով , և
անկողմնասիրութեամբ նկատելով զիրն ,
որոշ դատողութիւն մը չենք կարող ընել :

Փարիզու եղելութիւնը խառնաշփոթ-
ոնքագործութեան մը աղէտալի և ան
հեղեղ սխալմունքն է , որոյ պատաս-
խանատուութիւնը շատ մը կուսակցու-
թեամբ վրայ ալ կ'իմայ :

Ապագայ մուսինք, որ վաղ կամ
անագան կը լուսաւորէ զմեզ. սպասենք
ուրեմն, և չըդատենք մի քանի պաշտօ-
նական հեռագիրներ կարդալէ յետոյ :

Այս ալ աւելցնեմ —բարեմոյն մար-
դիկը չը դայթակղեցնելու համար — որ
իններնառիծու ճանչելուս համար՝ չեմ կը ը-
նար դովել որպէս և չեմ կընար պար-
սաւել զայն :

14 Դեկտ. 1874



ԱՆԿԱԽ ԴԱՏԱԽՈՐԱՅ

ԱՏԵԱՆ ԳԱՂՏՆԻ



Ա.

Մի քանի խորհրդածութիւն Գերմանիոյ վը-
րայ : — Անկախ Դատաւորաց դադանի ընկե-
րութեան հաստատութիւնը Մեծին կարողակ
գործն ըլլալուն կարծիքը : Ասոնց խորհրդաւոր
զօրութիւնը : — Կէլֆք և ծիալրէնք , նոցա կը-
սիւներուն սկիզբը : — Գաղտնի ատեանին ի-
րարու թշնամի կրղմանց ձեռք դործի մ'ըլլալը :



Գերմանիա՝ դիտողութիւննիս գրաւելու որ-
ա՛փ արժանիէ : Մինչև հիմա՝ ինչպէս որ պէտք
է՝ յարգը ճանչցուե՞րէ : Զգիտեմք : Նորա գըր-
քերէն և պատմութենէն զատ ուրիշ բան չեմք
գիտեր այն երկրին վրայ . այն ծանրաբարոյ և
միանդամայն եռանդուն ժողովրդեան մէջ առ-
բելու է՝ նորա՝ իրական արժէքը դատելու հա-
մար :

Գերմանիան միշտ կրօնական հերձուածներու ասպարէզ մ'եղած է . ազատութիւնը՝ իր քաջ ողաշտականներն ու անողորմ թշնամինները միանդամայն ունեցեր է այն հողոյն վրայ . և սակայն Տեւտոնիան՝ իր արիութեամբը ձեռնարկած մըտաւոր սկան կոխւներէն կարծես քիչ օգուտ քաղեր է : Ասոր պատճառն է անտարակոյն, Գերմանիական ժողովրեան բնական ախտը՝ որ կողքնես ժրութիւնը կ'սպաննէ , և կերպով մը թոյլուութիւն կ'ընէ մոտաւորական ծուլութեան :

Գերմանիան շատ կը խորհի , քիչ կը գործէ . նու մանաւանդ , քիչ կը մտածէ , շատ կ'երազէ :

Ինչ որ մարդկացին մտաց սովորական սահմանն վեր է , ինչ որ կը ջանաց կենաց սովորական զբազմոնքներէ միտքն հեռացնել , ինչ որ հուսկ ուրեմն , մարդուս առջեւ նոր հորիզոն մը բանալ կը խոստանայ՝ կը ձգէ ու կը զրաւէ Գերմանացւոց ուշադրութիւնը : Անոր համար , Գերմանացիք , ի հնուց հետէ , անցերցն աւանդութեանց հաւատարիմ մնալով ներկային ողորմելի տեսարաննէն աչքերնին դարձուցեր , ապադային խորերը թափանցեր են : Այն երկրին պատութեան մէջ մերիթ ընդ մերթերնող բազմաթիւ ընկերութեանց պատճառը՝ Գերմանացւոց մտաց սա վերոցիշեալ մշտնինուսը յօժարութեան մէջ ինդրելու եմք : Պազոնի անձիութիւն մը անդադար կը դիտէ մտաց

մէջ, ճանչելու անցագելի պիտոքը՝ զմիտու կը դրգուէ, արուեստները, գրականութիւնը, քերթողութիւնն իսկ, Գլոբը թօքի և Ավելի վսեմ քերթուածները, Գերմանիոյ բանականութիւնը միշտ չարչարող խորհրդաւորութեան տրիանաց նուազ կամ առաւել բացատրութիւններն են :

« Ֆրան-Ժիւժ (1), Ռող-Գլուտիլիւմինէ » անուանեալ դաշտնի ընկերութիւնները՝ մեր վերը ըստածներուն կենդանի ասկացոց եղեր են անցելոյն մէջ. այսօր իսկ, յուզմունքը դադարած չէ. չեմք գիտեր թէ որ օր պիտի խաղաղի, եթէ երբէք խաղաղի :

Խնչպէս երբեմն, այսօր ալ Գերմանիան աղասութիւն կ'երացէ, բայց առանց որ և է զործնական հնար մ'ունենալու զայն ձեռք բերելու համար : Նզօրէ, արփասիրուէ, նոր կեանք մ'առնելու տարօրինակ պիտոյքը ուժգին կ'իմանայ յինքն . և սակայն յառաջադիմութեան ճամբուն վրայ ընդ խարիսավա կը յառաջէ, և զինքը յամենուստ պաշարող խաւարը անվտահութեամբ փարատել կը ջանայ : Խննեստաներորդ դարուն գիւտերուն պատճառաւ Եւրոպիոյ կրած նիւթական յեղափոխութեանց մէջ՝

(1) Ֆրան-Ժիւժ, Աղատ դատաւոր ըսելէ, Դոր մեք Անկախ դատաւոր թարգմանեցինք ներկայ զործոյս մէջ :

Գերմանիան ապշած, խոռված ու դրեթէ անձակաբեկ՝ շուրջը տեղի ունեցող շարժմանց վարանաւ կը նայի, և չդիտեր թէ ինչո՞ւ ինքը հանդարտ ու անշարժ կեցեր է . . . : Իւր շուրջը պահող երկիրներուն մէջ ընկերական մեծամեծ խնդիրներ կը յուղեն . մտաւորական մարտին շոինթը կը լսէ, բայց անհոգ կը կենայ: Խնչ զարմանալի տեսարան է սա անշարժութիւնը, զոր անտարբերութիւն կրնայինք համարել, վասն զի այն ազգը միշտ յառաջադէմ եղեր է, և յաճախ մարդկութեան ձանապարհին վրայ սփռեր է իւր մտաւորական զօրութեան արդասաւոր կայծերը: — Ինչո՞ւ հիմա կը հանգչի: — Ինչո՞ւ համար անշարմարժամանակի մէջ քայլելէ կը դադրի. միթէ ձանապարհին երկայնութենէն յոդնեցա՞ւ . միթէ հանդստեամբ նորանոր մարտերու կը պատրաստուի:

Ինչ որ ալ ըլլայ, Գերմանիան ամէն նկատմամբ յոյժ բեղմնաւոր երկիր մ'ըլլալուն համար, Եւրոպան անհամբերութեամբ կ'սպասէ նորահանդստեան վերջը աեսնելու :

Զեմք մեղադրեր Գերմանիան իւր լուռթեանը համար, և ոչ ալ՝ մեր դարուն առջի յիսուն ամաց մէջ եղած յանդուդն վործերուն շընալաստելուն համար, քաջ գիտեմք որ Հոենուսէն անդին, այնպիսի հանճարաւոր մարդիկ կան՝ որ

յարմար ժամանակին դիտեն իրենց խորհըք-
դոց բարձրութենէն իջնել՝ աշխարհիս ճանա-
պարհաց մէջ քայլելու համար . առաջուց չը-
դատենք , այլ միայն սպասենք , վասն զի քանի
մը ժամանակէ ի վերյայնկոյս Հռենոսի դըտ-
նուող ժողովրդոց մէջ , այնալիսի յօժարութիւն-
ներ տեսնուելու վրայ են , որք մարդկութեան
բաղդին վրայ օգտակար ազդ եցութիւն կրնան
ունենալ : Գերմանական երիտասարդութիւնը ,
որ այնքան հանդարտաբարոց , պատուաւոր ու
ազնուասիրտ է , և որ մեր ասլականեալ ընկե-
րութեան մէջ խակ՝ անցեալ դարուց նուիրա-
կան աւանդութիւնները չէ մոռցեր , այդ ե-
րիտասարդութիւնը , կ'ըսեմ , վերջի ատեննե-
րըս մի քանի իրաց սկզբնաւորութիւն տալով
մեծապէս պատիւ ստացաւ . միթէ ապագային
նկատմամբ Գերմանիոյ վրայ յոյսերնիս դնելո՞ւ
եմք , չեմ կարծեր որ մէկը կարենայ հաստա-
տել զայս :

Եւրոպական ազդացքական դասակար-
դութեան մէջ , Գերմանիան երկրորդական
կարդին մէջ գտնուելուն պատճառաւ՝ չիկրնար
կարեւոր բանի մը օրինակը տալ . նա մանա-
ւանդ՝ եթէ չափազանց աղատամիտ ցուցնէ-
ինքինք՝ իւր կացութեանը մնասած կ'ըլլայ .
ուստի , ինչպէս որ վերը ըսինք , առանց նա-
խադասելու սպասել կը մնայ մեզ :

Հիմա՝ խօսքին կարգը բերած ըլլալուն համար ըստնքը որ, Գերմանիան՝ իւրքաջութեանը, բարդականութեանը ու խելամտութեանը համեմատ քաղաքական պաշտօն մը չունի, անշուշտ ապագ այն՝ իւր արդարութեամբը սկիտի հարթէ այն քաղաքական անիրառ անհաւասարութիւնները, որովք բաւականէն աւելի կ'ըղբաղին մարդիկ, այն կէտէն սկսելու են այն ամենայն մեծամեծ յեղափոխութիւնները՝ ուրոնցմէ կը յուսաց հին աշխարհս իւր վերականդնումը։ Գերմանիան իւր կարողութիւնը յայտներէ . աշխարհիս պատմութեան մէջ բազում անդամ կատարած դերէն, իմացուեցաւ իւր զօրութեան ու մեծութեան չափը. ուրեմն վեհանձնութեան ու արդարութեան դործ մ'ըրած կ'ըլլանք, եթէ իրեն գարցնենք այն տեղը, որ իրեն սեպհական եղած է :

Բայց երէկուան քաղաքագէտները պիտի որատասխաննեն թէ, Եւրոպական զուգակշռութիւնը կը պահանջէ որ ամեն բան առջի տեղը մընայ, և թէ մեծամեծ ազգաց ժողովքին մէջ նոր ժողովուրդ մ'ընդունելու փորձը՝ աշխարհիս օգտից մեասել ըսել է : —

Խեղճ պտտճառ արանութիւն :

Պէտք է նորող ել այդ կարճատես ու վաղեմի քաղաքականութիւնը, որ մեր բաղդը անմըսութեամբ ուղածին սկս կը կարգադրէ .

միթէ Ֆրանսայի յեղափոխութիւնը իզո՞ւր յԵւ-
րոպաց և երկրագունդու արշաւեց. նորանոր ովհ-
տովք մէջ տեղ ելան, որք նորանոր գոհունու-
կութեանց կարօտ են : Ահա՛, նոր սերունդը
կուդաց . նա՝ խմաստութեամբն հանդերձ՝ աշ-
խոյժ և եռանդ ունի. նա՝ վաղ կամ անադան
կարօտ սիստի ըլլաց սյնավիափ կացութեան մը,
որ, լայնաղիր և հաստատուն հիմանց վրայ կա-
ռուցեալ ըլլուսուն համար՝ թէ ներկայիս և թէ
ապադային մէջ խաղառ չխախտուի :

Մեծին կարոլոսի (1), քաջադործութեանց
համբաւը բոլոր Եւրոպից մէջ տարածուերէ էր,
և Արևմտեան կողմը, Սպանիային սկսելով
մինչև Եպրոս գետը եղող ամէն գտառները

(1)Մեծն կարոլոս կամ կարոլոս առողին,
ծնաւ Պաւիլիրայի քաղաքներէն Սալյալուրիի
մէջ 742 թուականին . և 769 ին իւր կարլումոն
եղրօրը հետ թագաւորութիւնը ձեռք տուաւ:
771 ին եղրայրը մեռնելով՝ մինակ թաղաւո-
րեց : Լոմպարտացւոց արքային Տիտիչի դըս-
տեր հետ ամուսնանալու համար՝ արձաւեց
իւր Հիմնիթրուտ անուն կինը՝ չանսալով ըՍ-
տեփանոս Դրդ. Պապի յորդորներուն ու սպառ-
հալեաց : Անորդի մնալով՝ երեք տարիէն յե-
տոյ վերստին բաժնուեցաւ կինէն : Այն տ-
տեն Լոմպարտիոյ թագաւորը զայրանալով
Փրանկաց սրբային՝ պատերազմ հրատարակեց,
և թշնամութիւնը սկսաւ, Հոռվիմայ եկեղեցւոյ
երկիրներն արշաւելով : Պապը՝ Կարոլոսի օղ ~

կը խոնարհեին նորա յաղթական զինուց առաջ չեւ : Մեծն կարոլս յիրաւի մեծանուն կայսր մ'եղաւ . քաղաքականութեամբը , աշխարհաւաշխարհակալութեամբը և անգլութեամբն իսկ «մեծ» լսուելու արժանի էր :

Աքուիտանիան . Վասդոնիան , Լոմպարտ-

նութիւնը խնդրեց , այն ալ եկաւ և մի պատերազմաւ և եթ՝ Լոմպարախոյ տէր եղաւ , յետոյ Պաւիէրայի դքսին ալ յաղթելով՝ Պաւիէրան իւր կայսերութեան հետ միացուց : Այս աշխարհակալութիւններէն յետոյ Բաթէրալորնի մէջ Սաքսոններու հետ դաշնակցութիւն ըրտու : Այնուհետև Սպանիա գնաց՝ Մաւրիդանացիներէն նեղը մտած մի դաշնակցին օդնելու համար՝ Բամբլիւն քաղաքը հիմնայատակ կործանել տուաւ . ՚ի դարձին Պերինեան լերանց մէջ իւր բանակին ընտիր մասը կորոյս : Սաքսոնները դաշանց դէմ գործելուն համար կարոլս նոցա դէմ վազեց , և երեսուն երեք տարի պատերազմեցաւ : Հուսկ ուրեմն Սաքսոնիոյ Ամայի դառնալով՝ 800 ին մարտն ալ ռւարտէցաւ : Առոն Գրդ . Պասլը՝ Արևմտից կայսր օծեց զՄեծն կարոլս ՚ի Հուսվիմ : Մեծն կարոլս մեռաւ 814 ին : Այս հոջակաւոր և յիրաւի մեծ անուան արժանի եղող միապետը ոչ թէ միայն մեծ աշխարհակալ մ'եղաւ , այլ նաև գրականութեան նպաստեց , զառաջինն Ֆրանսայի գրեալ օրէնք տուաւ , քերականութիւն մը յօրինեց , և մի քանի Լատին լեզուով գրուած քերթուածներ թողուց :

ան , գրեթէ բոլոր Խոտալիան , Սուապիան ,
Պավիերան , Ֆրանգոնիան , Սաղսոնիան , Ուն-
դարիան , և Թրանսիլվանիան . Իամբրիան ,
Խրվաթիաթանը և Տալմացիան ընդարձակ կայս-
րութեան մը գաւառներն եղած էին , զոր
կը հովանաւորէր նոր կայսեր հանճարը : Ի-
րէնէ (1) կայսրուհին պատգամաւորներ զըր-
կեց Մեծին կարոլոսի առաջարկելով անոր՝ որ
իրեն հետ ամուսնանայ՝ խոստանալով միան-
գամայն Արևելից կայսրութիւնը : Քիշ մնաց
որ բոլոր աշխարհիս տէր պիտի ըլլար , եթէ
այդ առաջադրութիւնը կատարուէր . այն ժա-
մանակ աշխարհս արդե՛օք ի՞նչալիսի վսեմ ու
մեծաշուք տեսարան մը սփտի ընծայէր :

Մեծին կարոլոսի զօրութիւնը անզուգական
էր . բայց այդ կայսրութիւնն իրարմէ զատ-
ուելու յօժարութիւն ցուցնող այլասեռ տարե-
րօք բաղկացեալ ըլլալուն պատճառաւ , հաս-
տատուն մնալու համար՝ իւր տիրոջ կորովի
հանճարին կարօտ էր : Մանաւանդ Գելոմա-

(1) Իրէնէ կայսրուհին իւր ամուսնոյն Լէոն
Դրդ . ի վախճանելէն յետոյ իւր կոստանդիա-
նոս որդւոյն հետ թաղաւորեց : Իւր ամուս-
նոյն երկու եղբայրքը սպաննել տուաւ , և իւր
որդւոյն իսկ չխնայեց : Ճողովուրդը զայրա-
նալով՝ թագաւորեցուց զՆեկեփոր , որ Լեո-
պոս կղզին աքսորեց զկայսրուհին , ուր մե-
ռաւ 803 ին Տատարեկան հասակին մէջ :

Նիոյ ժողովուրդները, և մասնաւորապէս Սաք-
սոնիացիք՝ որ կայսեր փոխանորդներուն դէմ
շարունակ կ'ապստամբէին և ինքն իսկ հինգ
անգամ հարկադրուեցաւ զանոնք անձամբ պո-
տուհասելու, բայց կատաղի Սաքսոնիացիք, ոչ
պատուհասներով և ոչ ալ բարեբարութեամբք
կը զսպուէին :

Այս բազմաթիւ ապստամբութիւնները մեր-
ձակոյ ժողովուրդները զարթուցանելու կը
նախառուէին : Մեծին կարողուի միշտ դիւրին
չըլլարվ զանոնք նուաճել, բազում անգամ ըո-
տիպուեցաւ սարսափելի անգթութեանց ձեռք
զարնելու :

Միտնգտմ Սաքսոնիացիք՝ իրենց տրդարու-
թիւն մատուցանելու համար զրկուած պաշ-
տօնեայները անողըրմարար ջարդելուն հա-
մար, Մեծն կարողու միտքը զրաւ որ այն-
պիսի եղեռնագործութեան մը համար Սաք-
սոնիացիներէն սարսափելի կերպով վրէժ լու-
ծէ :

Ուստի արշաւեց անոնց երկիրը, ամեն բան
կործանեց, հրկիզեց, բազմաթիւ ջարդեր
գործեց, բայց այս պատուհամը զանոնք չը
նուաճելէ զատ աւելի զայրացուց նոցա-
գուռողութիւնը : Չուզեցին հապատակիլ, անոր
համար՝ անոնցմէ չորս հազար հոգի գլխատ-
ուեցան :

Ուստի ասոնց հպատակութիւնը խափուսիկ քան մէր : Մեծն Կարոլոս մեծահանձար մարդ մըլլալուն , և իւրյատուկ կացութիւնը յատուկ դիտակցութիւն մ'ունենալուն պատճառաւ , հասկցաւ որ՝ բոլոր իրեն հպատակ եղալ ազգերը՝ իւր մահուընէ վերջը տեղի ունենալիք առաջին խոռվութիւններէն անշուշտ օդուտ պիտի քաղէին՝ իրենց ապատութիւնը վերաստանալու համար : Իրեն երէք որդոցմէ՝ որոց կը յուսար իւր աշխարհակալութեանց և ըրած երկարատե մարտից արգասկը թողուլ , մէկը միայն , Լուի-լը-Տէպօնէր (1) , կենդանի էր :

(1) Լուի-լը-Տէպօնէր , (Լուդովիկոս բարեմոյն) 778 ին ծնաւ , երեք տարեկան հասակին մէջ Ակուխտանիայի թագաւոր անոււանեցաւ , և 814 ին իւր հօրը յաջորդեց : 817 ին՝ իւր վիճակները Լօթէր , Պետինոս և Լուժովիկոս որդւոցը մէջ բաժնեց : Առաջինը կայսերութեան մասնակցուց , երկրորդը Ակուխտանիայի , իսկ երրորդն ալ Պաւերայի թագաւոր ըրաւ : Յետոյ Յուդիթ կինէն Կարոլոս անուն որդի մ'ունենալով , 829 ին զնա Գերմանիոյ թագաւոր անուանեց , որով Լուդովիկոսի և անոր երեք եղաբարց մէջ պատերազմ ծագեցաւ : Լօթէր՝ իւր հօրը իշխանութիւնը յափշտակեց , զանի վանքի մը մէջ փակեց , բայց կացարը իւր երկու որդւոց ձեռքովը աղատեցաւ ու դարձեալ թագաւորեց մինչեւ մտհը՝ որ 840 ին տեղի ունեցաւ :

Առիլլ-Տէսլօնէր ճոխացած էր նախանձելի բարեմանութեամբը՝ զոր իւր հայրը զարդացուցեր էր, բայց չունէր Մեծին կարողախոչ աշխոյժը, ոչ կորովը և ոչ փառասէր քաջութիւնը։ Կայսրը՝ իւր նուաճած ժողովրդոց պատերազմներուն մէջ ցոյց տուած քաջադործութեանց փորձն առած ըլլալով կ'իմանար որ իւր անունը, փառաց ազդեցութեան սպակն ըլլալով հանդերձ՝ այդ ժողովուրդները հընազանդութեան մէջ բռնելու չբաւելին զատ, իւր որդւոյն անփորձ ձեռքերը՝ իրեն թողուած իշխանութեան բեռը կը ելու անկարող պիտի ըլլան։ Մեծն կարողա իւր ժողովուրդները կը սիրէր։ Օր մը լացաւ՝ Նորմանտացւոց Միջերկրականի ավանց վրայ ըրած սսպատակութեանց պատմութիւնը լսելով։ «Եթէ այդ մարդիկը, աղաղակեց, իմ կենդանութեանց ատեն կ'իշխեն այդպիսի ձեռնարկութեանց խիզախել, ինչե՞ր պիտի չընեն արդեօք իմ մահուընէս վերջը»։ Այս երկիրովը՝ իւր կենաց յետին օրերը իրեն մեծ մտառանջութիւն պատճառեց։ Նորմանտացւոց դեռ բան մը չեր կը նար ընել, վասն զի անծանօթ ժողովուրդ մ'էին, և իրենց յատուկ բնագաւառ չունէին։ Թափառական կեանք կը վարէին և իրենց ճանապարհին վրայ որու կամ ինչի որ հանդիպէին կը սպաննէին, կը կողոպտէին։

Աեծն կարոլոս՝ երբ զիւր որդին կայսրութեան մասնակից ըրաւ, իր վիճակին ամեն դըժուարութիւնները յայտնեց անոր՝ որպէս զի արթուն կենաց : Այն լայնածաւալ կայսրութիւնը անոր սկիտի թողուր, և արդէն անորն էր : Զայն՝ բազմաթիւ պատերազմներով, անողորմ պարտութեամբք և արիւնահեղ յաղթութեամբք ստացեր էր, նախագուշակեց թէ օր մը այն կայսերութիւնը մաս առ մաս սկիտի պատառուէր, յորում բոլոր իրեն հալատակ եղող ժողովրդները բռնի սկիտի բաժնուէին, և այս նախագգայութեամբ արդէն ծանրաբեռն երեցող լուծը թօժափելով թունաւորեց իւր ծերութիւնը : Իրեն կը թուէր թէ՝ իւր թագաժառանդ որդւոյն տուած խրատները բաւական չէին, ուստի մտածեց որ անհրաժեշտ կարեոր էր այնպիսի ընկերութիւն մը հաստատել, որ գաղտնապէս նպաստէ երիտասարդ կայսեր իշխանութեանը, և ամեն պահուն՝ ասբատամբութիւնները կանխելով, յանցաւորները պատուհասելով՝ սարսափով զսպէզանոնք, որ պարտեալ ժողովրդոց յիշեն նոցակորուսած ազատութիւնը : Այն ազատութիւնը ժամանակին ոգւոյն հակառակ էր . Քայց այն պատճառի համար մանաւանդ՝ ծերունի կայսեր երկնած ընկերութիւնը՝ նորա տիրած նպատակին հասնելու յոյս կուտար :

Ստոյգ ասլացոյց մի չունենալով՝ Անկախ
Դատաւորաց ընկերութեան՝ Մեծին Կարուսի
ժամանակ հաստատուած ըլլալը չեմք կրնար
պնդել. բայց հաւանական է որ սցնալիս եղած
ըլլայ : Անտարակոյս ընկերութիւնը նախ այն
վիճակին մէջ չէր՝ յորում պիտի տեսնենք զայն
յետոյ : Կերալով մը ժրաշան և արթուն ու-
ստիկանութիւն մ'էր, որոյ աչքերը անդադար
բաց ըլլալով և անդուլ հսկելով՝ կը սլահպա-
նէր Փրանկ կայսերաց տռանձնաշնորհութիւն-
ները : Հստանական է դարձեալ որ « Ֆիսի »
և « Տօմինիղի » ըստածներն ալ տուածին դաղո-
նի ատեաններուն մէջ մտած ըլլան : Ի սկզ-
բան անդ, սցդ. մարդիկն ուրիշ պաշտօն չու-
նէին, բայց միայն ուղղներու արդարութիւն
մտառացանել, և կայսեր իմացնել մայրաքա-
ղաքին հեռու գտնուող դաւառաց մէջ ամէն
տեղի ունեցած եղելութիւնները : Այդ սլատ-
կամաւորներուն պաշտօնը վտիտնակ մեծա-
շուք ատեանին՝ յորում սովոր էին մինչև այն
ատեն կոչել զյանցաւորս, ուլ այնուհետեւ
դաղոնի ատեան մ'ունեցան, ուր դաղոնա-
սիս արդարութիւն կը մտառացանէին : Այն
ժամանակին սկսեալ, նոքա՝ Աւագ-Դատաւոր
կոչուեցան : Բազմաթիւ ստորին պաշտօնեա-
ներ ունէին : Այն պաշտօնեանները, յորս ըն-
կերութեան ամեն կարդի մարդիկ կային, առ-

մենուրեք կը դանուէին : Ամէն բան դիտէին ,
ամէն դաւադրութիւնները չը յայտնուած կը
դանէին և անողորմարար իրենց մեծաւորաց
վրէժխնդրութեան կը մատնէին զարսաւաճս :
Յանցաւոր մ'այսալէս դաղանի ատեանէն իւ-
մացուելուն ալէս , Աւագ-Գառաւորները կը
դումարուէին , դատապարաւութիւնը կը կար-
դային , և իրենց սպաշտոնէից դանուկին կը
մատնէին զնա : — Վճիռէն անմիջապէս վերջը
պատուհասը կը հասնէր : — Յանցաւորը ուր
որ աւ ըլլար , որչափ որ ջանար խոյս տալու ,
որչափ որ հզօր ըլլար , ատեանին դաղանի
դործակատարը կը դանէր զայն անվրէն , և
յարմար առթիւ մահացու հարուածը դլխուն
կ'իջեցնէր :

Առաջին սպանումները տեսնելով , ժողո-
վուրդք յոյժ սարսափեցան : Անկատկած՝ յան-
ցաւորը մատնըչաց քովն ըլլալը չ'եր գիտէր .
և սակայն նոքա այս խօսքերը լսած և շար-
ժումները աչքէ չ'ին փախուցած . ամբոխը՝
կ'անդիտանար այդ դաղանի զօրութեան գո-
յութիւնը , որոյ խաւարացին լոտեսները ան-
ծանօթ հնարներով տմեն տեղ կը մտնէին կել-
նէին : Ամէն ոք ահաբեկեալ կասկածուա տչերով
շուրջը կը նկատէր , և ժողովուրդն՝ այն սար-
սափելի սպանութեանց մէջ՝ կախարդութեան
ձեռնը կը նշմարէր « Սպանութիւնները յաճա-

խելով՝ երևակայութիւններն ալ ևս առաւել
բորբոքեցան և սարսափն առաւել ևս տարած-
ուեցաւ ամենուրեք : Այդպիսի ահարկու վը-
ճիւներ տուող ատեանին ուր ըլլալը ոչ ոք
գիտէր . Ատեանը որոշ տեղ մը չէր . ամեն
տեղ էր :

Տեսակ տեսակ զրոյցներ կը շրջէին ամենուն
բերանը . ժողովուրդը՝ ամենէն ծաղրելի սը-
տութեանց դիւրաւ կը հաւատայ . ուստի կը-
սէին թէ գերմարդկացին արարածներ՝ մարդու
ազօտ կերպարան և ձեւ առնելով՝ Վեսթվա-
լիացի անբեր դաշտաց մէջ ամեն երեկոյ կը
թափառին եղեր :

Ոմանք ալ տեսեր են եղեր հեռուն՝ լուսնի
ազօտափայլ լուսով՝ նոցա երկարատուոն սևա-
թոյր սրատմուճաններուն երկայն ծալքերը .
այլք ևս , Պոհէմիացի ընդարձակ և ամայի ա-
ռանձնութեանց մէջ մալորելով , նշմարած են
եղեր նոցա խորհրդական կերպով խաւարին
մէջն սպրուելով անցնիլը և յանկարծ վաղեմի
անտառի մը խորերուն մէջ աներեւութանալը:
Ոմանք կ'ըսէին թէ նոքա երկար սուրեր կը
կրեն , որք կը պնդէին թէ այն սպուերները
փոքրիկ և թեթև դաշունէ մը զատ ուրիշ զէնք
չեն կրեր վրանին : Այս զրոյցները բերնէ բե-
րան արագ ութեամբ անցնելով քիչ ժամանակի
մէջ սարսափը փոխադրական հիւանդութեան


դարձուցին , և , թէ սամիկը , թէ ազնուականք և թէ զօրականք այնուհետեւ մահերնին դիմացնին կը տեսնէին :

Դժուարին բան մ'է այդ պրոցցներուն մէջն ճշմարտութիւնը քաղելը : Այն ատեններու վաւերական ձեռագիր մը բնաւ չդանուելուն պատճառաւ՝ պատմագիրը տագնապէ աղստ շրմար :

Անոր համոր դաղանի ատենին դատաւորաց սովորական դնացքը ժամանակ մ'անձանօժ մնացեր է :

Ծ Ըստ կամու դաղանի ատենին պատմագիր շիար . աեղի ունեցած մի քանի դէպքերէն մի այն կըցէր եւը նոցա ատենին սովորութեանց մի քանին ճշէլ : Այս միայն ստուգութեամբ կընամք հաստատել՝ որ ընկերութիւնս կայսերաց ձեռքն ըլլալով՝ անոնց անձնուէր կը ծառացէր , և նոցա անմիջական ազդեցութեամբ կը գործէր : Խրենց կողմէն բան մ'ընկէլ՝ խըստի արգիլուած էր : Խխատ կանոնագրութիւնն մ'ընկերութեան անգամներն իրենց պարտուց սահմանին մէջ կը բռնէր : Հանդիսաւոր երդմամբ իրարու կը կապտէին , և երդմնազանցը անմիջական մահուամբ կը պատժուէր :

Գաղտնի ատեանին կարողութեան չափը՝ նորա զարհուրելի արդեանց ձեռքով իմացուելուն պէս շատերն անգամ դրուիլ իմդրեցին . վա-



սըն զի ընկերութեան վրէժխնդրութենէն խոյս
տալու միմիայն միջոցը՝ նորա անդամ ըլլալն
էր : Եատ աղնուականներ այն ընկերութեան
մշջ մտնելով՝ հաստատութիւնն յոյժ զօրացաւ :

Դիտողութեան արժանի կէտը , և որով կ'իւ-
մացուի թէ Անկախ-Դատաւորաց ընկերակցու-
թիւնը կայսերաց կամ նոցա յաջորդող կառա-
վարութեանց ձեռքովք հնարուեր է , սա է որ,
նոցա պաշտօնեայնները ուամկին կուրծքը ընտա-
շխոցեցին , այլ միշտ վրէժ լուծեցին 'ի կալուա-
ծառեարց՝ որք իրենց վիճակին , աւագ ութեան ,
և ունեցած աղդեցութեան պատճառաւ վեհա-
պետոց աւելի կասկածաւոր կը թուվին : —

Բայց Անկախ-Դատաւորը՝ կայսերական իշ-
խանութեան պաշտօնեացներ ըլլալէ ընդ հուպ-
դաղբեցան :

ԺԲ . ԺԳ . և ԺԴ . դարուց մշջ Գերմա-
նիան աւերով մարտից ժամանակ՝ Կուերիք և
Ավգուստինք գաղանի ատեանին ահեղ զօրութիւ-
նը փոփոխակի 'ի կիր արկին , իրենց տնձնա-
կունք վրէժխնդրութեանց ծառայեցնելու համար :

Այն ատեն ընկերութիւնը կուսակցութեանց
արիւնանների գործի մեղաւ : Ամէն ոք կը յի-
շէ Կուերիններու և Կիոլլիններու երկապատակու-
թիւնքը , որոց պատճառը մինչեւ հիմաց բա-
րուականի հասկցուցած չեն : Եւ որովհետեւ
այդ երկու հոչակաւոր ընտաննեաց սրտամու-

թիւնը մեր ներկայ պատմութեանս հետ բը-
նականարար յարաբերութիւն պիտի ունենայ ,
օդասկար է ուրեմն սրահ մը այդ երկպառա-
կութեանց աղբիւրն ելնել , և յայտնել թէ որ
պիտի եղելութեամբք ծագ եցան այն արիւնա-
հեղ պատերազմները՝ որոց վրայ ապա պիտի
խօսինք :

Կուէլիիներու ընտանիքն ազգականներով
հանդերձ՝ Պաւիերայի և Սլմանիայի մէջ մինչեւ
Լոմպարտացւոց (1) սահմանադլուխը ճոխ և

(1) Լոմպարտացիք կոմ Լոնկոպարտք . —
Դերմանական կամ Սկանտինաւեան ցեղէն իւ-
ջած ժողովուրդ մը , որ 'ի նախնումն Գերմա-
նիոց Հիւսիսակողմը կը բնակէին : 515 ին Ռու-
սիոց տիրեցին , 548 ին ալ Դանուք գետին
Հարաւակողմը բնակեցան : 568 ին իրենց Ալ-
պօխս Արքային առաջնորդութեամբը Խոալիա
ունցան , և այն երկրին մեծ մասին տիրեցին:
Բայց իրենց Ասթօլիք թագաւորը գաւառ մ'ալ
տոնելով՝ բոլոր Խոալիոց տիրել ովելուն հա-
մար , Պապին ազաշանօքը , Գաղղիոց Պեպինոս
թագաւորը վրայ հասաւ , և այն գտաւոր նո-
րա ձեռքէն առնելով Պապին շնորհեց (734) .
Հուսկ ուրեմն 774 ին Մեծն Կարոլս վերուց
կեղրոնական Լոմպարտիոց թագաւորութիւնը ,
Նօրմանտացիք ալ 1077 ին Լոմպարտացւոց
ձեռքը մնացած Պէնէլիքնմիի և Սալէրնայի դքք-
սութիւններն առնելով՝ նոցա միապէտութեան
վերջ տուին :

բարերեր կալուածներու տէր էին : Այդ ընտանեաց զիսաւոր ճիւղը հուսկ ուրեմն « ժառանգութեամբ ստացեր էր » Պաւերայի դըքսութիւնը , որոյ վրայ Հէնրիկոս Գոռոզ՝ Սաքսոնից դքսութիւնն ալ աւելցուցեր էր :

Իւր հօրմէն մնացած ժառանգութիւններէն ի զատ , իւր Վիւլֆիկոտ մօրմէն ժառանգած էր նաև Սաքսոնիոյ մէջ եղող Պիւլիւնկ անուն ընդարձակ կալուածները . իւր Թէրթրիւտ կինն ալ բոլոր հայրենական ժառանգութիւնները օծիտ բերեր էր , այսինքն զՍիւրլէնպուրկ , (1) զՆորտկայմ , (2) և զնախնին Պրիւնը -

(1) Սիւրլինպուրկ . — Վաղեմի դղեակ , ուր բնակէին ինախնումն Սիւրլինպուրկի կոմսերը Սիւրլինպուրկի կոմսութեանց Պրիւնսվիդի և Սօմմէրսինպուրկի կոմսութեանց մէջ տեղն էր : Սիւրլինպուրկի կոմսերուն ամենէն հռչակաւորըն եղած է Լօթէր , որ Գերմանիոյ վրայ թագաւորեց 1135-1137 : Սիւրլինպուրկի դղեակը և համանուն կոմսութեան միքանի զիւղեր միացն Տաճարսկաններուն շնորհեց 1150 ին : Սուցա միաբանութեան ցրուելէն յետոյ , Երուսաղիմայ Սրբոյն-Յովհաննու Ասալնջականաց ձեռքըն անցաւ : —

(2) Նորտկայմ . — Մին 'ի քաղաքաց Հանովրի , և երբեմն մայրաքաղաք Նորտկայմի ձոխ կոմսութեան : ՈՒիգէնցա տիկինը , որոյ կ'յնար Նորտկայմի կոմսերուն ժառանգութիւնը , ամուսնացաւ Սիւրլինպուրկի կոմսին՝ Լօթէրի

Վիք (1) ու Լօթէր (2) կայսեր մեռնելէն յետոյ

հետ , որ Սաքսոնիոց դուքս (1106) և Գերմանիոց կայսր ընտրուեցաւ : Իսկ իրենց դատեր 1128 ին Հէնրիկոս-Գոռոզին հետ ամուսնանալովը , Հէնրիկոս Նօրտկայմի , Պրիւնսվիդի և Սիւրլինալուրկի կամութեանց դոյքը , իւր Պիլլունկի ժառանգութեան մասին և Սաքսոնիոց ու Պաւերայի դքսութեանց հետ միացուց : —

(1) Պրիւնսվիդ . — Բրուսիոյ , Հանօվրի , Անկալթի և Հէսի մէջ տեղ դքսութիւն մ'է . մայրաքաղաքն է Պրիւնսվիդ : Օթօն կայսեր ժառանակ , Պրիւնօ՝ առաջին տէր եղաւ Պրիւնսվիդի . բայց 1090 ին նորա ընտանեաց յաջորդութիւնը վերջանալով , Կուէլֆիներու դլսաւորին՝ Հէնրիկոս-Գոռոզի անցաւ : Երբ բոլորովին Կուէլֆիները յաղթուեցան , Օթօն (մանուկն) նոցա յաջորդը , ամեն ունեցածը Փրետերիկոս Բ . կայսեր ընծայեց , ոցն ալ դարձեալ նմանորհեց՝ դքսութեան տիտղոսով (1235)-1252 ին սկսեալ Պրիւնսվիդի ցեղը յերկուս բաժանի , որք դարերով բազմաթիւ ճիւղերու բաժնուելն յետոյ՝ Ախնապուրկ ճիւղէն Էրնէսթ-Օլիւսվդուքսը 1692 ին ընտրական տիտղոսն ու տւագութիւնը կ'առնու : Եւ այսպէս երկու ճիւղի բաժնուելն յետոյ , այսօր մէկ ճիւղ միայն կայ յորմէ է Գէորգ Ա . որ Անգղիոյ դահը ելաւ : — Մէծն Նորօլէոն՝ Պրիւնսվիդի դքսութիւնը Վէսթմալիոյ թագաւորութեան հետ միացուց 1808 ին , բայց 1814 ին առջի ազատութիւնը դարձեալ դտաւ :

(2) Լօթէր Բ . — (Ալերլինապուրկի կայսր

Մաթիլդի (1) ժառանգութիւնը ըստ օրինաց
ստացերէր, այնպէս որ նոր կայսեր ընտրու-
թեան առեն կայսրութեան ամենէն մեծա-
բարթամ իշխանն էր : Հէնրիկոս իւր զօրու-
թեան սնապարծութիւնն ունէր :

Գօնրատ առ Հօհէնսթառֆէն, (2) որ միայն
ոսխու կրնար համարուիլ Հէնրիկոսի, յաջոլեր
էր ընդ հակառակն՝ ամենուն վրայ մեծա-
բանք և վտահութիւն աղդել իւր քաղցրաբա-
րոյ բնաւորութեամբն ու արիասրութեամբը :
Ասկէ զատ, Գօնրատ Ս. Աթուոյն պահանջած
հնաղանդութեան իլը հարատակէր, մինչ Հէնր
իկոս աղէկ բանի մը ակնկալութիւն չէր տար:
Արդ՝ Պապը մեծ աղդեցութիւն ունէր կայսեր
ընտրութեան մէջ մասն ունեցող այլ և այլ կալ-
ուածառեաբց վրայ :

Սակայն մինչև այն առեն տակաւին կրնար

Գերմանիոյ (1125-1157) Սաքսոնիոյ դուքս էր:
Երկար առեն իւր ոսխներուն հետ պատե-
րազմեցաւ, և հուսկ ուրեմն Պապին և Հէնրի-
կոս-Գոռոողին օդնութեամբը յաղթեց: Սիկիլիոյ
թագաւորին, Ռօժէրի դէմ ՚ի ընորհս Իննով-
կենտիոսի Բ. պապին՝ ըրած արշաւանքէն դառ-
նալով մեռաւ:

(1) Մաթիլդ. — Լօթէր Բ. կայսեր դուստրը,
և Հէնրիկոս-Գոռոողի կինը :

(2) Գօնրատ Գ. — Կայսր Գերմանիոյ, Սու-
ապէս դքսին Փրետերիկոսի և Հէնրիկոսի է.

յուստցուիլ : Եշխանները Մայէնցա (1) քաղաքը պիտի գումարուէին , և Հոդեգալստեան օրը ընտրութեան պիտի սկսուէր : Ա. Աթոռոյն քաղաքականութիւնն սովորական էր , ակարագոյն մասին միշտ նարաստել , հակառակ կողման զօրանալուն արգելք ըլլալու համար : Որբեւարի կայորուէին զայս քաջ գիտնալով՝ Տեսունը դաւադի օրը՝ ժողով մը գումարեց ՚ :

Կայսեր քրոջը Աղնէսի որդի : Լոթէր Բ. ի մահուընէն յետոյ կայսր ընտրուելով Հէնրիկոս Գոռողին հետ երկար ատեն պատերազմեցաւ : Աստ ՚ի Պաղեստին գնաց Լուդովիկոս էի հետ (1147) և Գամասակոս քաղաքը պաշարեց , բայց շիրցաւ առնուլ : Ի դարձին Պամպէրիկ մէջ մէսուռ 1152 ին :

(1) Մայէնցա . — Հուենական Հէսի քաղաքներէն մին , և մի յամուր քաղաքաց Գերմանիայ : Քրիստոնէ 10 տարի առաջ Հռովմայեցի Տրուսի ձեռքով հասաստուեցաւ : Բարբարոսներու արշաւանց ատեն կործանուեցաւ , բայց Պաղյիոյ Փրանգ թագաւորները վերստին կառուցին , և Մեծն Կարոլոս զարդարեց զայն : Երկար ատեն Եպիսկոպոսները , Աւստրիացիք և Ֆրանսացիք իրավու ձեռքէն հետպհեաէ յափշտակելնէն յետոյ , հռուկ ուրեմն Ֆրանսացի զէմ եղող դաշնակից բանակները 1814 ին հոն մտան , ու Վիէննացի մէջ գումարուող դեսպանաժողովը զայն Հէսի տուաւ : Հոս ծնաւ մարդկութեան ջահը , Կութթէմպէրկ : —

Գէտլինալուրկ(1), իւր գեւսան Հէնրիկոսը կայոր
անուանել տալու նպատակաւ : Գօնքատի կու-
սակիցներն ալ, միւս կողմէն, ի Գօվլէնց (2)
դումարուեցան գեւտրվարի 22 դ. օրը, և վախ-
նալով որ չըլլայ թէ ընդհանուր ընտրութեան
առեն Հէնրիկոս յաղթահարէ, յուռաջոց ընտ-
րեր էին իրենց վեհապետը՝ զոր Պապին նուի-
րակը Աղոնիս-Կրանս (3) քաղաքին մէջ ան-
միջապէս օծեց :

(1) Գէտլինալուրկ . — Պարապապատ քաղաք
Բրուսիոյ : Գէտլինալուրկի կը տիրէր՝ 932-937 ին
հռն հաստատեալ կանանց արքայութիւնը . զոր
1801 ին վերուցին :

(2) Գօվլէնց . — Բրուսիոյ քաղաք : Հոս ծնաւ
հոչակաւորն Մէթէլինիք : Գօվլէնց՝ Պաղպիոյ
կարլօվինկեան թագաւորաց մայրաքաղաքն ե-
ղած է : Ֆրանսացի Մէծին Յեղափոխութեան
առեն աղնուականներէն շատերը հոս տալու-
տաներ են : Ֆրանսացի հանրապետական բա-
նակը 1794 ին յարձակմամբ առաւ զայս քա-
ղաքը :

(3) Աղոնիս-Կրանս . — Ֆրանսերէն՝ « Եքո-
լս-Շաբէլ Գերմաներէն-Աալսըն- Լատիներէն
« Աղոնիս-Կրանում» կամ Աղոնէ-Կրանի : — Բը-
րուսիոյ քաղաք : Մայր եկեղեցին շինել տուաւ
Մէծն կարողոս , որոյ շիրկմը յիշեալ քաղաքին
մէջն է : Հոս կը պահուին մեծանուն կայսեր
մասունքը , անուանեալ « Աւադ-Մատոնք , զոր
եօթը տարին մէկ մը միացն , տեսնելու համար,
անհամար ուխտաւորք ամէն կողմէն կընթանան :

Հօհէնսթառւֆին ընտանեաց սկիզբը շատ հին
չէր : Հէնրիկոս Դ. (1) թագաւորին փեսան՝
Փրետերիկոս ընտանեաց հիմնադիրը , թագաւ-
որութիւնը պաշտպանելով հոչակաւոր եղեր
էր . իւր երկու որդիքը , որք՝ իրենց Ագնէս
մօրը կողմէն՝ փրանկ ընտանեաց ժառանգորդ-
կը համարուէին , հետզհետէ հետամուտ եղեն
արքայական թագին , որ հուսկ ուրեմն երի-
ցագունին վիճակեցաւ : Այդ տունը հաղիւ հաղ
վաթսուն տարիէ ՚ի վեր ծանուցեալ էր : Հէն-

Հաւանականաբար Մեծն կարոլոս հաստատեց
զայս քաղաք որսի ելած տտեն ըստ պատահման
նորա աեղը հանքային ջուր գտնելուն համար,
ուր և մատուռ մի շինել տուած էր . զայս՝
անունն իսկ կը յայտնէ , «Էքս» , որ ըսել է
ջուր (Աքուէ , Լտ.) և «Շարէլ» (մատուռ) :
Մեծին կարոլոսի ատեն թագաւորանիստ քա-
ղաք էր : 1792 ին Ֆրանսացիք առին , բայց
1814 ին դաշնակիցք՝ Բրուսիացւոց դարձուցին :
Երեսունէն աւելի կայսերք հոս օծուեր են .
բազմաթիւ դաշնագրութիւններ կատարուեր
են պարսպացը մէջ : Սրբոյն դաշնակիցութեան
դեսպանաժողովը հոս գումարուեցաւ 1818 ին :
Շատ մը տիեզերական ժողովներ հոս տեղի
ունեցեր են :

(1) Հէնրիկոս Դ. (Մեծն անուանեալ) :
Ֆրանսայի թագաւորն՝ Արրոյն Լուդովիկոսի
6 դ որդւոյն ցեղէն կ'իջնէր : Կարլինական էր :
1572 էն յետոյ ՚ի Բարիկ գնաց և թագաւորին
քրոջը Մարդարիտա տը Վալովի հետ ամուս-

րիկոս-Գոռոպղը՝ Գօնքատի ընտրուիլը ըելուն
սկէս ուզեց ընդդիմանալ, բայց իւր կուսա-
կիցները 'ի Միննիպէրկ յաղթուած ըլլալնուն,
և 'ի Պամպէրկ (1) գումարուած աղդախումը
ժողովին մէջ՝ Գերմանիոյ ամեն մեծամեծները
հանդիսաւոր կերպով զԳօնքատ կայոր ճան-
չելնուն պատճառաւ, իրեն արուած օրինա-
կին հետեւելին զատ ուրիշ բան չկարենալով ը-
նել, բազմաթիւ խոսամունքներ առնելին յե-
տոյ՝ նորընտիր կայսեր հպատակեցաւ :

Գերմանիան՝ երկարատեւ և արիւնահեղ սրա-
տերազմէ մը տակաւին նոր ելեր էր. մեծ ու
փոքր մարտեր, սրաշարումներ, աւարտու-
թիւններ, հրկիզութիւններ, ամէնն ալ տե-
սեր էր. և յիտուն տարուան չափ սցդ զզուե-

նացաւ : Սուրբ-Քարթողիմէտի ջարդէն կա-
թօլիկ ըլլալով աղատեցաւ : 1576 ին իւր սրա-
հապանաց ձեռքէն աղատելով, դարձեալ Կոլ-
ֆինակութիւնն ընդունեց : Իւր քաջութեամբը
յաղթութեամբը և բարեսրտութեամբը քիչ
ատենի մէջ մեծ անուն հանեց : Հէնրիկոս Գի
հետ հաշոռուելին յետոյ, Բարիզը սրաշարեց, որ
այն ատեն կուսակցութեան մը ձեռքն էր : Մի
քանի անդամ սրաշարումը վերցնելին յետոյ,
հուսկ ուրեմն Կաթօլիկութիւնն ընդունելով

(1) Պամպէրկ . — Քաղաք 'ի Պաւերա : 'ի-
նախնումն վեհապետ եպիսկոպոսներու իշխա-
նութեան ներքեւ եղող գաւառի մը մայրաքա-
ղաքն էր :

ի հարուածներուն մատնուեր էր . ասկէ զատ,
խորարմատ ապականութիւն մը չարաչար կը
մաշէր զնտ : Բաղմակնութիւնը և բարուց ա-
նառակութիւնը ամենուրեք այնքան տարած-
ուեր էին , մինչ դի Հէնրիկոս Գի (1) երկրորդ
կինը , Բրազուտէս իշխեր էր զանգատել թէ
իւր այրը անկար է . . . : Այն կինը՝որ ամենէն
ամօթալի լկտութեան օրինակը անձամբ կու-

(1595) քաղաքը մտաւ . ու թագաւորին մեռ-
նելին յետոյ՝ յաջորդեց նմա : Կալվինականներ-
ուն մեծ տղատութիւններ շնորհեց . իւր Սիւլ-
լի անուն մեծահամբաւ պաշտօնէին հետ Ֆր-
րանսան հարստացնելու աշխատեցաւ . վաճա-
ռականութիւնը , մշակութիւնն ու արուեստք
ծաղկեցան իրեն ժամանակ . Ֆրանսան երջա-
նիկ էր . բայց կրօնամոլ ճիւաղի մը , Ռավու-
յաղի դանակին զոհ եղաւ . հինգ անգամ կա-
թօլիկներն արդէն փորձեր էին զնտ սպան-
նել . . . :

(1) Հէնրիկոս Գի . — Հէնրիկոս Գի որդին .
1057 ին հօրը յաջորդեց Յ տարեկան հասակին
մէջ : 1061 ին իւր խնամակալներուն իշխանու-
թենէն ելաւ՝ նոցա յաղթելին յետոյ : Եկեղե-
ցական տւագութիւնները վաճառելուն համար
Հռովմաց եկեղեցին և առաջին կարդի կալուա-
ծատեարք թշնամացան իրեն հետ : Երբոր Գր-
իգոր է . Պապը դատաստանի կոչեց զնա :
կայսրն ալ Վօրումսի ժողովին ձեռքսվ զնա պա-
պութենէ ձգել տուաւ (1076) : Այն ատեն
կայսերութեան և պապութեան մէջ մեծ կոիւ-

տար . Երկու անդամ Գօնսթանցա (1) և Բը-
լազէնցա (2) քաղաքները գումարուած եր-
կու ժողովներուն մէջ առանց ամաչելու յայտ-
նեց , բազմաթիւ ժողովականաց առջև , ամուս-
նութեան ամենէն նուիրական դադանիքը . . .
Այն ժամանակ ամենէն նուիրական բաները
ծաղրի նվաճ եղեր էին : Ամուսնական հաւա-
տարմութեան և երդմանց դէմ դործել կը յան-
մը ծագեցաւ : 1077 ին Հէնրիկոս անձամբ պա-
պէն ներումն խնդրեց : Բայց յետոյ Պապին և
իրմէ ապստամբող իշխանաց դէմ պատերազ-
մեցաւ : 1080 ին հակա-պապ մը դրաւ : Իտա-
լիա տնցաւ , Հռովմն առաւ , Նօրմանացւոց-
մէ վախնալով քաշուեցաւ : Երկրորդ անդամ
նաւաճեց դիտավիան (1091) : Իւր երկու որդիքը
Գօնսրատ և Հէնրիկոս թշնամեաց կողմը անցան :
Հէնրիկոս՝ Մայէնցայի ժողովին ձեռքով հայրը
կայսերութենէ ձգել տուաւ (1106) : Թագա-
կորոյս կայսրը որդւոյն ձեռքէն փախտ ՚ի Լի-
էժ , ուր չքաւորութեան մէջ մեռաւ (1106) :

(1) Գօնսթանցա . — Պատի մեծ-դքսու-
թեան քաղաք , համանուն լին վրայ : Ասի՝
միջին դարու ատեն աւելի մեծ ու վառաւոր
ու կայսերական քաղաք էր : Իւր վրայ տիրող
վեհապետ եսկակոպոններու ձեռքէն 1802 ին
պով մը գումարելով՝ Արևմտից մեծ հերձուա-
ծին վերջ տուաւ :

(2) Բլազէնցա . — Նախնի բարմայի դըք-
սութեան քաղաք : Սորա քով կազքեդոնաց և

դգնէին : Ընկերական խառնակութիւնը ամենուրեք կը տիրէր :

Երկու հզօրագոյն ընտանեաց մէջ պատրաստուող կոիւը , այդ հէք երկրին աւելի խաղաղ ապագայ մը չէր խոստանար : Աւարառուաց և սպանազաց խումբեր , որք պատերազմի ժամանակ երկիրը իրենց մէջ բաժնող բանակաց մնացորդներն էին : Ասպատակութեամբ ապրելով , անդադար կը նորոգէին այն սոսկալի տեսաբանները , որոնցմէ ժողովուրդը ինքզինք ազատած կը համարէր : Կուէլփիներու

Հռովմացեցւոց ճակատամարտ մը տեղի ունեցաւ 217 ին Գրիմատուշ առաջ : Պուրկօնէի թագաւորը այս քաղաքիս քով յաղթութիւն մ'ընելով՝ իտալիոյ թագաւոր անուանեցաւ : Երկու անդամ՝ տիեզերական ժողովներ գումարուեր են հոն : Ուրբանոս Բ . Պապը այդ քաղաքին մէջ նախ՝ առաջին խաչակրութիւնը քարոզեց : Կուէլփիներու և կիալբիններու պատերազմներուն ժամանակ Բլագէնցան հասարակապետութիւն մ'եղաւ : 1254 ին Սդօթթիներուն անցաւ . 1332 ին ալ Վիագօնթիները տիրեցին : 1447 ին Միլանի դուքսը Սֆորցան , պաշարեց , առաւ քաղաքը , ու բնակչաց հետ յետին անդթութեամբ վարուեցաւ : 1511 էն վերջը պապերուն անցաւ , յետոյ Ֆարնէզ ցեղին : Ֆրանաացւոց զօրքը 1799-1800 հոն նըստան և Մեծին Նաբօլիոնի ժամանակ գաւառի մը գլխաւոր քաղաքներէն մին էր :

և Ավալը իններու Երկարառակութիւնները սաստականալով՝ քաղաքական պատերազմը աւելի կատաղութեամբ վերստին սկսաւ : Իսկ Պապերը իրենց սովորական քաղաքականութիւնը ձեռքէ չձգեցին : Երբ տեսնէին թէ Կուէլֆներու ընտանիքը յոյժ կը զօրանայ , իրենց բոլոր ազդեցութիւնը կը գործածէին Ավալը իններու ցեղն մէ կը կացար ընտրել տալու համար . և Երբ սոքա զօրանային , առաջինները լքանելով , Կուէլիններէն մէ կուն ընտրութեան նպատակն էր կը փութային : Ուստի կայսրութիւնը փոփոխակի երբեմն Կուէլիններու և Երբեմն աշկալալիններու ձեռքը կ'անցնէր . նորընտիր կայսրը՝ իւր ընտրութենէն օդուտ քաղելով՝ արիւնահեղութեամբ վրէժ կը լուծէր : Սակայն Պապերը կրնային այն քստմնելի եղելութեանց դիւրութեամբ վերջ տալ , բայց իրենց օդտին համար գործելով՝ չէին կրնար հետևարար իրենց բունած ճամրէն շեղիլ : Կուէլինները և Ավալը ինները իրենց Վեհապետ-Քահանայաւալետէն փոփոխակի ընդունած սիրոյ ցոյցերէն ընաւ չէին խաբուէր . նստմանաւանդ՝ յաճախ իրենք խափեցին զանոնք , և 'ի Հռոմ իրենց դէմ և կամ 'ի շնորհս իրենց նիւթեալ դաւադրութեանց աւելի տպահով կերպով տեղեակ ըլլալու համար՝ իրենց կուստիկից կարդ ինալներ մուծին ժողովին մէջ : Ուստի այդ Երկու ըն-

տանեաց հերձուածները միանդ ամայն երկու
սոսպարիզի մէջ դործելով՝ կատարեցին իրենց
արխւնահեղ և քաղաքական երկարութիւն-
ները : Ի Հռովմ կը սպառըաստուէր ընտրու-
թիւնը , խկ ՚ի Գերմանիա , զէն ՚ի ձեռին կը
վաւերացուէր :

Յնտեանարար , այդ անողորմ կոիւներուն
միջոց , երկու ընտանիքները եռանդեամբ խնդ-
րեցին ՚ի նալաստ իրենց կողման ծառացեցնել
Անկախ-Դատաւորաց վացելոն խորհրդաւոր և
սարսափելի տղղեցութիւնը : Յնկերութիւնը
ամենուրեք քաղմաթիւ ճիւղեր ունենալուն
նրատճառաւ , ամենուն վրայ անխտրաբար օդ-
տակար սարսափ կ'ազդէր : Ուստի կուէրինե-
րու և Ախլըլիններու համար շահաւէտ բան մ'
էր իրենց ձեռքն ունենալ այն թեզանին թէ-
լերը , որ ամեն տեղ տարածուելով Գերմա-
նիան՝ լայնածաւալ ցանցի մէջ ամփոփեր էր :

Գաղտնի Ատեանին պատմութիւնը այն ժա-
մանակէն սկսեալ պիտի պատմենը :

Բ.

Անկախ-Դատաւորաց ընկերութեան կազմա-
կերպութիւնը : — Ընդ ունելութիւն անդամոց :
— Նոցա կրած փորձերը : — Ֆրոհնովոթք : — Նո-
ցա պաշտօնը : — Նոցա զգեստները : — Այեան
մատեանը : — Կուէրիք և Կիալբէնք : — Արկիա-
մօնտ կայսեր Անկախ-Դատաւորաց դէմ բըռ-
նած ճամբան : — Անկախ-Դատաւորաց յաջորդ-
համարուող լուսաւորեալք : —

Որ աստիճանի ալ ըլլայ դաղտնի ընկերու-
թեանց շատերուն իրարու հետ ունեցած նը-
մանութիւնը , այն ընկերութիւնները , որք
նախ իրարմէ օրինակուած կը թուին , սակայն
անզգալի բայց հիմնական տարբերութեամք
իրարմէ կը զանազանին : Այդ զանազանութիւն-
ները դարսուց ոգիէն , և թերևս կլիմայից բըռ-
նի պահանջմունքներէն կախմունք ունին : Ան-
տարակոյս բոլոր այդ ընկերութեանց մէջ ան-
ժխտելի կապ մը կայ , որ դոգցես զանոնք ի-
րարու կը միացնէ . բայց մարդկային միտքը
ուրիշ կերպով չկրնար դործել . ու յայտնի գի-
տենք 'ի բազմաց հետէ որ երկնից տակ նոր
բան մը չկայ : Հիւսիւսակողման աշխարհաց

զաղտնի ընկերութիւնները հարսւակողման երւ
 կիրներու գաղտնի ընկերութիւններէն քանի
 մը կերպարանօք միայն կը զանազանին . մի և
 նոյն նշանակը չեւ գտներ ամեն տեղ . բայց
 նշանակին խմաստը ամենուրեք նոյն է : Մէկը
 տնդամ ընդունուելէն առաջ եղած արարողու-
 թեամբ : Ընկերութիւնը կը խնդրէ՝ նորահա-
 ւատին արիութիւնն ու բարոցական կորովը
 փորձել . նալատակը ամեն տեղ միշտ նոյն է ,
 փորձելու եղանակը միայն տարբեր կրնայ ըլ-
 լալ . միթէ ուրիշ կերպով կարելի՞ է գործել :
 Միթէ մարդուս ամէն զգացմունքը մի և նոյն
 ստհմանին մէջ ամիվախուած չե՞ն . միթէ բոլոր
 իւր իղձերը մի և նոյն նալատակի չե՞ն ճգեր :
 Երբ քանի մանձինք միանալով ընկերութիւն
 մը կազմեն , միթէ իրարու մէջ կատարեալ հա-
 մապատասխանատութիւն չունենալո՞ւ են ,
 և միթէ ամէն հնարաւոր միջոցներով , ովքը
 չէ՞ որ իրենց ընկերակցաց խրաքանչիւրին հա-
 ւատարմութեան արիութեան և բարոցականին
 փրայ ասլահով ըլլան , միթէ չափազա՞նց կը հա-
 մարիք այն բազմաթիւ զգուշութիւնները , երբ
 ուզենք անծանօթի մը յայտնել այնպիսի գոր-
 ծողութիւններ , որոնցմէ զուցէ կախմունք ունի
 հաղարաւոր մարդկան զոյութիւնը : Պէտք չէ
 մատնութեան և ոչ վատութեան առիթ տալ՝
 և այնպիսի փորձեր կան , որոնց՝ վատը կամ

նենդաւորը չկրնար առանց դողալու մատչիչ :

Անկախ-Դաստեռորաց ընկերակցութեան մէջ ժանող անդամոց ընդունելութեան արարողութիւնները խիստ քիչ ծանուցեալ ըլլաղնուն համար, չենք կրնար հոս մանրտմասնաբար նըշ կարագրել զայն . այդ ընկերութեան օրինաց դիրքը Վեսթվալիայի հին դիւանին մէջ գըտնուելով՝ հրատարակուեցաւ հետևեալ վերնագրով :

Օրէնք և Սահմանադրութիւն « դադանի Սուրբ Ատեանի » Անկախ կոմսերու և Անկախ-Դաստեռորաց Վեսթվալիայի՝ զոր 772 թուականին հանդուցեալ Մեծն Կարոլոս կայսրն հաստատեց, և որոց սահմանադրութիւնքը՝ 1404 ին արքայն Ռոբերդոս վերաքննելով, շատ բաներ փոխեց և աւելցուց, « լուսաւորելոց » (1) (Վայ-

(1) Լուսաւորեալք . — Այս դապանի ընկերութիւնը հաստատեց իրաւագիտութեան դասատու Ադամ Վայսհաուբիթ : Խըեն դվառոր նպատակն էր զմարդիկ յորդորել որ իրարու օգնեն, առաքինութեան և բարսյականութեան զգացմունքը տպաւորելով նոցա սըրտին մէջ : Բայց առ յապայն այդ ընկերութիւնը իւր նպատակին չեղելով սպականեցաւ : Նորա սահմանադրութիւնը Յիսուսեանց և Անկախ-Ռմինադրաց կանոնագրութեանց կը նմանէր : Պաւերայի կառավարութիւնը քաղաքականութեան պատճառաւ կործանեց զայն 1784 ին :

ոչնա) առեաններուն արդարութեան վարչութեան պահանջմանց համեմատ, իւր սրբայական կնքովը զայն վաւերացնելէն յետոյ :

Այն մատենին առաջին թերթին վրայ՝ զայն ընթեռնլու համարձակող տնարժաններուն դէմ սպառնալիք մուղղուած էր. այսինքն անմիջապէս Անկախ-Դատաւորաց դանուկին սկիտի մոտնուէին : Անկախ-Դատաւորաց ատեանները զանազան անուամբք կը կոչուէին 'ի Գերմանիա : Երբեմն «Ատեան Վեսթֆալիոյ (1)» երբեմն «Գաղտնի Ատեան», ելյածախ «Սուրբ գաղտնի և արդար ատեան» անունները կը արտւէին . հուսկ ուրեմն, շատ մը դաւառաց մէջ «Վէհմատինկ» և կամ «Ֆրէկտինկ» անուններով ծանօթ էին :

Ընկերութեան անդամոց մէջ բազում աստիճան կար. առաջին աստիճան ունեցող անդամներն Անկախ-Դատաւորք կը կոչուէին. երկորդ աստիճան ունեցող անդամները՝ «Ճշմարիտ

(1) Վեսթֆալիա . — Ժամանակաւ՝ Հունական Դաշնակցութեան չորս թագաւորութեանց մին էր : 1807 ին Մեծն Նարօքոն զայն՝ թագաւորութիւն ձեւացնելով զիւր Հերոնիմոս եղբայրը այն երկրին վրայ թագաւոր անւանեց : Բայց 1813 ին Նէյրցիկի ճակատամարտէն վերջը Բրուսիացիք առին, և 1814 ին զայն բաժնեցին Հանովրի, Բրուսիոյ, Պրինցիպիոյի և Հէս-Գասէլի մէջ :

Անկախ-Դատաւորք . Երրորդականները, «Սուրբ Դատաւորք գաղտնի ատենին : Առաջինները կը դատէին , Երկրորդները կը գործադրէին , իսկ վերջինները, ամեն բան դիտելով , իրենց հետազօտութեանց հետևանքն ընկերութեան կիմացնէին :

Խիստ դժուար էր ընկերութեան մէջ մտնել և մանաւանդ գաղտնեաց տեղեկանալ : Ատեաններուն խաւարային գործերը անդրժեկի լըութեամբ ծածկուած էին : Անկախ-Դատաւորները , Տաճարականներուն (1) պէս , մաս-

(1) Տաճարականք . — Այս կրօնական և միանդամայն զինուորական միաբանութիւնը Գաղղիացի Խաչակիրներն հաստատեցին 1148 ին ուխտաւորաց պաշտպանութեան համար : Խնախնումն՝ Տաճարականք յԵրուսաղէմ կը բնակէին , նոյն քաղաքին եկեղեցւոյն քով , որ Սովորոնի տաճարն եղած էր , որոց համար «Տաճարականք» յորջորջեցան : Աղքատութեան , կուսութեան և հնագունդութեան ուխտ կ'ընէին : — Երուսաղէմաց Լատին թագաւորութեան 1187 ին կործանելին յետոյ , բոլոր Եւրոպիոյ մէջ տարածուելով խիստ բազմացան և հարստացան : Իրենց զօրութեամբն՝ այլոց նախանձը շարժելով , ու բարուց ապականութեամբն ոլ ամենուն անարդանաց արժանանալով՝ Ֆրանսուայի թագաւորը Փիլիպոս-դեղեցիկը մի և նոյն օրուան մէջ (13 հոկ. 1307) Ֆրանսուայի մէջ գտնուող ամեն Տաճարական-

նաւոր նշաններ կը դործածէին՝ զիրար ճանչելու համար : Այսանապէս այնպիսի բառեր բերնէ բերան կանցնէին , դոր իրենցմէ զատոչ ոք գիտէր : Գլխաւորներն այդ բառերուն հետևեալներն են եղեր . «Աթօք , Աթրիք , ըԱթայն , Կրաս , Կրայն , » այսինքն «դաւազան , չուան , քար , խոտ , արտասուք : » Ասոնցմէ զատ ուրիշ բառեր ալ կը դործածէին ընկերակցութեան անդամները և զայնս յաճախ կը վտխէին , որպէս զի եթէ գիտցոլ մըլլայ՝ չըկարենայ զայնս դործածելավ նենդութեամբ ընկերութեան մէջ մտնել , և նորա արարողութեանց ականսապես ըլլավ : Յովհաննէս Ակրիզ օլայի (1) կարծեաց համեմատ , Անկախ-Դատաւորք սեղանի վրայ՝ սովոր էին դանակին ծացրն իրենց կողմը դարձնել , և պատենից ծացրը՝ սեղանին մէջ տեղի կողմը :

Ընկերութիւնը անլուր իշխանութեան մը աէր

ները բռնել տուաւ , ու քիչ ատենէն վերջը դրեթէ առանց դատի այրել տուաւ : Ֆրանսայի Մադաւորին անձնուէր Գիշման Ե. Պասլըն ալ 1512 ին յիշեալ միաբանութիւնը վերուց : —

(1) Յովհաննէս—Ակրիզօլա . — Մանաֆէլտ գաւառին մէջ ծնաւ 1492 ին : Լուտերի աջակիցներէն մին էր : Աւետարանական օրինաց՝ հոգւոյ վրկութեան համար անօդուար ըլլավը կը քարոզէր : 1566 ին մեռաւ :

ըլլալուն համար՝ ամենուն վրայ խորին ուսրս
սափ մ'ազդեր էր : Խրենց թշնամիները որչափ
որ ալ բարձրաստիճան անձինք ըլլային , Ան-
կախ-Դատաւորներն անվրէպ կը հասնէին նո-
ցա քով՝ ու վրէժ կը լուծէին անոնցմէ : Բաղ-
մաթիւ գրութիւններ կարդալով կ'իմանանք
որ դատաւորներ , պաշտօնեայներ , իշխաններ ,
վեհապետներ խակ մեծ վասիաքով խնդրեր են
այդ ընկերութեան մէջ մտնել՝ սպահովու-
թեամբ դործ տեսնելու համար : Ընկերու-
թեան անդամ ըլլալ ուզողը , խը խնդիրը կը
գրէր ու ծառի մը վրայ կը կախէր , և երկրորդ
օրը անվրէպ նոյն տեղը կը դանէր միարտնու-
թեան գլխաւորաց հաւանութիւնը կամ մերա-
ժումը : Եթէ խնդիրը մերժուէր , լոելու էր
բոցց բաւական ժամանակ անցնելն յետոյ՝
կրնար զայն երկրորդէլ : Խակ , ընդհակառակն
եթէ ընդունուէր , պատասխանին մէջ ժամա-
դրութեան վայր մը սահմանուած կըլլար . և
հոն՝ անսպասմաս դանուելու էր :

Երբեմն ամայի դաշտ մը ժամադրութեան
տեղի կ'ընտրուէր , յաճախ ուշ Անկախ-Դատա-
ւորաց Ընդհանուր Ժողովոց դումարուած քա-
րայրին մերձակայ քաղաքին հրապարակը կ'որոշ-
ուէր : Սահմաննեալ ժամուն խնդրովն անվրէպ
դանուելու էր նշանակուած տեղը :

Մուծիչ սպաշտօնեայն հոն կ'սպասէր՝ երեսը

քիմակ մանցուցած , ու մթնագոյն երկար պատմուճան մը հագած և լայնեզր գլխարկ մը կը սքօղէր նորա աչերը՝ զոր խնդրողը չէր կացող տեսնել :

Մուծիչը կը հարցնէր թէ նորա ուղղաւած թուղթն ընդունած է . և սակաւիկ մի զնա քննելէն յետոյ՝ կը հրամացէր նմա՝ որ ետեւէն գայ : «Ատեանը ամեն տեղ էր , որոշ տեղ մը չէր» : Մուծիչը և խնդրողը երկար ատեն դաշտաց մէջ կը թափառէին , այնովիսի անձանօիժնամբաներէ քայլելով՝ որ կարծեա թէ առջի տեղւոյն կը մերձեցնէին և միանգամայն կը հեռացնէին զիրենք : Ընկերութեան սովորական ժողովարանը մերձենալուն պէս , մուծիչը նորընծային աչերը դաշկինակով մը կը կապէր և ձեռքին բռնելով՝ քարայրը կը մուծանէր զնա : Ամենմէն վաւերական գրութիւններէն կը յայտնուի որ , Անկախ-Դատաւորները սովորաբար քարայրներու մէջ կը գումարուին եղեր : Պատէնի բաղանեաց մօտ , Թատթատէն (1) մի քանի փարսախ հեռի , Մար-

(1) Թատթատ . — Պատէնի մեծ-Դքսութեան մէջ պարսպապատ քաղաք : Ֆրանսայի հոչակաւոր զօրավարը Վիլլար դուքսը՝ Եւգինէս իշխանին յաղթելէն յետոյ , այս քաղաքիս մէջ 1713-1714 բանակցութեան մտան , ու դաշնադրութիւն մըրին , որով Ալզաս դաւառը

կըրավներու (1) բարձրադիր գղեալին մը տակ ստօրերկրեաց տեղ մը կայ, որոյ համար բը նիկը կ'ըսեն թէ Գաղտնի Ատենին Գատաւորք հոն կը ժողովին եղեր : «Որ և է անծանօթ և ամսյի վայրերը, կ'ըսէ հին ժամանակադիր մը» (2) Գաղտնի Ատենին գործին կուգար» :

Քարայրն իջնելուն պէս, նորընծայն տառեանին առջեւ կը գտնուէր : Ընկերութեան նախադահը, խիստ դատաւորի մը կերպարանօք նոտած : ու քովն ալ սուր մը, դաւազան մը, և կամ ուռենոյ ճիւղ մը դրուած կ'ըլլար :

Ֆրանսայի տրուեցաւ : 1797-1799 դեսպանաժողով մի դումարուեցաւ հոս, Գերմանիոյ և Ֆրանսայի իրարու դէմ ունեցած թշնամութեանց վերջ տալու համար, բայց Աւստրիոյ կառավարութեան հրամանաւ Ֆրանսայի նուիշտակներուն քաղաքին դրան առջեւ սպաննուելուն պատճառաւ ժողովը ցրուեցաւ :

(1) Մարկար. — Գերմաներէն «մարդ» (սահմանադրուխ, և «կրաֆ» (կոմս) բառերէն ելածէ : Կայսերք ի նախնումն՝ զայս տիտղոսը կուտային սահմանադրուխները պաշտպանող իշխանաց : Այսօր իսկ այդ տիտղոսը կը կրեն ունանք ի վեհապետաց Գերմանիոյ : — «Մարդիկ» բառին ստուգաբանութիւնը նոյն է :

(2) «Յաղագս Գերմանիոյ և այլ աշխարհաց զաղոնի ընկերութեանց, տալազընալ ՚ի Բարիդ, ՚ի 1819 :

Անկերութեան նախագահները երբեմն բացու-
կայ ըլլալով՝ Անկախ-կոմսերը նոցա փոխա-
նորդութիւն կ'ընէին . սակայն սոքա նախա-
գահին հաւանութեամբը միայն լուսոյ կը վե-
րադարձնէին դյանցաւորը :

Յաճախ ժողովն սկսելին առաջ ամէն ժողո-
վականք միաբերան երգ մը կ'երգէին :

Գլխաւոր դատաւորաց մէջէն մէկը բարձրա-
ձայն կը հարցնէր ու կ'ըսէր :

«Գիշերն՝ իւր ընթացից ո՞ր աստիճանին հա-
սեր է . մահագոյժ թռչունը թէ առաւօտեան
հուն երդէ ջրոց վերայ : Լուսինը թէ արշա-
լցուը լուսաւորէ զերկին :

Եւ այլք պատասխանէին . «Խուարն և եթ-
ծածկէ զրնութիւն . լճին եղերաց վրայ հըս-
կող թռչուն չկայ . համայն տիեզերաց մէջ ձայն
մի և եթ կը լսենք , որ արդարութիւն կը խընդ-
րէ :

«Ուրեմն , թո՛ղ դատաւորը գումարուին յԱ-
րելս և յԱրևմտսու : Բարւոյ և չարի «Հոռողք»
բերէք «Դրկաչափն» և «ուղղաչափ» . կանգնե-
ցէ՛ք դամբանական սեղանը , փորեցէք փառը .
դողացի՛ր , ո՛յանցաւոր : Եղբա՛րք , պատրա՞ստէք :

«Կ'երդնումք մեր կենաց , հոգւոյն ու մեռե-
լոց սակերաց վրայ , որ մեր օրինաց հնագան-
գեցանք մինչև ցարդ , և կազմ ու պատրաստ
ենք դարձեալ կատարելու դայնո : Ե՛թէ մենք

շըլանք , ո՞վ կը հսկէ երկրիս վրայ . արեգա-
կան զաշխարհ քբանելէն յետոյ :

Երդասացութեան միջոցն՝ ընկերակցութեան
ամէն անդամները գլուխնին բաց՝ ոտքի վրայ
կը կենային : Երդոյն վերջին խազերուն արձա-
գանքները հնչական կամարներուն ներքև կո-
քուսելնուն պէս՝ լուռթեամբ տեղերնին կը
նատէին , և ժողովը կ'սկսէր : Այն ատեն զնոր-
ընծայն ժողովականաց կը ներկայացնէին , և
զատեանը կազմող դատաւորաց քով կը կեցը-
նէին : Մուծանողը , որոյ պաշտօնն էր նաև
կնքահայրութիւն ընել , սանին քովէն չէր հե-
աանար :

Հարցմանց համեմատ՝ իւր անունը , տարիւ-
քըն ու դրաղմունքն յայտնելէն յետոյ , նորըն-
ծայն՝ իրեն համար պատրաստուած փորձե-
րուն տեսակը կրնար մակաբերել : Իրեն կի-
մացնէին որ հանդիսաւոր երդմամբ ընկերու-
թեան կազուելուն պէս , որ և է զօրութիւն
կարող չէր զինքն ատենին վրէ ժխնդրութենէն
փրկել , եթէ ընկերութեան դադտնիքն ուրի-
շին յայտնելու ըլլար . արդիլուած էր նաև նաև
շիմացնել յանցաւորին՝ նորա համար որոշուած
պատուհասը . կը հրամայէին նմա՝ հայրը , մայ-
քըն , եղբայրը , քոյրը , բարեկամն ու ազգա-
կանը մատնել , եթէ ընկերակցութեան կող-
մանէ նոցա դուտապարտեալ ըլլալն իմանար :

Նենդաւորը՝ սարսափելի տանջանաց կը դատապարտուէր : Աչերը կը փակէին, ձեռքերը ետին կը կապէին, ու վիզն աղ չուան մ'անցնելէն յետոյ՝ երեսի վրայ կը պատկեցնէին, ծոս ծորակէն լեզուն կը քաշէին կը հանէին, և ուքերէն կախելով կը ձգէին մինչև որ մեռնի : Եթէ մէկը՝ ատեանին գ ասապարտած անձինքը ուզէր մատնել, ժողովականաց առջև անողորմաբար տանջուելէն յետոյ՝ աւանց դատի անմիջապէս կը խեղդուէր :

Եթէ վերոյիշեալ զեկուցումները լսելէն յետոյ՝ նորընծայն իւր փափաքին մէջ հաստատ մնար, հետևեալ կերպով երդում ընելու էր :

« Կ'երդնում յանուն Քրիստոսի, սլատւոյս և հոգւոյս վրայ, սուրբ ատենին ամեն դրած օրէ նքներն երկիւղածութեամբ և մեծարանոր չի գործ դնել . մինչև ցմահ սցդ նուիրական ընկերակցութեան անձնուիրմասիր ծառայել, նորա հրամանները կուրաբար, հաւատարմութեամբ և արիութեամբ կատարել, և նորա իշխանութենէն վեր այլ իշխանութիւն չը դաւանիլ :

« Կ'երդնում Անկախ-Դատաւորաց վարդապետութիւններն ու սահմանադրութիւնքը պաշտպանել ընդ դէմ ամենայն մարդկային իշխանութեան, ընդ դէմ օդոյ, հրոյ և ջրոյ, ընդ դէմ ամենայնի՝ զոր արեգ լուստորէ,

ընդդէմ ամենայնի՝ զոր զիշեր ծածկէ յիւր խաւար :

«Կ'երդնում սուրբ ատենին խմաց տալ՝ ինչ որ իւր օրինաց համեմատ՝ յանդիմանութեան կամ պատուհասի ենթակայ ըլլաց, դուն զործել մարդկան յանցանաց տեղեակ ըլլալու, ու զայնա ընաւ չը լուել ոչ սիրոյ, ոչ բարեկամութեան, ոչ ընտանեկան կասպակցութեան, ոչ ոսկեց, ոչ արծաթոյ և ոչ որ և է բարձի ու աւագութեանց համար :

«Կ'երդնում՝ ատենին կամացը չը վրիպիլ յանցաւոր մը փրկելու համար, ընաւ չըյայտնել՝ վրէժխնդրոյն մատնուած մարդոյն՝ մօտալուտ վանդը, ոչ բանիւ, ոչ դրուած կամ անգիր ձեւերով, և ոչ որ և է կերպիւ :

«Կ'երդնում չը չնորհել դատապարտելցյն ոչ հուր, ոչ սնունդ, ոչ զգեստ, ոչ ասլաւէն, եթէ նոյն խել հոգեվար հայրս կտոր մը հաց խնդրէ յինէն, եթէ եղբայրս ցրաէն սառած իյնայ դրանս առջեւ :

«Կ'երդնում, եթէ այս օրէնքին դէմ դործեմ, դերագոյն արդարութեան ձեռքէն իմ խլած ոճրագործին տեղն առնուլ, ու նորա դէմ վճռուած մահուան դատապարտութիւնն անձամբ կրել :

«Կ'երդնում՝ 'ի բանս, 'ի դործս և 'ի խոր-

Հուրդոս սիրել ու յարդել միշտ զառըր աստեանը » (1) :

Վերոցիչնալ երդումն ըլլուելէն յետոյ , նախագահն հետեւեալ հարցումը կ'ընէր ու կ'ըսէր . « Գաղտնի ատեանին երդումն ուղղութեամբ թելաղքեցի՞ սա մարդուն , ինքն ալ նոյնպէս կրկնեց զայն » : « Այո՛ , Նախադահ Տէր , պատասխանէին Անկախ-Դատաւորք , ուղիղ թելաղքեցիր զերդումն՝ սցդ մարդուն , և ինքն ալ զայն ուղիղ կրկնեց » :

Արարողութեանցս կատարուելէն յետոյ , նորընծայն փորձել կ'ակսէին : Զեսքը կանթեղ մը կ'ուտային , և առանց բան մ'ըսելու , կը հրաւիրէին որ նախ մտած մեծ սրահին շուրջը փորուած ստորերկրեայ աեղերը մտնէ ու յառաջէ : Խւր քայլած ճամբուն վրայ ակսարանները շարունակ կը փոխուէին : Երբեմն՝ լայնադիր կամորներ կը տեսնէր , յորոց անթիւ շմաքարեր կախուած էին . խոնառ պատերէն շարունակ ծորող ջուրը՝ դշողը կակլած ըլլալուն համար՝ նորընծայն մեծ դժուարութեամբ կը քայլէր . բազմամեւ ոօղուններ ոտքերուն

(1) Մեր այս մատենիս մէջ արձանագրած աեղեկութիւններէն շատը՝ Տիկին Գլէմանո Բօսպէրթի « Գաղտնի ատեան » մակաղբուլ յօրինած վիորասանութենէն քաղեր եմք :

տակ լոիկ կը սողացին , և երբեմն՝ խառնաշը ունեկ կարկաչմունք կը լսէր , խառն ընդ անլուր ճիշերու : Երբեմն ալ ընդարձակ սրահի մը կը հասնէր , զոր կը լուսաւորէր միակ ձովի մը կախուած կանթեղի մը աղօտափայլ լցուր : Ոտքերուն տակ կը նշմարէր սպիտակացեալ ուկերոսի . և աչքը ո՞ր կողմ որ դարձնէր , պատերուն մէջ , փորուած խուռչներուն մէջ կը տեսնէր մորդու անձն կրախքներ : Դողդոջուն աղօտաճաճանչ լցուն ալ նոցա վրային անցնելով , այնպէս կը թուէր իրրե թէ իրենց անշարժութենէն ենելով պիտի քայլէին : Նորընծացն՝ սարսափած , 'ի զուր ելք մը կը խընդրէր՝ այն զարհուրելի տեսարանէն ազտուելու համար , բայց ամեն կողմ պատ ըլլալուն՝ փախուստն անկարելի էր :

Սակայն , հուսկ ուրեմն , սպատէն յանկարծ քար մ'կյնալով , նոր ճամբաց մը կը բացուէր : Հոն ալ սարսափելի նորանոր առիթներ կային . հոն ալ արիւնը երակներուն մէջ պիտի սառէր : Այն խաւարակուռ ուզւոյն մէջ մտնելուն պէս՝ ետեէն արագընթաց քայլերու ձայնը կը լսէր : Արդիլուած էր ետին դառնալ ու նայիլ , ասլա թէ ոչ առաջին փորձերուն արգասիքն 'ի դերե կ'ելնէին , ուստի ճամբան շարունակելէն ուրիշ ճար չ'կար : Այդ փորձն ամենէն անտանելի բանն էր , վասն զի աւելի խորին ու անսպատակած էր :

բելի սպասափ կ'ազդէր : Խւր հետքերուն վրա-
 յէն եկող անձը բարեկա՞մ թէ թշնամի էր :
 Միթէ ոյն մարդը լրտե՞ս մ'էր , որ խւր տը-
 կարանալը տեսնելուն ալէս՝ պիտի սպանէր
 զինքն , ընկերակցութեան մէջ մտնելու անար-
 ժան դատելով . . . : Քիչ մ'առաջ ոտքերուն
 տուկ տեսած ոսկերքը , նախընթաց սենեակ-
 ներուն մէջ աչացը հանդիպած կմախքները ,
 գուցէ մնացորդքն էին նոցա , որը վատու-
 թեամբ տկարանալով դադոնի Ատենին խոր-
 հրդաւոր գործակատարի մը ձեռքով զմու-
 դաեր էին հոն : Այսպէս նորընծայն կրնար
 հաղար տեսակ վհատեցուցիչ ենթադրութիւն-
 ներ որոճալ : Արդեօք քանինե՞ր այն պահուն
 զղացեր են անշուշտ այդպիսի վոանդաւոր
 ձեռնարկութեան մը խիզախելուն համար :
 Այդ հսկողութիւնը քառորդ մը տեսելին յե-
 տոյ , պղնձէ մեծ դուռ մը կը բացուէր : Ճամ-
 բուն երկայնութիւնը և հետզհետէ հանդի-
 պած սարսափելի առարկայները յոյժ տկարա-
 ցուցեր էին զնորընծայն : Պղնձէ դունէն անց-
 նելուն պէս վերջին փորձը կ'սկսէր : — Առա-
 ջին սրահը , յոր կը մտնէր , բիւրաւոր ճրագ-
 ներով լուսաւորուած էր . հոն՝ երկու դիմա-
 կաւոր մարդ զինքը կ'ընդունէին և երկայն ու-
 սեադոյն պատմուծան հաղած : Առաջնոյն
 ձեռքը ուռենեց ճիւղ մը կ'ըլլար , երկլորդին
 ձեռքն ալ՝ դաշոյն մը :

«Առաջին սրակին մէջ , ուր պիտի մտնես , կ'ըսէր առաջին անձը , ոտքերն ու ձեռքերը կապուած դատավարտեալ մը կայ , որ մասհացու հարուածին կ'սպասէ : Երեսը քօղով մը ծածկուած է , որակէս զի զնա սպաննելու տառենդ . չգիտնաս թէ արդեօք ծանօթդ է , քու տունդ ասպնջականած հիւրերէդ մին է , բարեկամիդ կամ եղբայրդ է : Այդ փորձը հոգւոյդ զօրութիւն կ'ուտայ , որոյ առ յասլայն կարօտ պիտի ըլլաս , եթէ քու սիրելիքդ սլատուհասէլ հրամայուի քեզ :

«Առ ու զարկ» կ'ըսէր երկրորդն ալ՝ դաշնը տալով :

Նոր ընծայն՝ դաշոյնը կ'առնէր ու կը հեռանար : Մտած սրահը անդարդ , փոքր ու մութ էր . կանթեղ մը միայն կը լուսաւորէր զայն : Նախ և առաջ , այդպէս անակնկալ կերպով մժութեան մէջ դտնուելով իւր շուրջը դտնուող իրերն հաղիւ հաղ կրնար որոշել . բայց տակաւին աչքերը խաւարի վարժելով՝ որահին մէկ անկիւնը պառկած մարդ կային մարմնոց ազօտ , անկար ձեւ մը կրնար նըշմարել : Այն էր պատրաստուած սպանդը : Կածին համեմատ , նորա երեսը քօղով մը ծածկուած էր , և կարծես համակամութ եամբ մահուան կ'սպասէր : Ի՞նչպէս կարելի է հոն տեղի ունեցած տեսարանը նկարագրել . զա-

տերը, մակառիթ հարուածն իջեցնելու վրայ՝
սոսկամբ զդաշոյնը նետեր՝ ու փախստեամբ
խնդրեր են պատիլ այդ յետին ու զարհու-
րելի պարտաւորութենէն . բայց Անկախ-Դա-
տաւորաց ասկից քիչ մը հեռի հսկելնուն հա-
մար՝ նահանջն անկարելի էր : Նոր օրինակ
շուկներ կը լսուիին . գերմարդկային հրեշ-
ներու ստուերներ պատերուն վրայ կը ձգէին :
Կամարէն կախուած կանդեղն ալ յանկածը կը
մարէր, և աներեւոյթ զօրութիւն մը կը դրբ-
դէր զնորընծային որ իւր վրայ դրուած պար-
տաւորութիւնը լրացնէ : Զոհագործութեան
կատարուելին և հէք նորընծայն ահաբեկեալ,
իւր սպանդին օրհասական շարժմանց ակա-
նատես ըլլալին յետոյ, կարծես մոգական
զորութեան մը ձեռքով պատերն աներեւու-
թանսլով՝ իւր նոր եղբարց ժողովին մէջ կը
գտնէր ինքզինք : Իւր կնքահայրն՝ երկայն և
սեաթոյր պատմուճան մը կը հագուեցնէր, և
սուրբ Ատեանին անդամոց կը ներկայացնէր
զնա : Լսութեան և հաւատարմութեան վրայ
դարձեալ կ'երդ մնեցունէին, և կը հրաւիրէին
զնա՝ ո՛ր Անկախ-Դատաւորաց հետ հացի ու
գինւոյ տեսակաց ներքև հաղորդուի : Այն ա-
տենէն սկսեալ գաղտնեաց դիտութեան մա-
սին առաջին կարգն ընդունած կ'ըլլար, և
կրնար սովորական նուերը մատուցանել :

ուաջին դատու Անկախ—Դատաժոր, ըլլուռովը
մէկ մարկ (64 տրամ) ոսկի կընծայէր, երկ-
րորդ կարգինը՝ մէկ մարկ արծաթ, իսկ եր-
րորդ կարգինը՝ զլիսարկ մը և չափ մը գինի :

Անկախ դատաւորները, իրենց միաբանու-
թենէն դուրս եղող անձ մը իրենց ատեանին
տուջև բերելու հետևեալ միջոցները կը բանէ-
ցնէին :

Նախ և առաջ ատենին անդամներուն սովո-
րական ժողովարանը կը գումարուէին . ամ-
րաստանողն ալ հոն կը մտնէր . նախագահը
իսմ փոխանորդը կը հրամայէր որ Անկախ—
Դատաւորաց արդարութեանը դիմելու պատ-
ճառներն յայտնէ : Այդ պատճառներն ըն-
դունուելուն այէս, ատեանը կը վճռէր, և
սուրբ նուիրակներէն (Ֆրոկնալօթ) մին պաշտօ-
նական կերպով կը զրկէր որ զամբաստանեալը
դատաստանի հրաւիրէ : «Ֆրոկնալօթը սև պատ-
ճառնանը կը զգենառուք, լայնեզր զլիսարկը կը
դնէր, ու անմիջապէս կը մեկնէր : Դատաւո-
տանի հրաւիրուող անձը ո՛վ որ ալ ըլլար, Ֆր-
րօկնալօթը կարող էր մատչել առ նա, ու սո-
վորական եօթը կնքով կնքուած զարդուրելի
մոդաղաթը ներկայացնել : Նոյն հրամանէն ե-
րեք օրինակ կը յանձնուէր նուիրակին, ու
տմբաստանեալը դոնէ մէկ հատը կընդունէր
Այն հրամանները հետևեալ կերպով չարա-
դրուած էին :

Ա. Սուրբ ատենին խմանութեան դէմ մեղանչեցիր . Ե'կ ի դատաստան : Մեք , անմահին խորհրդաւոր դատաւորքս , կը հրամայեմք քեզ որ ներկայ ամսոյս մէջ գտա և քու անարդ գերազոյն ատենին առջև հաջիւ տաս . Ե'կ , Ե'կ : «Հրամանագրին մէջ կը նշակէին նաև թէ յանձաւորը ո՛ր օրը , ո՛ր ժամուն և ո՛ւր տեղ պիտի դանուէր , անկից դաղտնի . Ատենին առջև տարուելու համար :

Որոշուած օրը , մեծազօր ատենին տնդամքըն հանդիսաւոր կերպով կը դումարուէին : Անկախ-Կոմսը բազկաթուի մը վրայ կընտէր . սուր մը և ուռենաց ճիւղ մ'անալակաս քովը կը դանուէին : Ամբաստանելոյն դալէն յառաջ՝ Անկախ-Կոմսն հետեւեալ խօսքերը կ'ըսէր ժողովականաց . «Կը հարցնեմ ձեզ , Սուրբ Ատենին յանձնուած դատը տեսնելու տեղն ու ժամանակն է հիմայ : »

Անկախ-Դատաւորները կը սկասասիսանէին . «Ծնկերութեանս նախագահը քեզ տուաւ զայդիշխանութիւնը : »

Անկախ-Կոմսը կը սկասասիսանէր . «Կը հընազանդիմ ուրեմն հրամանաց : »

Այս խօսակցութենէն յետոյ Անկախ-Դատաւորներէն եօթն հոգի կ'ընտրուէր , Անկախ-Կոմսին հետ դատելու համար : Ընտրութենէն յետոյ վերջինը կ'ըսէր . «ալաշտանութիւն և

ապահովութիւն կը խոստանամ իմ արդարա-
կորով և հաւատարիմ Ն. Ն. ներուս, և ժողո-
վականացս ամենեցուն օրինաց համեմատ, որ
պիսեղդ սպառնան անհնազանդին, և կը հրա-
ւիրեմ զնոսա որ իրենց աթոռոց վրայ բազմին:
«Այն ատեն ընտրուած եօթն Անկախ-Դատաւ-
ւորներն իրենց նախազահին քով կը բազմէին,
գլուխնին բաց ու դիմակնին հանած, լուռ-
թեամբ ամբաստանեցյն ներս մտնելուն կը
սպասէին: Զեռքերնին մերկ, պատմուճաննին
ալ ուսերնուն վրայ առած պիտի ըլլային: Եթէ
դժբաղդաբար օտարական մը ժողովարանը
մտնելու փորձը փորձէր՝ ըլլուելու արարողու-
թիւնը դիտելու համար, նորա գատը երկայն
չէր քշեր. անմիջապէս ոտներէն կը կախէին
քարայրին ամենէն մօտ ծառին վրայ:

Սակայն ամբաստանեալն որոշուած տեղը
գալով կը գտնէր զնուիրակն, որ անբարբառ
տտեանը կը տանէր զնա: Այն ատեն դատը
կ'սկսէր. դատախազը մանրամասնաբար կը շա-
րէր ամբաստանութիւնքը, իսկ ամբաստանեալ
կը ջանար ինքզինք արդարացնելու, կը խնդրէր
որ արձակեն զինքը: Անկախ-կոմսը վճիռ մը
ստուերագրելէն յետոյ՝ ատենին անդամներէն
մէկուն կը հրամայէր որ քննէ զայն և կարծիքն
յայտնէ: Այն քննութեան ժամանակ ամբաստան-
եալը կը քաշուէր: Յայնժամ ընկերակցութեան

ամեն անդամներն անխտրաբար վիճաբանութեան կը մտնէին, և թէ որ տմենուն կարծիքը Անկախ-կոմսին կարծեաց համաձայնէր, ինչպէս որ զրեթէ միշտ կը հանդիպէր, վճիռը վերջնական կը դատուէր : Վճիռներն երբեմն անմիջապէս չեին գործադրուէր . պատահած մի քանի օրինակներէն կը հասկցուի որ այն վրձիռները կրնային իբրև սպառնալիք հալածել զդատապարտեալս մինչև ցմահ : Անմիջական գործադրութեան եզանոտեղ խիստ պարզ էր . դատապարտելցն վիզը չուանմը կ'անցունէին, և Անկախ-կոմսն ալ հետևեալ խօսքերը կ'ըսէր,
 «Կախաղանի կը դատապարտեմ զքեզ, դադունի Ատենին օրինացը համեմատ, քանզի ոճրագործութեամբքդ այդ պատուհասին արժանացար: Մեռնելէդ յետոյ մարմինդ ագուաւներուն ու թուչնոց և օդուն մէջ ապրող կենդանեաց ճարակ ըլլայ . Աստուած հոգւոյդ ողորմի, ու կինդ և զաւակներդ որբ և անտէրունջ մնանա
 Անկախ-կոմսը վերոյիշեալ վճիռը կարդալուն ոկէս՝ Անկախ-Դատաւորներն անմիջապէս կը խեղդէին զհէք դատապարտեալք: Յայնժամ Անկախ-կոմսն ուռենոյ ճիւղը ժողովարանին մէջ աեղ կը նետէր, ու Անկախ-Դատաւորներն ալ ոտքի վրայ կեցած, դլուխնին բայց, ձեռքերնին մերկ, ու անզէն՝ վրան կը թըքնէին՝ տրուած վճռոյն հաւանէլով:

Երբեմն ալ կ'ըլլար որ ամբաստանեալն առաջին հրամանին չ'անսալով՝ չ'գար . այն ատեն 43 Փիօրին տուղանք տալու կը դատապարտուէր . Եթէ երկրորդ անդամալ չ'գար, տուղանքը 90 Փիօրինի կը բարձրանար . հուսկ ուրեմն երրորդ անդամուն ամբաստանեալը կը տարագրուէր : Մէկ հրամանէն մինչեւ միւսն անցած ժամանակն ընդհանրապէս վեց եօթնեկին և առան ու չորս դիշերէն աւելի չ'ըլլար : Հրամանագիրն ամբաստանելցն տանը, կամ անոր մօտ ուռրի մը արձանին, և կամ դաշտաց մէջ խաչելութեան մը քով դրուած աղքատաց գանձանակի մը վրաց կը կախուէր : Գիշերապահը կամ անցորդք խմաց կուտային ամբաստանելցն, որոյ թէպէտ և ուղղապէս ալ հրամանագիրը կը հաղորդուէր :

Եթէ ատեանը ողորմելով՝ դատապարտելոյն ներէր, Անկախ-Դատաւորներէն երկու հոգի ժողովականաց առջև կը բերէին զնո, և կը բարեխօսէին անոր համար : Դատապարտեալն աղերստկան կերպարանքով կը ներկաւանար, այսինքն չուանը վիզն անցուցած, ձեռքերն սպիտակագոյն ձեռնոց դրած, և կանաչագոյն խաչ մը և կայսերական Փիօրին մը բռնած :

Բայց թէ որ ամբաստանեալ մ' Անկախ-Դատաւորաց հետղհետէ զրկած հրամանաց ականջ

չկախելով՝ չներկայանար, և ուզեր փորձել մօ-
տալուտ վրէժինդ բութենէն փախստեամբ կամ
որ և է կերպիւ ազատիլ, այն ժամանակ Ատե-
նին «գաղտնի վրիժառուները» նորա ետևէն
իլիցնային, և առաւօտ մ'ալ դաշտին մէջ՝
միակ կաղնիի մը ճիւղերէն կախուած դիակ
մը կը տեսնուէր : Մարդառագանը ծառին կե-
զելին մէջ միւելու ձգելու էր դաշոյնը, որպէս
դի ո՛վ սպաննած ըլլալը չյայտնուի :

Ասկից աւելի սաստիկ յանդդնութիւն մը
չէր կրնար ըլլալ :

Նուիրակներն ուրիշ սպաշտօններ ալ գաղո-
նապէս կը վարէին . չկար մարդկային իշ-
խանութիւն մը որ կարող ըլլար նոցա դէմ
կենալ : Յաճախ՝ նոքա՝ իրենց անձնական վր-
րէժինդրութեանց համար բազմաթիւ մար-
դասպանութիւններ կը գործէին, առանց Ա-
տենին միջամտութեանը : Ի նախնումն՝ այդ
սպիտաքեր զեղծմանց առաջքն առնելու համար
Անկախ-կուսները տեսակ մը մայր-տումար կը
բռնէին, յորում կ'արձանադրէին մահու դա-
տապարտեալ անձանց անունները և տիտղոս-
ները : Այդ մատեանն՝ «Արեան գիրք» կը կո-
չուէր : Մատենին դլուխն հետևեալ խօսքերը
կը գտնուէին :

«Ո՛վ որ դատապարտուի, անսպատճառ մեռ-
նելու է : Դատապարտեալն՝ յանցաւոր և կամ

անմեղ՝ միշտ պատժուելու է։ Նա՝ քաջ հաւա-
սողուած կը համարուի»։

«Արեան գրքին» մէջ արձանագրուողը՝ դադու-
նապէս կ'սպաննուէր, ու չ'էր կրնար ինքողինք
ովաշտապանել։ զանոնք միայն դատաստանի կը
հրաւիրէին, որոց համար որ նակաստաւոր վր-
ճիռ տալու միտք ունենային։ և Անկախ-Դա-
տաւորներէն ո՛վ որ ուզէր, ամեն ժամ, ամեն
տեղ կրնար զդատապարտեալն սպանել։ Այն
մատենին մէջ արձանագրուիլն՝ երաշխաւո-
րութիւն մ'էր այն թշուառ մարդուն համար՝
զոր Ատեանն իւր պաշտօնէից դանակին կը
մատնէր։ Բայց տակաւ, այդ զզուշութիւնը,
որ ամբաստանելոց նպաստաւոր էր, բոլորովին
մոռցուելով, ընկերակցութեան անդամներն
իրենց թշնամիներէն դիւրութեամբ վրէժնին
լուծել սկսան։ Անկախ-Դատաւորներն՝ իրենց
զարհուրելի իշխանութիւնն ընդ երկար անար-
դել գործածեցին։ Կայսերաց բռնի թոյլտու-
ութիւնն և համայն ժողովրդոց մէջ տարա-
ծուած սարսափը՝ նոցա խաւարային դաւադ-
րութեանց պահպանուելուն մեծապէս նակաս-
տամատոյց եղան։ Նոցա իշխանութիւնը տա-
րածուեցաւ, զօրացաւ, բայց Ամկիամօնտ կայ-
սեր զօրաւոր ձեռքը միայն յաջողեցտ նը-
սպաստաւոր հանդ ամանոց աջակցութեամբը՝
զայն խախտելու, նուածելու ու ոչնչացնելու։

Չեմք կրնար ուրանալ՝ որ Անկախ-Դատաւ-
որները ժամանակ ժամանակ բարի ու մար-
դասիրական խորհրդովք ալ գործեր են : Այս
ալ անժխտելի բան մ'է որ իրենց գլխաւորնե-
րէն ումանք արիասիրտ և հանճարաւոր մար-
դիկ եղեր են : Յովշաննէս Հիւս (1) և Լու-

(1) Յովշաննէս-Հիւս . — Պոհեմիոյ Հիւս ա-
նուն քաղաքը ծնաւ 1336 ին : Բրակայի հա-
մալսարանին տնօրէնը և Պոհեմիոյ Սովիա թա-
գուհւոյն խոստովանահայրն էր : Բողոքակա-
նաց յոյժ մեծարած Անդղիացի հեղինակին՝
Ռւիքլէ Փի՝ կրօնական գրութեանց հետեւելով
խնդրեց Հռովմայ Եկեղեցւոյն մէջ նորոգու-
թիւն մուծանել . ուստի կը հստատէր թէ
սրբոց և կուսին մատուցեալ պաշտօնը ուրիշ
բան չէ , այլ միայն կռապաշտաթիւն . և թէ
Հռովմայ Եկեղեցին և նորա գլուխը՝ Պապը՝
հաւատացելոց վրայ որ և է իշխանութիւն չեն
կրնար ունենալ , և այլն : Իւր բազմաթիւ աւ-
շակերտները «Հիւսեանք» կոչուեցան : Պապը
դատապարտեց զՅովշաննէս Հիւս , բայց ասի՝
Պոհեմիոյ Վէնահսլաս թագաւորին պաշտպա-
նութեամբը զօրացած , մեծ եռանդեամբ շա-
րունակեց իւր գործը : Գօմիանցա քաղաքը
գումարուող տիեզերական ժողովին ներկայա-
նալու հրաման եկաւ իրեն , ինքն ալ Ամիկա-
մօնտ կայսրէն ապահովագիր մ'առնելով գը-
նաց . բայց հոն իսկոյն բանտարկեցին և այ-
րուելու դատապարտեցին զնա : 1415 ին կա-
տարեցին այն եղեռնաւոր գործը : Բայց իւր

տեր (1) իրենց ձեռնարկութեանց մէջ հաւա-
նականապէս աւելի մեծ խոչընդուռներ կը
դանէին , թէ որ ժողովրդոց միաքերը յառա-
ջուց պատրաստուած չըլլային նոցա կրօնական
նորոգութիւններն ընդուռնելու , Անկախ-գա-
տաւորաց ուսուցած գաղանեօք , և նոցա ժո-
ղովարաններուն մէջ՝ տեղի ունեցած խորհր-
դաւոր արարողութեամբք :

Եւ արդարեւ ընկերութեան մէջ մտնել ու-
ղողներն այն աղայական համարուած փոր-
ձերէն օգտակար խորհուրդներ կը քաղէին՝
իրը հրաւեր մ'առ աղնիսն ազատութիւն :
Նախ անշուշտ կը տեսնենք որ այդ փորձերը
նիւթական են , և այնպէս կը թուի թէ՝ մի-
աշակերտներն երգում ըրին որ իրենց սիրելի
վարդապետին վրէժը լուծեն , ասկից սկսաւ
Հիւսեանց պատերազմը ընդ առաջնորդու-
թեամբ արիասիրա Զեսդայի :

(1) Լուտեր . —Մարդկութեան լուսաւորիշ-
ներէն մին , որ ծնաւ Մանաֆի լոփ կոմսութեան
խլէպէն անուն քաղաքը (10 նոյեմբեր 1484 .
Աւդոստինեանց միաբանութիւնը մտաւ , ու
վիթթէ մակերկի համարաբանին մէջ աստուա-
ծաբանութեան դաստիութիւնը ըրաւ : Յով-
հաննէս Հիւսի գրութիւննքն ու ներողութեանց
վաճառումը զինքը զրգուելով ներողութեանց
օգտակարութիւնը նախ հերքեց . յետոյ Պատին
իշխանութեան , խոստովանութեան , բարե-
գործութեանց օգտին , քաւարանին ճշմար-

աբանութեան գլխաւորներն այն փորձերով՝
ուրիշ բան չեն խնդրեր , բայց միայն ստու-
դել իրենց ընդունած մարդոյն՝ ընկերակցու-
թեան կամաց և նպատակին ծառայելու ան-
հրաժեշտ ալէտք եղած արիութիւնն , յան-
դրդնութիւնն ու կորովն ունենալը կամ չու-
նենալը : Եթէ այդ փորձերն ասկէ զատ ու-
րիշ նպատակ ալ չունենային , դարձեալ այդ-
պիսի ընկերութեան մը դլխաւորաց խմասուն ,
սրամիս , և նաև ազգաց սովորական կենացը
փորձառու անձինք ըլլալը կը յայտնէին , վասն
զի այդ կերպով կրնացին իրենց երկրին մէջ
դանաւած ամէն կորովամիտ , և արիամիրտ
մարդ իկը ընկերութեան մէջ ունենալ :

սութեանը , երիցոնց ամուրութեանը , սրբոց
մատուցեալ պաշտօնին , Պապին քաղաքական
իշխանութեան , վանականաց ուխտին , ստ-
տարագի և այլն դէմքը բեց : — Սաքսոնիոյ դըք-
սութիւնը Տանիմարդա և Շուէտ Լուտերի
կողմը բռնեցին : Պապը նպովեց զնա : Լուտեր
Պապին կոնդակները այրել տուաւ : Վօրմն քա-
ղաքին մէջ գումարեալ ժողովին ներկայանա-
լով (1521) իւր վարդապետութիւնները պաշտ-
պանեց : Արերի ժողովը (1526) խղճի մուաց
ազատութիւն ընդունեց . բայց 1529 ին ժո-
ղովը ուղելով չափ մը դնել այնմ , Լուտերա-
կանք մերժեցին , որոյ համար « բողոքական » ան-
ուանեցան : Լուտեր մեռաւ յիշէպէն , 1546 ին
Յօ տարեկան հասակին մէջ :

չկարծեմք որ այդ փորձերը լոկ նիւթական ըլլան . Անկախ-Դատաւորաց իրենց մէջ դործածած բազմաթիւ նշանակները զայն բաւականէն աւելի կը հաւաստեն : Նորընծայն՝ խորհըրդոց ուսման առաջին աստիճանն հասնելուն պէս , իւր նոր եղբարց հետ հացի և գինուոյ տեսակաց ներքեւ կը հաղորդուէր . անի՝ եղբայրական հաւասարութեան երկնային և միանգամայն . նիւթական նշան մ'էր . այնու կ'ուզէին նորընտրելցն հասկցընել որ նոր աշխարհի մը մէջ մտած էր , յորում ընկերական զանազանութիւնները բառնալով՝ ամէն մարդիկ իրարու հոււասար կ'ըլլային , և ամէնքըն ալ անիրաւ և բռնաւորական տիրապետութենէն կը հրաժարէին : Ստորերկրեայ տեղերուն մէջ քայլած ատեն , ամենուրեք արձանագրութիւններ տեսնելով՝ կարդացած , և այդ արձանագրութեանց իմաստներն իրեն սրտին և հոգւոյն վրայ օգտակար տպաւորութիւնն ըրած ըլլալու էին : Իւր ամէն տեսածներն ու լսածներն ըստ բաւականի կը նախատէին ազնուացնելու յաշս իւր այն ընկերութիւնն , որոյ անդամներէն մին պիտի ըլլար : Անկախ-Դատաւորաց արարողութեանց ատերը բոլորովին կորսուեր են . նոցա հետքն անգամ չէ մնացեր . ասկա թէ ոչ , արարողութիւններէն կրնայինք իմանալ ընկերութեան

վարդապետութիւնները : Կարևոր եղած դը-
րութիւնները չունենալնուս համար՝ ասկէ ա-
ւելի քննութիւն չենք կրնար ընել . բայց մի-
այն այս կ'ըսենք որ այդ ընկերակցութեան սո-
վորական գործոց վրայ ճիշդ դատողութիւն մը
տակաւին չէ եղած : Այդ ընկերութիւնն՝ ո-
մանք իր մարդասպաններու ժողով մը համա-
րեր են . իսկ այլք՝ ցնորած մարդասիրողնե-
րու խռոմը մը : Այդ երկու զրոյցներուն մի-
ջինը՝ անտարակոյս ստոցն ըլլալու է . վասն
զի Անկախ-Գատաւորները ոչ մարդասպան և
ոչ ալ դաղափարախօս խմաստամէր եղած են ,
բայց հաւանական է որ երկուքին մէջ ալ մա-
սըն ունեցած ըլլան :

Ճի՞ դարուն մէջ , խռովութիւն ծագեցաւ
ընկերութեան մէջ . և կուէլիիններու ու կիպր-
իիններու սկսաւ ծառայել : Համառօտիւ պատ-
մենք քաղաքական աշխարհին մէջ անցած ի-
րողութիւնները : Արդէն պատմեցինք այն
կոռոյն սկիզբը , որ պահ մը բոլոր Եւրոպան
բորբոքեցուց : Հիմա ալ նկարագրենք այն պա-
տերազմին նոր կատաղութեամբ մը վերստին
սկսիլը : Մեծն Օթոնի (1) , կայսերութեան

(1) Մեծն Օթոն . — 912 ին ծնաւ : 936 ին
գերմանիոյ թագաւոր ընտրուեցաւ : Հոնաց և
Ունգարացւոց շատ անդամ յաղթեց . Գաղղիոց
դէմ ալ Լօրէնը պաշտպանելու համար պատե-

ժամանակ , Պաւերայի դքսին Առնօլիի երեք
որդիքը իսկէրհարտ , Արնուլ և Հէրման ի-
րենց հայրենական ժառանգութենէն յանիրա-
ւի զրկուեր էին կայսերական հրամանաւ :

Սակայն Օթոն իւր ըրած հարստահարութիւ-
նը մոռցնելու համար՝ իսկէրհարտ դքսին որդ-
ւոյն Աէօփոլախի դարձուց Աւտորիոյ «մարկրա-
վութիւնը» (մարգիզութիւնը) , և նորա հօրը ըս-
տացուածոց մէկ մասը: Աւտորիան այն ժամանակ
Պաւերայի դքսութեան մասն էր , որ արդի
դքսութենէն տւելի ընդարձակ ըլլալով՝ կը
տիրէր նաև Աթիրիայի , (1) Գարդինթիայի ,

բազմելով՝ մինչև Շամբիներ պաւառն հասաւ :
Միլանի մէջ Պէրանժէ Մարգիզն իշխանութե-
նէն ձգելով՝ 961 ին խտալիոյ թագաւոր ան-
ուանեց ինքզինքը . Լուսաբարտնան նուաճեց ,
Յովհաննէս Ժ. Պ. Դ. Ի. Մ. Վ. Ա. Ը. Պ. Ը. Պասլութեան
բարձրացուց և դիտավիա Գերմանիոյ կայսե-
րութեան հետ միացուց : Մեռաւ 975 ին :

(1) Աթիրիա . — Նօրիկիոյ և նախկին քաննոնիոյ
մասն էր: Հին ատենար Հռովմայեցիք , և մի քանի
բարբարոս ազգ էր հետզհետէ այն երկրին տի-
րելին յետոյ , Մեծին կարողոսի իշխանութեան
տակ անցաւ , և հուսկ ուրեմն Գերմանիոյ դա-
ւառ համարուեցաւ : Աթիրիոյ տիրող ցեղը վեր-
ջանալով Պոհեմիոյ Օթօկար Բ. թագաւորն ա-
ռաւ , բայց բնակիչքը խռովութիւն հանելով
Ռենդարացոց իշխանութիւնն ընդունեցին :
Իսկ Բոստորիոս կայսրը Աւտորիոյ հետ միացուց
այն դաւառը :

(1) Գարնիօլի , (2) Կօրիցի կոմսութեան , Ցերօլի
և նախնի Նօրիկիոյ (3) ամէն դաւառներուն :
Լէօփօլտի յաջորդները , Աւստրիոյ «մարկրավ»
ըլլալնուն պատճառաւ , Պաւերայի դքսերուն
Աւստրիոյ վրայ ունեցած «գլխաւորութիւննին»
ընդունեցին : որպէս զի Պաւերայի դքսութիւ-
նը , զոր վաղ կամ անսպան ձեռք անցնել կը
յուսացին , իւր առանցնաշնորհութիւններն ամ-

(1) Գարինթիա . — Այս երկրիս տիրեցին
Հռովմայեցիք , շատ մը բարբարոս ազգեր ,
Մեծն կարողա , որ դքսութեան վերածեց զայն-
Առնուլ՝ առաջին դուքս եղաւ Գարինթիոյ 880
ին , և որու հետ միացուց իւր Պաւերայի դքսու-
թիւնը . բայց Օթօն Բ. կայսրը այդ երկու
դքսութիւնները իրարմէ զատեց 887 ին : Հինգ
ընտանեաց ձեռքն անցնելին յետոյ , հուսկ ու-
րեմն Աւստրիոյ տան վիճակեցաւ (1556) :

(2) Գառնիօլ . — Ի նախնութին Հռովմայեցիք
այլ և այլ ուրիշ ազգեր և Մեծն կարողա տի-
րեցին այն երկրին : Մեծն Օթօն՝ Գերմանիոյ
դաւառ մը ըրաւ զայն՝ զոր չորս ցեղ իրարու մէջ
բաժնեցին , բայց 1556 ին Աւստրիոյ տունը
բռնը Գառնիօլի տիրեց : 1809 ին Ֆրանսացիք
տոին . և 1814 ին ետ դարձուցին :

(3) Նօրիկիա . — Օդոստոս կայսեր ժամանա-
կը Հռովմայեցիք տիրեցին : Գդ դարուն մէջ
յերկուս մասունս բաժանուեցաւ . որք առ յա-
պայն առաջին Նօրիկիա , երկրորդ Նօրիկիա
կոչուեցան :

բողջ պահէ : Արբոյն Հէնրիկոսի (1) կայսեր ժամանակը յարմար առիթ համարելով՝ յայնմ ձեռնամուխ եղան . վասն զի նա՝ իւր թագաւ կալութեան հանդիսէն անմիջապէս վերջը խոստացեր էր որ Հէզիլօնի դքսութիւնն իպէր կարտի թոռանը Շվայնիւրթ Մարգիղին դարձընէ . բայց փոխանակ խոստմունքը կատարելու , Պաւերայի դքսութիւնը՝ իւր ամուսնոյն Արբուհւոյն Կէնէկօնտի եղբօրը Հէնրիկոսի շընորհեց . որով Հէզիլօն սաստիկ զայրանալով իւր ընտանեաց այն հին ժառանդութիւնը՝ փորձնց զինուց զօրութեամբ ձեռք ձգել : Բայց իւր ջանքն 'ի դերեւ ելնելով , 1017 ին մեռաւ : Ուստի Արնօլֆի յաջորդները քիչ մը ժամանակ հանդարտ կեցան , Աւստրիոյ մարկրավութեամբը լոկ շատանալով : Արբուհւոյն Կէնէկօնակ եղբօրորդւոյն Հէնրիկոսի վախճանելին յետոյ , Հէնրիկոս Գդ կայսրը Պաւերայի դքսութիւնն 1049 ին համանուն տան դարձուց , զայն տալով Գօնրատի , որ «ապալատին» (արքունական) (2) կոմսին Վէօփօլտի որդի Արնօլտի եր-

(1) Սուրբ Հէնրիկոս . — 972 ին ծնաւ : 995 ին Պաւերայի վրայ թագաւորեց , և 0թօն Գդ կայսեր յաջորդեց 1002 ին : Իւր կայսերութեան ժամանակ յաջողութեամբ պատերազմեցաւ թշնամեացը հետ : 1024 ին մեռաւ :

(2) Պալատին (բալաթէն) . — ի նախնումն

որդւոցն Հերմանի թոռնորդին էր :

Յիշեալ եղելութիւններն ՚ի զիր արձանացաւող սլատմագիրներուն խօսքերէն կը յացտնուի որ, Պաւիէրայի դքսերը, իրենց հայրենական վիճակներէն բնու չ'հրաժարելնէն ՚ի զատ, մերթ ընդ մերթ, խնդրեր են զայնս ձեռք բերել ու իրենց ընտանեաց մէջ պահել: Գօնքատ դուքսն՝ անորդի մեռնելով, Պաւերան զարձեալ օտարաց վիճակեցաւ . Կուէլիք ընդ երկար տիրեցին այն երկրին, որ որդւոց որդի անցնելով հուսկ ուրեմն Հէնրիկոս-Գոռոզի աւանդեցան. բայց Գօնքատ Գլդ. (1) կացածերմանիոյ կայսերաց եկամուտը տնօրինող անձանց կը տրուէր սցս անունը կոմութեան տիտղոսով: Ատեաններու մէջ ալ իշխանութիւն ունէին: Կայսրը կրնար և եթ զայս աւագութիւնը շնորհել . այդ կոմսերը՝ դքսերու վրայ հսկողութիւն իւնէին յօդուտ իշխանութեան կայսերաց: Պալատինք հուսկ ուրեմն իալուածներու աէր ըլլալով, իրենց աւագութիւնն ալ յաջորդական եղաւ:

(1) Գօնքատ Գ. — Գրանդօնիոյ դուքս, Սուավիոյ դքսին գրետերիկոսի որդին, ծնաւ 1098 ն: — Իւր ընտրութիւնը երկարաւու պառերազմաց առիթ եղաւ: Պաղեստինի գնաց խրակինոսաց դէմ պատերազմելու, բայց բառակին մեծ մասը ջարդուելով՝ կամասիոս քառաքը չկրցաւ առնուլ: — Ի Գերմանիա մերաւարձաւ, ու 1152 ին մեռաւ Պամպէրկ քառաքը հասնելով:

րդն զՀէնրիկոս ամեն իշխանութիւններէն ու ա-
ւագութիւններէն ձգելով , Պաւերայի դքսու-
թիւնն Արնօլֆի ցեղին Աւատրիոյ մարկրապին
Հէօփոլտ Երդ. ի շնորհեր էր : Հէօփոլտին յա-
ջորդեց Ժաղամէրիօթ եղբայրը , թէսէտ և
Հէնրիկոս-Գոռոսպի որդին՝ Հէնրիկոս-Առիւծն
չատ դէմ կեցաւ , այն վիճակին վրայ անժըս-
տելի իրաւունք ունենալը սկզբելով : Հէնրի-
կոս՝ Փրէտէրիկոս (1) կայսեր աջքը մտնելով :
անդադար թախանձեց զնու որ կայսրութեան
ժողովին ձեռքով զՀէնրիկոս Ժաղամէրիօթը
դատել տայ : Կայսրը՝ Վօրին (2) , Ռաժիսակո-

(1) Փրէտէրիկոս Ա. — Սուալիոյ դքսին
Փրէտէրիկոսի որդին էր , ծնաւ 1121 ին , և
1152 Գօնրատ Գ. կայսեր յաջորդեց : Ադրի-
անոս Գ. Պասլը զնա կայօր օծելու համար ,
Հոռմայեցիք դժկամակեցան , և նորա մահ-
ուընէն յետոյ Փրէտէրիկոս Երեք հակա-պատ
դրաւ : — Միլանցիք ապստամբեցան , կայսրն
առաւ նոցա քաղաքը , նոյնակէս և զՀոռվիմ և
վենետիկցւոց չկրնալով դէմ դնել Աղէքսանդր
Պապն ընդունեց : — Փրէտէրիկոս Պաղեստին
ոլ դնաց . շատ յաղթութիւններ ըրաւ , Ասոր-
ւոց մէջ մտաւ , ու հոն 1190 ին վախճանե-
ցաւ , 38 տարի կայսերութիւն ընելին յետոյ :

(2) Վօրին . — Հոռնոսի մօտ . Վանդալք
կառուցին զայս քաղաք : Բազմաթիւ կարլո-
վինեան թագաւորաց մայրաքաղաք : Քաղա-
քական և Տիեզերական ժողովներ դումար-

նա և Սրբիրա (1) քաղաքաց մէջ հետպհետէ ժողով գումարեց, բայց Հէնրիկոս Ժազամէրկօֆտ կայսեր՝ Հէնրիկոս-Առիւծոյն վրայ ունեցած սէրը գիտնալով, իրեն մի քանի անգամ ուղղուած հրմաններուն չ'անսալով ատենին չը ներկայացաւ. ասոր վրայ, 1154 ին Կոսլար (2) քաղաքին մէջ գումարեալ ժողովը՝ դատապարտեց ղնա, Պաւերսցի ղքսութիւնն Հէնրիկոս-Առիւծուն թողելու :

ուեր են հոս : 1521 ին դումարուալ քաղաքական ժողովը դատեց և դատապարտեց ղլուտեր : — Ժամանակաւ կայսերական քաղաք . իւր եսլիսկոպոսաց հետ միշտ պատերազմեցաւ : 1689 ին Լուդովիկոս Ժ.Գ. հրկիզեց զայս : Մէծին Նարօլէոնի կայսերութեան ժամանակ Ֆրանսայի մասն էր եղած :

(1) Սրիրա . — Ինախնումն Սրիրա դետին վրայ փոքր գիւղ մ'էր, զոր Ծուղիէ եսլիսկոպոսը ընդարձակեց 1084 ին : Հէնրիկոս Գ. կայսեր ժամանակ՝ կայսերական քաղաք եղաւ, և եսլիսկոպոսանիստ քաղաք Սրիրիոյ ճոխ եւ պիսկոպոսաց : — Թիւրիէն 1688 ին առաւ և կործանեց : Ֆրանսացիք 1734, 92, 93 և 96 ին դարձեալ առին Սրիրան :

(2) Կոսլար . — Հանովրի մէջ, ժամանակաւ կայսերական քաղաք : — 1805 ին Բրուսիոյ տրուեցաւ, և 1807 ին ալ վեսթ վայիոյ թագաւորութեան, 1813 ին Բրուսիան առաւ և 1815 ին Հանովրի տուաւ : — Կ'ըսեն թէ Պէրթօլտ Շվարց կրօնաւորը հոս գտաւ վառօղբ :

կը յուսային որ ֆրետերիկոսի կայսերութեան
քով ամէն երկարուակութիւնները դադրին .
անոր համար շատերը նորա ընտրութեան
քուէ տուեր էին : Եւ արդարեւ ֆրետերի-
կոս' Ախալլին էր հօրը կողմանէ . իսկ կուէրի՝
մօրը կողմանէ , որ էր Յուղիթ , Հէնրիկոս-Գու-
ռովին հօրը՝ Պատերայի դքսին Հէնրիկոս-Սէ-
ին դուստրը :

Բոլոր այդ ակնկալութիւններն ՚ի դերեւ եւ-
նելով , քաղաքական մարտը վերստին ծագե-
ցաւ , թէ պէտ և ֆրետերիկոս շատ աշխատե-
ցաւ այն ներքին խովովութեանց վերջ տալու ,
բայց չիրցաւ բոլորովին ի գլուխ ածել զայն ,
վասն զի երրեմն խաղաղութիւնն հաստատ-
ուած կը կարծուէր . այլ այդ խաղաղութիւնն
անձիութեամբք , յուզմամբք լի էր . պատե-
րազմը հաղար անդամ ընտրելի էր քան թէ
այդ տեսակ հանգարտութիւնը . . . դոնէ սրա-
ւաերազմօք՝ թշնամիք՝ վառեալ ի գէն , ի քա-
ջութիւն և յասպետականն պատիւ կը ճակա-
տէին իրարու դէմ . մինչ խաղաղութիւնը՝ թու-
լացուցիչ՝ տաղակալի և զղուելի կեանքի մէջ
յանկարծ կը լքանէր զնոսա : Պատերազմի մը-
տատանջութիւններէն իրենց անձնական կը-
սիւներուն վրայ խորհելու ժամանակ չէին ու-
նենար : Խաղաղութիւնն հաստատուելուն պէս ,
նոքառ իրենց ներքին թշնամութեամբք կը

պարապէին լոկ : Կուէրփ և Կիսլինք կա
սեր առջև իրենց ատելութեանց հրաժարել
իրարու հետ հաշտուիլ կեղծելուն պէս , խռ
դաղութեամբ իրենց վիճակները կը դառնայի

Վեհապետաց շուրջը վատ խորհրդականներ
պակաս չեն ըլլար , որք երկապաւակութեան
նախանձու զգացմունքներն անդադար կը ներ
չնջեն ի նոսա , պալատականներն յիշեալ երկո
ընտանեաց գոռոզամիտ զվասւորաց վրոյ դիւ
րութեամբ կը տիրէին . բայց հանդիսաւո
խոստմամբք երկու կողմն ալ թշնամութենէ հը¹
րաժարած ըլլալնուն համար , իւրաքանչիւր
կը նայէր որ կուռոյ սկզբնապատճառ եղաւ
չհամարուի . ուստի պատերազմն յայտնապէ
չէր բացուէր , բայց այսու ամենայնիւ կ'ըսկսէր
Այն առեն Անկախ-Դատաւորաց զօրութեա
կը դիմէին : Նոցա թշնամութիւններն անկա
րելի էր դադրեցնել : Ամէն քրիստոնեայ ապ
դերը փութով կըզինուէին , և նախանձայուզու
թեամբ յերուսաղէմ կ'ընթանային . խկ այս
երկու ընտանիքն իրենց ատելութեանց պատ
ճառաւ իրարու դիմաց անշարժ կը կենային
և չէին կրնար իրենց շուրջն ամէն բան քարչո
տանող յործանքին մէջը նետուիլ :

Գալունի Ատենին խաւարային դործակա
տարներն առեն տեղ տարածուեր էին . Ան
կոմի-կոմսներն , Անկախ-Դատաւորները , «Քրի

հընպօթերը ոտքի վրայ էին : Ամէնքն ալ կը
գործէին, ոմանք կուէլփներու, և սյլք կիսլը
լիններու համար . այդ արիւնուռշտ մարդկան
սպակաս չին զոհերը : Կարծես ամենուն աչքը
դարձած, ըրածնին չին դիտեր : Երբեմն,
վեսթ-փալիոյ և կամ Պոհեմիոյ գեղջուկը դաշ-
տորէից մէջէն անցնելու ատեն, կաղնիէ մը
կախուած կը տեսնէր ատենին սովորական մա-
դաղաթը, որոյ վրայ արձանագրուած էր դա-
հիճներու վրէժինդրութեան մատնուած դա-
տապարտելցյն անունը . Երբեմն ալ անցորդը
պարհուրած աչերով կը դիտէր խեղճ մարդու-
մը մարսինը ծառի մը ճիւղերէն կախուած :
Խորին սարսափ մը կը տիրէր ժողովրդոց վրայ,
և թէպէտ և Անկախ-Դատաւորները Ռամկաց
և Սորկաց վկաս չին հասցուներ, սակայն այդ
խեղճ մարդիկն այնպիսի սրտածմիկ տեսա-
րաններու ականտես ըլլալով՝ շարունակ ահ-
ու դողի մէջ կ'ասլրէին :

Կուէլփներու և կիսլըլիններու պատերազմաց
և թշնամութեանց ժամանակ, Անկախ-Դատաւ-
որք կըութեամբ և կոյր զկուրայն դործի մէ-
ռան այդ երկու հզօր ընտանեաց ձեռքը : Յն-
կերակցութեան այն ժամանակները՝ դործած-
քազմաթիւ մարդասպանութիւններն եղան ան-
տարակոյս որ տեղի տուին նորա դէմ եղած
ամբաստանութեանց : Միաք չունինք զԱնկախ-

Դատաւորա անմեղ ցուցնել և ոչ ալ նոցա ընկերակցութեան անդամոց գործած մարդասպանութիւններն արդարացնել : Անկախ-Կատաւորները կերպով մ'ալ չեն կրնար իրենց բռնած ճամբուն համար արդարանալ արտաքին եղելութիւնները պատճառ բռնելով , քանզի իրենց զարդուրելի զօրութեանը համար կարող էին արտաքին իրողութիւնքը քամակելու բռնաւ չերկնչել որ անոնցմէ իրենց գոյութեանը վիաս մը հասնի : Այս ալ աւելցնենք որ այն աններելի մարդասպանութիւնքը ժամանակ մը միայն գործուեցան , կուսակցաց ումանց ձեռքով , որք դուցէ ընկերակցութեան մէջ չեին ընդունուած :

Այն խառնաշխոթ ժամանակները , կրնայ եղած ըլլալ որ առանց գալտնի Ատենին գիտակցութեանը , ընկերութեան անծանօթ մարդիկ գատաստանական վճիռներ կատարելու պատրուակաւ անձնական վրէժնին լուծած ըլլան , քանզի դիւրին էր ընկերակցութեան ուղղորութիւններն օդասակար կերպով ի գործ դընել :

Եթէ Անկախ-Կատաւորաց հրամանաւ մէկն սպանուէր , ոչ ոք կ'իշխէր մարդասպանը խընդրել , որով ասի՝ անպատուհաս մնալուն վրայ ասպահով էր : Այդ առանձնաշնորհութիւնը շատերուն փորձութիւն մ'եղած ըլլալու , և այն

առեններն անտարակոյս սպանելոց բազմաց
անուններն արեսն գրքին մէջ յաճախ տես-
նուած չըլլալու են :

Ներքին պատերազմաց դադրելքն յետոյ
հուանական է որ ընկերութիւնը փորձ փոր-
ձեր է կանոնաւոր ընթացքի մը մէջ մտնել, և
անցելոյն պարդ աւանդութեանց նահանջել
Բայց այդ փափաքը դիւրութեամբ չգործադ-
րուեցաւ : Բազմաթիւ անձինք խարդախու-
թեամբ ընկերութեան մէջ մտած էին, սուսնց
պահանջուած փորձերուն մատչելու .

Անկարգութիւնն այդպէս ամեն կարգաց
մէջ մտնելուն պէս, ճշմարիտ անիշխանու-
թեամբ ամեն սպաշտօններն իրարու խառնը-
ուեցան :

Այսու ամենայնիւ ընկերութիւնը քիչ մ'ա-
տեն ալ տակաւին ապրեցաւ, արարողութիւն-
ները կատարելով և մարդասպանութիւնքը նո-
րոգելով : Այն ժամանակ Գերմանիոյ վրայ կ'
տիրէր Անկարա (1) կայսրը որ կառկածու

(1) Անկարա . — 1578 ին Աւստրիոյ մարկ-
րաֆութիւնը ժառանդեց : 1586 ին Հունգա-
րիոյ թագաւոր եղաւ : 1596 ին Թուրքաց Պայտ
դիտ արքայէն յաղթուեցաւ և 1410 ին Գեր-
մանիոյ կայսր ընտրուեցաւ, և 1414 ին Գոռ
թանցա քաղաքը տիեզերական ժողով մը դու-
մարեց՝ Յովհաննէս Հեւսը դատելու համար :

կը նայէր այն ընկերութեան վրայ , որմէ այնշափ մկաստէր էին իւր նախորդները : Տակաւին չ'էր մոռցեր որ Անկախ-Դատաւորները քիչ մնաց գահընելց սլիախ ընէին զիշնսէւլաս Գրդ . , զոր յաջողէր էին ժամանակ մը բանտի մէջ պահել , և նորա անուամբը կառավարել այն թագաւորութիւնը՝ զոր ձեռքէն յախչակել կը մտարերէին : Կանոնագրութեամբ մը նոցա իշխանութեան սահման դնելէն յետոյ՝ Անկախ-Դատաւորաց խօսքն աչչըլլուելով , կարծեց թէ ժողովուրդներն այն դահիճներուն ձեռքէն ազատեր է :

Բայց Անկախոնտ կայսրը կը խարուէր . վասն զի հարկ եղաւ որ շատ անդամ յասպարէղ եւնէ նոցա ընկերակցութեան վերջնական կերպով յաղթելու համար : Այս բանիս նկատմամբ դժբաղդարար ստոյգ պատմութիւն մը չ'ունինք : Մինչև հիմայ Անկախ-Դատաւորաց վրայ գրուած պատմութեանց՝ տղիտութեամբ և կողմնակցութեան հոգւով մի ըլլալնուն համար , պատմագիրներուն մեզ աւանդած ման-

որոց ապահովագիր մը տուեր էր , զոր՝ Ապանիոյ հաւատակննութեան արժանի հարք բանի տեղ չ'զնելով՝ վատութեամբ զջովհաննէմը սպանեցին . . . : Բայց Հիւսեանք ապատամբեցան , և շատ դժուար եղաւ զնոսա նուածելը Անկախոնտ կայսրը մեռաւ 1457 ին :

ժամանակութեանց վրաց վերջնական դատողութիւն ընել չենք իշխեր :

Ակիամօնտի կայսերական դահը ելած ժամանակը թէպէտե Անկախ-Դատաւորներու ընկերութիւնը առաջին վիճակը չ'ունէր, բայց շարունակ կ'աշխատէր նոր հիմանց վրաց հաստատուելու : Նոր սերունդը, կղերին գեղձմամբը ու կալուածատեարց անդ թութեամբը զայրանալով՝ գաղտնապէս ապստամբութեան իր սկառաստուէր :

Զ'ապագայն տակաւին չէին կրնար նախատեսել, բայց այս միայն կարելի էր դուշակել որ ժողովրդոց խորհրդաւոր կերպով ըրած աշխատութենէն ընդ հուպ օդտակար և փրկաւէտ լոյս մը պիտի ծաղէր : Զարմանալի՛ տարիներ, յորս ամենուստ նորանոր պիտոյք կ'եւնէին, նորանոր դոհունակութեանց կարօտ: Ցեղափոխութիւն մի տեղի պիտի ունենար, ո՞ր կողմէն պիտի սկսէր . ի՞նչ կերպով պիտի կատարուէր, այս հարցմանց ո՛չ ոք կարող էր սկառախանել . բայց իւրաքանչիւր ոք ապահով պիտէր որ ծանրակշիռ եղելութիւն մը պիտի նկատարուէր: Անկախ-Դատաւորներու հզօր ընկերութիւնը, որ զիւր իշխանութիւնն ամենուցեք տարածեր էր, և դարուն ամենէն հանձարիմաստ ու արիասիրտ անձինքն իրեն աջակից ռանէր, ամեն ժողովրդոց նորանոր միտումնե-

բռւ գիմելու ատեն, չէր կրնար անշարժ կե-
նալ :

Այն պահուն, կուսակցութեան անարժան
խնդիրներն և անձնական ամեն ատելութիւն-
ներն անհետանալով խնդիր մը, մտատանջու-
թիւն մը միայն գրաւեր էր ժողովրդոց միտ-
քերը, այն էր ընդհանուր ազգաց եղբայրու-
թիւնը, ամէն մարդոց հաւասարութիւնը, և
ներկայ երիտասարդ սերնդոց ազագային աւ-
ետեաց երկիրը դիմելը . . . :

Անկախ-Դատաւորաց ընկերութեան մէջ գլու-
նուող ամեն եռանդուն և ճարտարամիտ ան-
ձինք յանկարծ ուրախութեամբ լցան, և ընդ
հուպ մասն ունեցան հանդերձեալ յեղափոխու-
թեան մէջ: Ի սկզբան անդ՝ օտարներն իրմէ
հեռու բռներ էր. բայց իմանալով որ անցե-
լցն ազիտագեր ոգին իւր իշխանութիւնը պի-
տի ջնջէր, և լաւագոյն օրեր սիտի ծագէին,
իրեն գալու վախցողներուն ընդ առաջ գնաց
և ամեն կերպով ջանոց ինքզինքը մեծարելի
ցուցնել անոնց, որք նախ զարհուրեր էին իւր
սարսափելի կարողութենէն, և յաջողեցա-
հուսկ ուրեմն զանոնք առ ինքն գրաւել ու շա-
հել նոցա սիրտերը: Անձնուիրական գործեր
ըրաւ, անշահասիրութիւն, և մարդասիրու-
թիւն իսկ ցուցուց :

Զասի բազումք մեզմէ յառաջ ըսեր են և

ամեն դրութիւնք ալ դողցես կերպով մը զայ
կը հաստատեն . բայց այդ մարդասիրութիւ
բառը ամենուն սցնքան ծիծաղը շարժեր է
որ դողալով կը համարձակինք զայն բերաննի
առնելու : Ասի միայն ստուգութեամբ կընան
ըսել որ Անկախ-Դատաւորները ժողովրդու
կերպով մը դաստիարակներն եղան , և յառաջ-
դիմութեան նոր ուղղոյն մէջ քայլելու մեծա-
պէս նպաստեցին անոնց . զասի ոչ ոք կընայ
ժիտել : Ընկերութեան վերջի ըրածներուն վր-
բայ որոշ տեղեկութիւն չունինք . բայց ստոյդ
գիտենք որ ետքերս արիւնահեղ հալածանք
ներ կրեց անհաշտ թշնամւոյ մը կողմանէ՝ որտ
վրայ ինքը նախ մի քանի անդ տմ յարձակեր
յաճախ յարգեր , նաև պաշտպաներ էր , այ
սինքն կայսրն ըսել կ'ուղենք : Ընկերակցութեան
անդամները մէկ մը ցրուելնուն պէս , զատ
զատ դիւրութեամբ յաղթուեցան . բայց հալա-
ծանաց սաստկութեամբն հանդերձ , կրցին ի-
րենց նախկին ուխտին աւանդութիւններն ամ-
բողջապէս հաղորդել իրենց յաջորդաց : Ան-
կախ-Դատաւորները Գերմանիոյ քաղաքական
ասպարիզէն 'ի բազմաց հետէ անհետացեր են ,
բայց նոցա ողին կենդանի մնացեր ու դարուց
ի դարս մշտնջենաւորուելով մինչեւ մեր օրերս
կենդանի մնացեր է : « Ուստաւորեալք » ըսուած-
ներն այս ընկերութեան բնական ժառանգ »

ներն են : Նոցա վրայ ալ յարմար ժամանակին
պիտի ճառենք :

Չ.

ԵՐԵՒՔ ՎՐԻԺԾԱՌՈՒԽԵՐ

ՃԴ բդ. դարուն սկիզբը , Պռհեմիոյ և Պաւե-
սայի սահմանագլխոց վրայ բերդ մը կը տես-
նուէր , որոց նմանը շատ կը դտնուէր միջին
դարու տառենը : Սեպացեալ ժայռի մը վրայ
կառուցեալ ըլլալուն համար՝ աւելի անդեղց
բոյնի կը նմանէր քան մարդկան ընակութեան
յատկացեալ շինուածի մը : Հոն տանող ճամ-
բէն անտանելի դժուարութեամբ կ'եղցուէր :
Այն սեպացեալ ուղղոյն վրայէն երկրին ձիերն
իսկ հակիւ հազ կրնային ելնել : Ճանապարհը
ժայռին մէջ փօրուած էր , և երկու կողմէն
պահամիշներ կը բացուէին , ուր նայողին դը-
լուխը կը դառնար : Մի քանի կարճաբերձ թը-
փերէ վատ ուրիշ կանաչեղէն չ'էր տեսնուեր
ոյն ճանապարհին վրայ՝ որ ամայի , տիրա-
տեսիլ և անքեր էր : Բերդն անդադար ամ-
պատճեծ ու տիրուր երկնի մը տակ ըլլալուն հա-
մար՝ նորա շուրջը պարզեալ տեսարանն ալ

թախծալից ու չարագոյժ կերպարան մ'ունէր։
Խորացատակ հեղեղ մը կը բանար այն լեռը ,
ուր կառուցեալ էր բերդը , և բլոյն շուրջը
դառնալէն յետոյ՝ կ'երթար կարկաջահոս կը
գահավիժէր մերձակայ անդունդին մէջ : Հե-
րան կողերը բացուած լայն ճեղքուածներուն
մէջ սովորաբար գիշակեր թոշունք կը բնա-
կէին : Ամեն պահուն , անդնդոց վրայ ոսկըր-
կուլը և կամ անգոյլը շրջարջելէն յետոյ , ուղեա-
րի մը քայլից տրոփիմանէն սարսափած , ընդ
հուպ չարագուշակ ճիշեր արձակելով՝ իւր ա-
ռանձնական խոռոչներուն մէջ կը խուսափէր։

Սյն բերդին մէջ սովորաբար երեք անձինք
կը բնակէին . Մէսայնի ծերունի սեպուհը ,
իւր որդին Հէնրիկոս և դուստրն՝ կթէլ :
Ալեոր սեպուհը՝ կուէլիներու ցեղին ամենէն
իատազի կուսակիցներէն մին եղած էր : Բայց
քիչ մը ժամանակէ ՚ի վեր քաղաքական կը-
սիւներէ ու հոգերէ հեռանալով՝ իւր որ-
դույն և աղջկանը հետ վերոյիշեալ բերդը քա-
շուեր , կամակամութեամբ մահուան կ'սպասէր։
Հէնրիկոս որդին ազնուասիրոտ ու քաջ երի-
տասարդ մ'էր , հաղիւ հաղ քսան և զորս տա-
րին թեւակոխած՝ իրարու թշնամի ընտանեաց
յարանորող սրտաերազմաց մէջ մեծ համբաւ
ստացեր էր , և հոյցը պարծանքով և ուրա-
խութեամբ ականատես եղեր էր իւր որդույն
վառաւորուիլը և հարց անուանը վրայ փայլ

ու շուք աւելցնելն այնպիսի առարկիզի մը մէջ՝
յորում իւր նախնիքն անմահացեր էին : Ծե-
րունին կը սիրէր զիւր որդին , վասն զի նորա-
քաջութիւնն ու աղնուտթիւնը տեսնելով իւր
երիտասարդութիւնը կը միչէր . և երբ տեսնէր
նորա՝ գեղեցիանուս նժուգին վրայ հեծնալն
ու սուրը պատենէն մերկացնելը՝ աչքին առ-
ջել կ'ուգային իւր քաջադործութեան բարե-
բաստիկ օրերը՝ որոց անհետանալուն վրայ կը
ցաւէր : Բայց մէկը կար՝ զոր ամեն բանէ աւելի
կը սիրէր , և կարծես նորա վրայ կը զեղուր
իւր սիրոյ ամենէն ջինջ մասը , զոր իւր գո-
րովով և ոնձնուէր հոգերովը կը գգուէր , այն
էր խարախադեղ և պարկեշտ սողիկը՝ զոր
կատուած շնորհեր էր նմա երիտասարդու-
թեանը ժամանակ , և որոյ անունն էր Կթէլ :

Հէնրիկոս յաճախ կը լքանէր զիւր հայրը ,
որ նորա մեկնելէն յետոյ դարձին վրան ա-
պահով չէր ըլլար : Գերմանիոյ արիւնահեղ
պատերազմաց մէջ , Հէնրիկոս կրնար օր մը
մեռնիլ : Այդ տխուր մոտածութեամբ , Հէք
հայրն ստէպ գաղտնի լացեր էր որդւոյն վը-
րայ , և հուսկ ուրեմն նորա ասլրեին յոյսը
կարեր էր :

Իսկ Կթէլ քովէն չէր հեռանար՝ միշտ աչ-
քին առջին էր : Եթէ հայրը զուարթ ըլլար ,
ինքն ալ կը զուարթանար . եթէ հօրը դէմքը

ախրութիւնը պատէր , մտախորհ կը լինէր : Կթէլ հրեշտակի աչեր ունէր . գիտէր սիրել զհայրն , որպէս և ծերունիք կը խնդրեն սիրուիլ . գհացրը կը խնամէր այն գորովով ու անձնուիրմամբ՝ զոր ալեորն աղնուականը ըստ արժանուոյն կը մատուցանէր նմա . և Աէսոյնի տիրուր առանձնութեան մէջ ապրելով քերնէն բնաւ դանդաս մը չէր ելած : Ինչպէս կարելի էր որ հսցըրը չսիրէր այն քաղցրածայն , հրեշտակաշուք և անմեղ աղջիկը :

Կթէլ տասն և եօթն տարեկան էր . այն նազելի , չնորհադեղ , քաղցրաբարոյ և բարես սիրտ աղջիկը՝ մօրը վախճանելին յետոյ , հօրը քովին պահ մը չէր հեռացած : Իւր մատաղ հասակէն մայրական խնամքներէ պրկուած էր : Իւր սիրով՝ կենաց տռաջին տըսպաւութիւններն ընդունելու սկսելուն ոլէս , քովը տեսեր էր զիւր եղբայրն՝ Հենրիկոս և զհայրն՝ զավեոր սեպուհը , հոյր և որդի՝ կէս դարու միջոցաւ իրարմէ զատուած ըլլալովին հանդերձ , միացեր Եին դարձեալ զինքը սիրելու ու մեծցնելու համար : Ուստի գեղանի աղջիկը իւր առաջին տարիններն անցուցեր էր մերթ հօրը սուրբ համբուրից կարկառելով զիւր հրեշտականման ճակատը , և մերթ զեղլով խրուտին գաղտնիքը գորովադութ և անձնուեր եղրօրը սրտին մէջ :

Մեծցեր ու աճեր էր , բայց միշտ հեռի այն
աշխարհէն՝ զորչէր ճանչեր , և ճանչելու ալ փա-
փաք չունէր , որով մանկութեան անդորրաւէտ
տղիառութեան մէջ մնացեր էր : Մի անդամ ե-
նթ կթէլ այն ժամանակին շքեղաշուք տիե-
նանց խումբը մտաւ : Բրակա քաղաքը վասու-
ռոր տօնախմբութիւն մը պիտի կատարուէր ,
և ամեն գերմանացի աղնուականք հոն պիտի
երթային , վասն զի կայսրն ու բոլոր արքու-
նիքն ալ ներկայ սլիտի գտնուէին : Նոյն օրը
Աէսայնի բերդը ամացի մնաց : Կթէլ , շքեղա-
զարդ պճնեալ , սպիտակ երխվարին վրայ հե-
ծաւ . մէկ կողմէն հայրը , միւս կողմէն չէն-
միկոս եղբայրը կ'ընկերէին իրեն . քիչ մը հե-
ռուէն կուգային գղեակին զօրականքը : Տի-
րուհին ուրախ զուարթ իջաւ լեռան շուրջը
դարձող ճանապարհէն . Ծերունի սեպուհն իւր
երկու զաւակներն առած՝ բրակայի տօնախմբու-
թեանց կ'երթար :

Կթէլի այն քաղաքն երթալն այնքան անտ-
կրնկալ բան մ'երկացաւ ամենուն , որ երկար
ատեն խօսակցութեան նիւթ եղաւ : Համա-
խումբ տիկնանց և տեարց մէջէն հրեշտակի
մը պէս անցնելու ժամանակը , այն աղջկան
այնքան գեղոյն և պարկեցառութեան վրայ ա-
մենքն ալ հիացած մնացին : Ամէն աղնուական
տեարքը խմբովին եկան ծերունի պարօնին

դուստրն մեծարանօք ողջունեցին , և կլուեն
թէ կայսրն խակ նորա անցնելու ատենը՝ կե-
ցեր նայեր է : Այն յապթանակը՝ պահ մը շր-
ջացուց ու տաղեցուց անփորձ Եմիլը : Խոր տ-
մեն տեսածներն իրեն համար նոր ըլլալուն ,
և այն մեծաշոք ու հրաշալի տեսարանն իրեն
համար նոր ըլլալուն , և այն մեծաշոք ու հր-
աշալի տեսարանը իրեն խիստ տարօրինակ
թուելուն համար՝ քիչ մնաց որ սփառի շփոթէր
ու խոր գեղեցկութեանն բրած տպաւորութե-
նին զարհութեցու :

Այդպէս շտատ օրեր անցան , և Նողելի տի-
րուհին մոռցաւ զոր այնքան սիրեր էր երե-
մըն , մոռցաւ այն տեղերը ուր անցուցեր էր
խոր մանկութեան բարերաստիկ տարիները :

Խոր գեղեցկութեանը պատճառաւ իրեն հե-
տեղ իշխանաց մշջն երկու հոդի հետքերուն
վրայէն չին շեղած , որք էին Գարշօյի պա-
րօնը , և Մանֆրէտ ալ Գրօնոթատթ անուն
երիտասարդ սեսլուհը : Գարշօյի պարօնն այն
ժամանակուան Գերմանացի ազնուականաց ա-
մենէն երենքի անձերէն մին էր : Խոր բարձր
հստակաւն կորովով և զօրաւոր ձայնով ամէ-
նուն վրայ մեծ տպաւորութիւն ըլլած էր : Կի-
պլիններու ամենէն անձնուէր կուսակիցնե-
րին մին կը համարուէր : Խակ Մանֆրէտ , ընդ
հակուակն , կուէրիներու գրօշն տակ նոխու

մարտից փորձն առած ըլլարով , ամենեցուն ,
և նոյն խել կայսեր սիրելի եղած էր : Մանֆօ-
րէտ մեծափարթամ , գեղեցիկ և բարձրահա-
սակ էր , ու երկրին ազնուական երիտասարդ-
ները քովէն չէին հեռանար : Որով Գարշօյի
սեպուհը Մանֆրէտի բնական ոսոխն էր եղած :
Այդ երկու ազնուականաց Ֆէսայնի տիրուհ-
ւոյն հետեւիլը տեսնելնուն ոլէս , Գերմանացի
ազնուականք իրար անցան՝ անձկութեամբ կը
խորհէին այդ նոր ոսոխութեան ելքին վրայ :

Ասոր վրայ , ականատեսներէն ոմանք կու-
էլփին յաջողութիւն կը մտղթէին , և այլք Կի-
ուլիին իշխանին : Բայց այդ մրցման ելքն
ամէն ոք կարող էր նախատեսել . վասն զի
երբ Գարշօյի սեպուհը , ըիչ մ'ատեն վերջը ,
Էթէն խնդրեց ի կնութիւն իւր , ծերունի
կուէլփին խելոյն մերժեց նորա խնդիրը :

Մինչ Էթէլ , երեք օր գոգցես արբեցութեան
և մոռացութեան մէջ անցունելէն յետոյ , մը-
տան անդրէն իւր նախնեաց դղետկը , կո-
րուսերէր էր այդ ճաճանչագեղ զուարթութիւնը
որ երբեմն իւր գեղանի ճակատին զարդն էր
եղած : Խուցին մէջ մենիկ փակուած՝ պատու-
հանէն՝ ազօտ ու անուշադիր աչերով կը դիտէր
իւր առջև պարզեալ դիտատեսիլ տեսարանը ,
և իւր երեւակայութեան ստեղծոծ յափշտա-
կիւ ցնորդներով ինքոյինք կ'որորէր : Գեղեցիկ

աչերուն մէջ յանկարծ խորին դիւրութիւն մի նկարեցաւ . մահաղեալ դեղնութիւնը ծածկեց իւր այտերը , և սկսան հիւծելու մաշիլ : Երբ բեմն իւր վարդակարմիր շրթներուն վրայ սահող ժպիտն աներեւութացեր էր : Յայնժամ էսթէլ օրերով պատուհանին վրայ կոթընած , արտաքին շուկաներու անզգայ՝ կը ընէր ևեթիւր սրտին երկնացին նուագաց , — տնառհման սիրոյ երգերուն :

Իւր դստեր հոգւոյն վրայ ծանրացող արրածութիւնը տեսնելուն պէս , ծերունի ազնուականը համբուրեց և ընդ երկար սրտին վրայ սեղմեց զնա : Գուշակելով դամենայն , ներեց նմա՝ իրմէ աւելի զայլ ոք սիրելուն համար :

Բրակայի տօնախմբութիւններէն յետոյ մի քանի ամիս անցեր էր : Հէնրիկոս կայսեր քովն էր մեկնած . դղեակին մէջ ծերունի սեպուհն և կթէլիս մինակ մնացեր էին :

Մայիս ամսոյն մէջ իրիկուն մը , արեգը տակու կ'աներեւութանար հորիզոնը ձևացնող լեռանց ետին . մի քանի սեաւ և ոսկեգոյն ամպեր երկնքին վրաց կ'ընթանային . մրրկարեր հողմունք կը փչէին դղեկին շուրջը , և ճանապարհին երկու կողմը գտնուող միակտուր հատապարերուն վրայ անձրւոյ խոշոր կաթիւներ մի առ մի կ'ինկնացին : Փոթորիկն ընդ հուպ սիստի սկսէր : Գիշերոյ ստուերները լերանց

դադտիթներէն տակաւ իջնելով՝ դաշտերը կը
ծածկէին : Երեկոյեան առաջին քօղին մէջն
հազիւ հաղ կը նշմարուէին բերդին ստորոտը
եղած իրերը : Դղեկին խրաքանչիւր անկիւնը
կտուուցեալ վտքրիկ աշտարակներուն մէկուն
մէջն էր Կիթէլին սենեակը :

Դաշտորէից վրայ բացուած պատուհանէն
կը տեսնուէր աղջկան մը խարտիշագեղ գը-
լուխը՝ մտախորհ դիրքի մը մէջ :

Բաւական ժամանակէ ՚ի վեր այդպէս կը
սպասէր Կիթէլ՝ ժամը եօթն էր, միթութեան
պատճառաւ չէր կրնար արտաքին իրերը նըշ-
մարել, և գաղտնի սարսափի մը, որոց պատ-
ճառը կ'անդիտանար, տակաւ կը տիրէր սըր-
տին վրայ : Այն իրիկունն Կիթէլ հօրը քով չէր,
այլ միայնակ խցին մէջ վակուած դոգցես անձ-
կութեամբ կը նայէր այն վտանգաւոր ուղւոյն
վրայ, որ դաշտին մէջն անցնելով կը յան-
դէր ի դպեակն : Գիշակէր թուչունք չարագու-
շակ ճիչէր բառնալով պատուհանին վրայ կը
թուչտէին, և հեղեղին կարկաչնը կը հաս-
նէր մինչև իրեն, իրը աղիտից սպառնալք՝
երեկոյեան տխուր լուռւթեան մէջ : Յանկարծ-
աղօտ բան մ'երևացաւ հորիզոնին վրայ . Ճիռ
մ'ոտից արովիւնքը որոշ լուռեցան . գիշակէր
թուչունք սարսափած՝ խուսափեցան . իսկ Կ-
իթէլ, գունաթափի և տնիոս աթուին վրայ

ինկաւ : Քառորդ մը վերջը , Մանֆրէտ ազ գը ~
րօնշթաթ և Էթէլ , պատուհանին առջեւ նըս-
տած , զաշսարհ ամէն մառնալով սիրալիր խօ-
սակցութեան մ'արբեցացիչ հեշտութեանց մէջ
իր լողային :

— Մանֆրէտ , կ'ըսէր Էթէլ , այդչափ ու-
շանալդ այս իրիկուն մեծ երկիւղ պատճառեց
ինձ : Երկինքը միմին է . հեղեղը կը մանչէ ըս-
պառնալից , գիշակեր թուչունները չարագու-
շակ ձիչերով կը թուչը սին . խոռվայրոց անձ-
կութեան մը մէջ էի , վասն զի կը վախնայի
որ ըլլայ թէ դժբախտութիւն մի պատահած-
րլայ քեզ :

— Էթէլ , կը պատասխանէր , Մանֆրէտ ,
յանցուոր ըլլալս գիտեմ . բայց կամքէս հը-
զօրագոյն պատճառ մը զիս քեզնէ հեռու-
բունելուն համոր է որ այսչափ ուշայայ , և
գիտնալով նոեւ որ անձկութեան առիթ կու-
տայի քեզ և արդէն ես ալ մեծապէս կը վրշ-
տակրէի :

— Հայրս այսօր Հէնրիկոսին վրայօք ըւըր ա-
ռաւ , կրկնեց յայնժամ' Էթէլ : Հէնրիկոս տա-
սըն ու հինգ օրէն պիտի վերադառնայ հոս ,
և պատերազմնալ վերջացած ըլլալուն համար՝
ա՛լ վիրար պիտի չլքանենք այսուհետեւ , և
խսպառ անմեկին պիտի ապրինք հոս : Մանֆ-
րէտ , պիտի սիրե՞ս եղբայրա :

— Ինչու շալրեմ, կիչէլ. քիչ ճանչեր եմ
դէնրիկոս, բայց լսեր եմ որ ազնուատիրու
կումսի մը համբաւն ստացեր է գերմանիոյ երի-
տասարդ իշխանաց մէջ :

— Այո՛, ազնուատիրու է նա . քեզ պէս ե-
րիտասարդ, քեզ պէս վեհանձն ու բարի է նա .
և հօրս ըսածին համեմատ, յաճախ արիու-
թեամբ շոհատակեր է Վիալըիներու դէմ :

— Թէպէտե Հէնրիկոսի դարձն ուրախու-
թեամբ կը ցուցանէ զքեզ, սակայն պարտք
կը համարիմ իմացնել որ հաւանականապէս
Վէսայնի դղեակը քիչ ժամանակէ պիտի կէ-
նայ :

— Ինչու, Մանֆրէտ :

— Վիալըինք հզօր են, կիչէլ, կուէրիներու
նոցա դէմ ունեցած ատելութիւնը տակաւին
տկարացած չէ, և կ'երգնում ի սուրս, որ քիչ
ատենէն մեր քաղաքական պատերազմները
դարձեալ պիտի նորոգուին : Ասկէ զատ, նո-
քա աէր են դադտնի զօրութեան մը, զոր ար-
դէն այնքան զեղծմամբ դործածեցին . կարե-
մի՞ է ուրեմն որ այդպիսի զարհութելի միջոց-
ներ ունենալով Վիալըինք խաղաղութիւնն ընտ-
րեն : Ես չեմ կարծեր :

— Այդպէս չէ, Մանֆրէտ . Հէնրիկոս այ-
սօր հօրս գրերէ թէ ամեն երկպառակութիւնք
դադրելով կայսրն ալ Քաղանի Ատենին զօրու-

թեան ճարտարամթեան չափ մը կրցերէ դը-
նել:

Յայնժամ լուսինը հորիզոնէն գեր կը բարձ-
րանար . ամսկերն ալ հոմին հալածուելով եր-
կինքը ջինջ ու պայծառ էր : Եռանի աղօտ ճա-
ռագայթ մը Մանֆրէտի երեսաց վրայ զար-
նելով , կթէլ , որ զանի աչքէն չ'էր փախու-
ցած , տարսափած աղաղակեց :

Ի՞նչ ունիս , ըստ Մանֆրէտ նորա ձեռքերը
բռնելով :

— Հապա դու , դոչեց կթէլ , ի՞նչ ունիս ,
ի՞նչ կըլլաս , Մանֆրէտ : Ի՞նչու այդ չարա-
դուշակ դեղնութիւնը ծածկերէ դէմքդ , ի՞ն-
չու արտասուք կը փայլին աչքերուդ մէջ , ի՞ն-
չու ձեռքերդ կը դողան : Պատասխանէ՛ , Ման-
ֆրէտ : Աստուած սիրես :

Մանֆրէտի դիմաց վրան յանկարծ արխ-
րութիւնն նկարուեր էր , աչքերուն միջն
փայլակ մը անցեր էր և ջղացին արագաշարժ
դալութեամբ ձեռքերը կարկամեր էին : Այսու-
ամենայնիւ խաղաղիլ կեղծելով ,

— Բան մը չունիմ , ըստ , ճայնը զօրացնել
ջանալով : Կ'երդնում որ բան մը չունիմ : Հոս
դալու ատենս մօոցայ , անոր համար գոյնս
փոխուեր է , ու կը դողամ : Խակ եթէ աչե-
րուս մէջ տեսած արտասուքներուս սպատճա-
ռին հարցնես , Անկախ-քատաւորաց խօսքն

ըրած ատենդ քու յիս նորոգած մէկ սարսա-
փելի յիշատակի մը հետևանքն են նոքա :

— Ո՞րն է այն յիշատակը :

— Զարհուրելի յիշատակ մ'է այն , ո՛ Եթէլ :
Խմ մատաղ երխտասարգութեանս ժամանակ
դժբաղսութեան մը հանդիպելով , մինչեւ հի-
մա անկարելի եղած է մարես զայն հեռացր-
նել . . . :

— Ինչ դժբաղսութիւն , ըսէ :

— Հայրս

— Յետո՞յ :

— Զոհ եղաւ Անկախ-Գատտառորաց :

— Տղա՞յ էիր այն ժամանակ :

— Ցանեվեց տարեկան էի .

— Գիտե՞ս մարդասարանին անունը:

— Այո՞ , զիտեմ :

— Ո՞վ է :

— Գարշօյի Յեսուսիք :

Եթէլի ձեռնը Մանֆրէտի ձեռաց մէջ դողաց
և տարսիածուք պահ մը խորին տիստութեան
մէջ թաղուած՝ լուռ կեցան :

Գարշօյի սեպուհին անունն՝ իրենց խօսակ-
ցութեան մէջ այնպիսի անակնկալ կերպիւ-
լուելով , մեծապէս վրդովեց զչթէլ , որ տն-
սլութեամելի զարհուրանք մը զգաց , առանց պատ-
ճառն իմանալու , այսու ամենայինիւ ինքզինք

զօրացնելով՝ շարունակեց ու ըստ դողդոջուն ձայնով.

— Միթէ Գարչօյի սեպուհն Անկախ-Դատաւարաց ընկերակցութեան անդամակից է :

— Այս կիթէլս և պատասխանեց Մանֆրէտ մասաղ երիտասարդ սւթեանը ժամանակ նուցա արիւնուուշտ արարողութեանց մասնակից եղաւ . և կըսեն թէ անսահման իշխանութիւն մ'ունի եղեր այդ ընկերութեան մէջ :

— Ասոր համար ուրեմն թշնամիները բազմաթիւ են :

— Նմանապէս և բարեկամները . . . :

— Ինչպէս այդպիսի մարդը բարեկամ կըսնայ ունենալ . . . :

— Գոնէ սա ճշմարիտ է որ իւր շուրջն եղող անձինքը նորա դարձուքելի գօրութիւներէն պատկառելով նորա թշնամութենէն կրցածնուն չափ կզգուշանան :

Կիթէլ սկսաւ մտախորհ լինել , ու խօսակցութիւնը դադրեցաւ . . . : Թէպէտե հայրն ու Հէնրիկս եղբայրն յաճախ խօսեր էին Անկախ-Դատաւարուներու վրայ , բայց ինքը՝ այն ընկերութեան խորհրդաւոր դադանեաց քաջուեղեկանալու բնաւ հետամուտ եղած չէր :

Իւր ստորական կենցաղավարութեան և ըգբաղմանց յցժ հակառակ ըլլալուն համար զարմացաւ իրեն սիրուծ մարդուն մտատանջու-

թեամբ և ստուգութեամբ այն բաներուն հաշառատ ընծայելը տեսնելով :

Ցկար մտաց ծնունդ. կը համարէր Անկախատաւորաց զոյութիւնք, և պատմուած իրողութիւնքն ուրիշ բան չէր կարծեր. բայց միայն ճարտարահիւս առասսկելներ, զմանկունս և զկանայս սարսափեցնելու համար հընարուած : Մանֆրէտ ալ իր կողմէն կըզդուշանար Գաղտնի ատենին վրայ սկսուած խօսակցութիւնը շարունակելէ : Քիչ մ'ատենէ, ի վեր խորին տիրութիւն մի կը տիրէր վրան, անձկութեամբ և սիրան 'ի դող կը նացէր լեռան ճանապարհին վրայ, զոր խաւարը բոլորովին ծածկեր էր, և ականջ կուտար՝ գիշերային լուսթեան մէջ շուկ մը լսելու համար :

Յանկարծ Մեսայնի բերդին դուռը ուժգին գոցուեցաւ, և մեծ վակին մէջ անսովոր ակտմուկ և իրար անցումմը լսուելէն յետոյ, աշտարակին սանդղէն վեր մէկը դամող աղաքայլ ելնել սկսաւ : Եթէլ գլուխը վեր վերցնելով՝ ականջ տուաւ . խել Մանֆրէտ սաբսափահար արձանացած մնաց :

—Ո՞վ այս ժամուն կրնաց գալ ըստ Եթէլ, Մանֆրէտին քով մերձենալով :

—Ո՛ աղէտից . . . ըստ ասի՝ յած ճայնով :

Այն ատեն սենեկին դուռը բացուելով մարդմը ներս մտաւ : — Մթնագոյն երկայն պատա

մուճան մը հագած էր, ձեռքելով համազոյն
ձեռնոց, և զլուխն ալ դորշաղոյն զլսարկ մը
դրած էր. մէկ ձեռնը կը բռնէր քառածալ
մագաղաթ մը, յորմէ բազմաթիւ կնիքներ կը
կախուէին: Այդ մարդն անխօս մինչև սենե-
կին մէջ տեղն յառաջելով՝ կթէլի ծնդացը վր-
րայ դրաւ մագաղաթը, և խկոյն հեռացաւ,
սենեկին մէջ եղող կահերուն մէկէն զաշոյնո-
վը փայտի կտոր մը հանելով առնելին յետոց:
կթէլ քարացած մնացեր էր, առանց այդ ե-
ղելութեանց պատճառը դիտնալու: Խսկ Մանֆ-
րէտ մագաղաթին վրայ նետուելով՝ զայն ա-
ռեր բացեր էր. առաջին տողերը կարդալաւն
պէս՝ սարսափելի աղաղակ մ'է արձակեց. —
ի՞նչ կայ, ի՞նչ կայ. հարցուց կթէլ գարհուրած:
— Ա՛ռ, կարդա՛, ըստու Մանֆրէտ սոսկալի
մագաղաթը յուսահատարար սիրուհւոյն ներ-
կայացնելով:

կթէլ շուտ մ'առնելով՝ հետևեալը կարդաց.
• կթէլ առ Մէսայն, դու որ Ա. Ստենին իշ-
խանութեան դէմ մեղանչեցիր. ե'կ իդ ասաս-
տան: Մէք, անմահին խորհրդաւոր դատա-
ւորքս, կը հրամացեմք քեզ որ ներկայ ամսոյս
մէջ դաս ու քու անարդած դէրադոյն ատե-
նին առջև հաշխւ տաս: Ե'կ, ե'կ: — Ամսոյս
վերջին օրը, կէս գիշերուն, Բրակայի և Մէ-
սայնի ուղւոյն դլուխը:

Պ.

Յաջորդ Յունիս ամսոյն առաջին օրը Մէ-
 սայնի ծերունի սեպուհը կանուխ ելնելով՝ ու-
 րախ զուարթ պատուհանը բացաւ ու դաշ-
 տերը դիտել սկսու : Մի քանի օրէ ի վեր Հեն-
 րիկոս որդին պատերազմէն դարձեր էր, բա-
 րեբաստիկ ալեւորը հրձուանօք կը խորհէր ըն-
 տանեկան քաղցրավայել զեղմանց, և գստերն,
 ու որդւոյն վրայ . և մերթ ընդ մերթ Մանիք-
 րէտ կոմսին իսկ արիական և ազնիւ կերպու-
 րանը իւր շլացեալ աչերուն առջև կուգոր :
 Այն օրն երկինքը պայծառ էր . ճաճանչա-
 գեղ արեգը հորիզոնէն վեր կը բարձրանար, և
 զիւր ուկեփայլ ճառագայթներն յորդառատ
 կը տեղար հեռուն բարձրացած հրաթսական
 լերանց վրայ : Արդէն մի քանի աղաղակներ
 կը լսուէին, կենդանութիւն ու շարժում ըս-
 կըսեր էին դաշտաց մէջ տեսնուիլ . և դիշա-
 կեր թռչունք՝ իրենց առանձնութիւնները լը-
 քանելով՝ առառօտեան զովսախւդ և ջինջ հո-
 վով՝ հեշտութեամբ կ'որորուէին օդուն մէջ :
 Վերան կողերուն վրայէն կախուած սակաւա-
 թիւ մատաղատունկ թուփերը, ամառուօն
 արեգին առաջին ճառագայթներէն դարձաւ-

զեղ կը փայլէին . մի քանի գունաթափ ծաղկունք ալ՝ ի կեանս վերադառնալ կը փորձէին՝ ժայռերու ճեղքուածներուն մէջ զեփիւոին հետ գոգցես խաղալով : Մերթ ընդ մերթ հովիր մը կ'անցնէր բերդին ստորոտէն՝ արիական ձայնով Գերմանական նուագ մ'երդելով : Յաճախ ևս , շրջակային դիւղերէն աղջիկ մը սեպացնեալ ձանապարհէն ելնելով ուղւոյն թփերուն առաջին ծաղիկները կը քաղէր : Օդուն մէջ անսովոր հանդարտութիւն և յատակութիւն կը տիրէր : Ծերունի սեպուհը ընդ երկրո մըտաշխորհ դիսեց աչքին առջև սրարդեալ խաղաղաւէտ տեսարանը , և անցած օրերու մըտածութեամբ ինքպինք որորելին , առաւտօտեան առաջին բուրմանքը չնչելին , և անցելոյն յիշատակօք բերկրելին յետոյ , յանկարծ պատուհանին հեռացու՝ որդւոյն սենեակն երթալու համար : Բարեքաստութենէն կարծէս զօրութիւնը կրկնապատկեր էր , սանդղէն արագութեամբ վեր երաւ , ու դուռը բանալով ներս մտաւ : Մարդ չկար սենեկին մէջ . սուկայն ծերունին չղարմացաւ , զիտէր իւր զաւակացը իրարու վրայ ունեցած դորովալիր սէրը : Մի քանի օրէն ի վեր միայն Հնրիկոս հայրական դղեակը վերադարցած էր , որով որդին և դուստրն իրարու շտո մը դալտնիքներ հաղորդելու կարօտութիւն ունենալնուն հաւ-

մար՝ յարմար ժամանակէն օդուտ քաղելով առանձին տեղ մը քաշուած ըլլալու էին : Ուստի աղջկանը սենեակը վաղեց . դուռը կիսաբաց էր : Վստահ էր երկուքին ալ հոն ըլլալուն վըրաց . ականջ տուաւ ։ բայց ձայն մը չը լսելով սիրտն ի դող՝ դուռը հրեց . ներս մուաւ . ոչ ոք կար հոն : Սենեկին շուրջը ընդ երկար աչքերը զարմանօք դարձոց և ապշելով անսովոր անկարգութիւն մը նշմարեց հոն :

Եթէլի և Հենրիկոսի բացակայութիւնը շատ մը բնական սպատճառներու կրնար տրուիլ առաւոտեան զովութենէն ու բնութեան գեազեցկութենէն հրապուրուելով կթէլ և Հենրիկոս հաւանականապէս դուրս ելած ըլլալու էին՝ ընդ հուպ վերադառնալու դիտմամբ : Այսու ամենայնիւ Մէսայնի սեսպուհին սրտին վրայ դաղտնի սարսափ մը տիրեց , այն ժամանակ միայն յիշեց իւր դստեր մի քանի օրէն ի վեր տիսուր ու մոտտանջ երեխը . յիշեց նաև Հենրիկոսի վերադարձէն սկսեալ իւր զաւակացն իրուէ վախով զգուշանալը , և Մանֆրէտի այցելութեանց օր ըստ օրէ նուպիլը : Սոցա նման հագար տեսակ խտոնաշվոթ յիշատակներ մտացը վրայ խռնելով ա'լ համոզաւեցաւ թէ ընտանեացը դլուխը մեծ աղէտ մը հասած ըլլալու է : Ծերերը սովորաբար ուշիաբամիտ և երկչոր ըլլալուն համոր՝ Մէ-

տայնի սեպուհն ալ ոնցավիք ելի զարդուրանքի
մը որս եղաւ , և որչափ որ ջանաց՝ անկարելի
եղաւ իրեն՝ չարադռչակ նախազգացումները
մտքին հեռացնել : Ի զուր դղեկին ծառայնե-
րին տեղեկութիւն խնդրեց . առած սրատաս-
խաններով սիրուը չանդարակին մէջ կէս գի-
շերուն դանուող պահնակը միայն ըստ թէ
մերսցիշեալ ժամուն որոշ տեսեր է երեք ան-
ձանց դղեակին ելնելով լերան ճանապարհին
դաշտն իջնելնին : Անդուհը խուցը մտաւ վե-
րըստին , առաջուընէ աւելի խուլացոց :

Այն սենեակը մասնաւոր տեսք մ'ունէր .
գրան աջակողմը վառարան մը կար , որոյ վր-
բայ կը փայլէր ողորկած պողովատէ հայելի մը .
սոցա դիմացն էր գրուած անկողինը՝ մետաք-
սէ կապուտակադոյն կերպասէ վարագուրով
մ'ամին կողմէն ծածկուած , գրան ճախակող-
մը կը բացուէր պատուհան մը , և դիմացը .
ըստ հաճոյից ծերունի սեպուհին , նոր և փայ-
լուն զինուց ամբողջ քաղուածոյքը կային :

Ո՞վ դիաէ արդեօք խեղճ ծերունին ո՞րչափ
առեն սցն դիրքին մէջ կեցաւ , և այն տիմրա-
տոչոր պահուն քանի՛ քանի՛ դառնակսկիծ խոր-
հուրդներ պաշարեցին զինքը : Ընդ երկար ցա-
ւալի թմբրութեան մը մէջ միաց , աչքերն ի

վայր սեւուած , մարմինն անշարժ : Դրսէն շրջուկ մը հատնելով՝ նորա խորասոյդ մտածութիւններէն չէր զարթուցանէր զնա : Մերթ ընդ մերթ ձեռքերն ուժդին կը կարկամէր : Իւր գունաթափ ճակտին վրայէն կարծես մը թին ամս մը կ'անցնէր , և շառագունած շուրթ ները կը խածնէր :

Յանկարծ արագընթաց քայլերու ձայնը լըսելով , Սևպուհն ակամայ շարժում մ'ըրաւ , ու դրան նայեցաւ իրը պատասխանի մ'ակըն կալութեամբ : Մթութեան մէջ ընդ աղօտ աշքին զարկին Հէնրիկոսի և Մանֆրէտի դաշտոցն դէմքերը : Կախ և առաջ կմէլլի հայրը , ինքզինքը վաղանցիմէ անրջոց խաղակիկ և զած կարծելով շլացեալ աչերը մի քանի անդամ արագութեամբ շփեց : Կախ Մանֆրէտ մտաւ ներս , և յետոյ Հէնրիկոս : Ծերունին զնոսա տեսնելով տարակոյսները փարատեցան , և նատարանէն վեր ոստնլով՝ դողդոջուն ձեռքերը կարկառեց միանդամայն որդւոյն և առ այն՝ որ իւր փեսացն պիտի ըլլար :

— Աղջիկս ո՞ւր է , աղաղակեց հեկեկալով ու արտասուաթոր աշօք . աղջիկս ո՞ւր է . ի՞նչ ըրիք աղջիկս . ինչո՞ւ դղեակը չէ . ինչպէ՞ս կը լըլլայ որ առանց նորա սենեակս կը մտնէք :

Այս հարցմանց երկու երիտասարդք պասպանձելով շուարած աչերով սեսլուհին կը նայէին :

— Զէ՛ք պատասխաներ , կրկնեց ընդ հույզ
Նէք ծերունին : Միթէ կթէլ քու քոյրդ չէ՞ ,
Հէնրիկոս , միթէ աղջիկո քու խօսեցեալդ չէ՞ ,
Մանֆրէտ : Երկուքնիդ ալ կը սիրէք զնա . եր-
կուքնիդ ալ սիրեի էք նմա : Միթէ նորա բախ-
տին անտարբեր կրնա՞ք ըլլալ : Զբաց որ իմ
հայրական վստահութեամբ ի զուր ձեր քա-
ջութեան վրայ յոյսս գրած ըլլայ . . . :

— Հա՛յր իմ . . . թոթովեց Հէնրիկոս :

— Հա՛յր իմ . . . կրկնեց Մանֆրէտ :

— Բայց ո՞ւր է , ո՞ւր է աղջիկո . ինչ եկա-
զ խուն . ինչո՞ւ հարցմանցո չէք պատասխա-
ներ : Խօսէ՞ , Հէնրիկոս . ես ծեր եմ , բայց
բաջասիրտ եմ : Ամէն բան պիտի ըսես ինձ ո-
՞ւր է աղջիկո . ո՞ւր է քոյրդ :

Եւ երբ տեսաւ թէ Հէնրիկոս շարունակ լուռ
կը կենայ .

— Մանֆրէտ , ըստւ , դիտեմ որ կթէլը կը
սիրես և զիս ալ կը սիրես : Ուստի սա աղէ-
կատուր անստուգութեան մէջ ընդ երկար մի
թողուր զծերունիս . անկեզծ եղի՛ր . յինչն
բան մի՛ ծածկեր . կուզեմ ամէն բան դիտ-
նալ : Ա՛հ , ո՞ւր է իմ բարեսիրտ աղջիկո , իմ
թշուսու կթէլը . կը յիմարացունէք զիս երբ
ձեր այդ անագորոյն լուռթիւնը աւելի շա-
րունակելու ըլլաք : Յանուն քու հօրդ , ո՛
Մանֆրէտ , կը սրազտուիմքեզ , ըսէ՛ , ըսէ՛ ինձ
ամէն բան . . . :

Բայց ոչ Մանֆրէտ և ոչ ալ Հէնրիկոս կ'իշիւին լուսթիւնը լուծել, և տարսափն հետքզնետէ աւելի կը տիրէր ծերունոյն սրտին վրայ :

— Զէ՞ք ուզեր պատասխանել, աղաղակեց յայնժամ ձեռքերն երկինք վերցունելով : Գա՞զէ ուրեմն, ու՞ն ձեզ կարօտութիւն չունիմ . . . մինակ կ'երթամ ես . . . թողէ՛ք զիս : Խնչոր ալ ըլլայ պիտի խմանամ թէ աղջիկս ի՞նչ եղու . և նոքա՝ որոց հանդիպելու ըլլամ, գոնէ ձեզ ովէս հօր մը վիշտերը չարհամարհեն, Հէնրիկոս, Մանֆրէտ, թողէ՛ք, պիտի երթամ ես :

Նրիտասարդք ծերունոյն դիտաւորութեան ընդդիմանալ ուզեցին . ուստի դրան առջև կեցան, և ձեռքերին բոնելով՝ տղաղակեցին որ չերթայ : Բայց ալեոր սեպուհն յամառութեամբ հետեւեալ հարցումը կը կրկնէր անդադար . «Ո՞ւրէ Եթէլ, ո՞ւրէ աղջիկս» : Հուսկ ուրեմն, Հէնրիկոս ինքզինք զօրացունելով, վշտակութեամբ Մանֆրէտի նայեցաւ, և սկսուհը մէկ զի քաշելով՝ համառօտիւ պատմեց թէ Եթէլի մի քանի օր յառաջ զաղտնի հըրամն մ'եկեր էր զաղտնի Ասենին ներկայանալու, և թէ ինքն ու Մանֆրէտ յորդորէր էին զնա դհրամանը կատարելու :

— Ահքը, հարցուց ծերունին :

— Ուստի , հայրս , այս գիշեր Եթէլ , Մանք-
րէտ և ես նշանակեալ տեղը գացինք :

— Ի՞նչ ըրիք հոն :

— Անդ , տեսանք երեք սևազգեստ ան-
ձինք , որ Եթէլի հրամայեցին իրենց հետեւ-
լու :

— Ինչո՞ւ դէմ չկեցաք . . . :

— Մենք ալ սյնպէս կը մոտածէինք . բայց
խորհեցանք նաև որ անվստահութիւն ցուցնե-
լով կրնացինք դժբախտաբար Եթէլի դատը
կորուսել :

— Ուստի թողուցիք դնա . . . :

— Այո՛ . այն երեք մարդոց հետ հեռացաւ :

— Վայ ինձ . . . :

— Հայրս , Եթէլ անմեղ ըլլալով , վաղն ամ-
րող մեր գգուանաց կը վերադարձունեն դնա ,
և մեր հիմակուան վշտակրութիւնն ալ կը մոռ-
նանք :

Այս կարճ խօսակցութեան ժամանակ , Մանք-
րէտ ոտքի վրայ անշարժ կեցեր էր դրան քով՝
անբարբառ . և թախծաղէմ : Սեպուհն Հէնրի-
կոսէն հեռանալով նմա մերձեցան , ու :

— Մանքրէտ , ըսաւ կտրուկ ձայնով , Եթէլ
տանողներուն «Փրօհն պօթ» ըլլալն անտարա-
կոյս . իմացած ըլլալու ես : Կարծե՞ս որ այդ
մարդերն՝ Անկախ-Դատաւորաց օդտին հա-
մար միայն աղջիկս առին տարին : Մանքրէ՛տ ,

դու իմէլիս խօսեցեալն ըլլալովդ՝ այս առթիս
մէջ անխորհրդաբար սէտք չէիր վարուիլ։ Գի-
տե՞ս, միտքս ի՞նչ խորհուրդ ինկաւ։ Եթէ այդ
մտածութիւնը քեզ դար, արիւնդ զլուխդ կը
վարդէր, արիւնաներկ արտառնք աչերդ կը
տոշորհին, ձեռնդ՝ որիդ երախակալը կը սպա-
կէր։ Ո՞հ, սոսկալիէ խորհուրդս, Մանֆրէ՛տ։
— Գիտե՞ս, Մանֆրէ՛տ յաւէլ ըսելու, դող-
դոջուն ձեռքերն երիտասարդին բազկին վրայ
դնելով, որ Անկախ-Դատաւորաց ընկերակ-
ցութեան հզօրագոյն մարդը, նա՝ որ այդ ըն-
կերութեան ամէն անդամներուն վրայ բացար-
ձակ իշխանութիւն մ'ունի, Գարշօյի սեպուհն-
է։ դիտե՞ս նաև որ բոլոր քրիստոնեայ իշխա-
նաց մէջ ամենէն վատանուն մարդը Գարշօյի
սեպուհն է, և թէ նա, իւր խղճին խայթե-
րէն հալածուելով ու ամէն պահուն մնորդկան
վրէժխնդրութենէն կամ Առտուածսցին ար-
դարութենէն վախնալուն համար, դիշեր ցո-
րեկ ամէն տեղ երեք « ֆրօհն պօթ » կը պա-
հէ իրեն քով։ Գիտե՞ս հուսկ ուրեմն, Մանֆ-
րէ՛տ, որ նա՝ զաղջիկս խնդրեց իւր ի կու-
թիւն, և ես ալ մերժեցի խնդիրը, և թէ զնա
ուրիշ կերպով ստանալու յօյս չունի, բայց մի-
այն բռնութեամբ։

Մանֆրէտ այս յայնութիւնն յանկարծակի
լսելով քարացած մնաց։ Խակ սեպուհն, որ

նախ սողջկանը կորստեան լուրն առնելով
կարծես մշատեր էր, յանկարծ զօրացած կանդ.
նեցաւ, և որդւոյն ու փեսային դառնալով
միանդ ամայն,

— Կ սեցէ՞ք և ըստու, այնպիսի ձայնով, զոր
սրտմառութիւնն ու զայրոյթը գողցես կը զօ-
րացոնէին. երկուքնիդ ալ իմ զաւակներս էր.
ուստի երկուքնիդ ալ ինձ սիրտի հնազանդիք :
Անունս և ընտանեաց պատիւն արաւուեցան :
Ամէն տեսակ զոհալութեամբ՝ սա արաստա ար-
եամբ ողէտք է ջնջել : Անտարակոյս վտանգա-
լից է ձեռնարկութիւնն . վասն զի հզօր և զար-
հուրելի թշնամեաց հետ դործ սիրտի ունենանք.
դուցէ կոռույն մէջ ինկնանք դիտուպաստ .
բայց հոգ չէ . եթէ դուք ինձ նազատտելու քա-
ջութիւնն ունենաք, վրէ ժխնդրութիւնը փար-
ձելով միայն վասոք ու պատիւ կ'ստանանք :
Հէնրիկո՛ս, Մանֆրէտ, կ'ընդունի՞ք զայս :

— Սադ գործը Մանֆրէտի և ինձ կը պատ-
շտի, պատոսխտնեց Հէնրիկոս, այս վայրէե-
նէս սկսեալ այնմ կը նուիրենք անձերնիս դըլ-
խովին, և ապահով եղիր, ո՞վ հայր իմ, որ
մեր թշնամիքն ընդ հուսկ կ'իմանան մեր վո-
րէժխնդրութեան սաստկութիւնը . . . :

— Քա՞ջ է ուրեմն, ըստու ալ, որ սեպուհը,
բայց Ե՛ս ալ կ'ուղեմ ձեզ ընկերանալ, և Աս-
տուծոյ օդնութեամբը որդիական սէրս կը զօ-

զայնէ զիս . իսկ արիութիւնը մշտավառ է յիս:

Մէսայնի Սեպուհը զայս ըսելով՝ կախուած զէնքերէն աղնուական վեհութեամբ քաշեց երակացն սուր մը , զոր երբեմն իւր տկար ձեռնդ հազիս հաղ կրնար վերցունել : Երիասասարդք ալ նորա օրինակին հետևեցան , ու զինեալ երդուան իրենց թշնամիներն հալածել , ու յափշտակաց ձեռքերէն պէմիլը կորդել :

Ե.

Տարի մամբողջ անցեր էր , և Մէսայնի գրդակին տեարց պիճակը փոփոխութիւն մը չէր իրած : Կթէլ անյայտ էր տակաւին : Ալեոր ծերաւոյն սպասաւորքը՝ վերցիշեալ եղելու ինեանց տեղեակ չըլլալով՝ յաճախ իրարու կը հարցունէին թէ իրենց տիրուհին ի՞նչ եղեր էր . բայց բան մը չին կրնար իմանալ : Միայն սու դիաէին որ , Եթէլի աներեւոյթ ըլլալն յետոյ , ծերունի Սեպուհը . տան ու հինգ օրը մէկ մը , կէս գիշերուան ատենները , որդւոյն Հենրիկոսի և Մանֆրէտի հետ դզեակէն կ'ելնէր , և արեգական ծառքելին յետոյ կը վերապատճառ

Նոցա դիշերային արշաւանքը , որոց պատճառ-
ուը խորհրդաւոր գաղտնիք մէր եղած Մէսաց-
նի հպատակաց շատին համար , բազմաթիւ
տարօրինակ զրուցարութեանց առիթ եղած
էին : Թէպէտ և ամենքն յարատե , հետաքըլլիք-
ութեամբ նոցա սովորական ընթացքին դադա-
նեաց տեղեակ ըլլալու հետամուտ կ'ըլլացին .
առկայն ոչ ոք կրցեր էր իմանալ դայս :

Ծերունի Սեպուհը կարծես երիտասարդա-
ցեր էր . ոյտերը սրտին եռանդէն ներկուեր
էին . երիտասարդական աշխոյժը կը տիրէր նո-
րա վրայ , յոդնութիւնն անծանօթ էր նմա-
րած արշաւանքները գողցես կը բերկրեցու-
նէին զնա : Տարիէ մ'ի վեր որքան բաներ տե-
ղի ունեցեր էին : Սեպուհն , Հէնրիկոս և Ման-
ֆրէտ Անկախ-Դատաւորաց ընկերութեան մէջ
մտած ըլլալով , իրենց ընդունելութենէն ի վեր
դադտնի Ատենին ամեն նիստերուն անփրես
ներկաց գտնուեր էին : Արդեօք ի՞նչ դիտա-
ւորութեամբ այդ ընկերակցութեան անդա-
մակից եղեր էին : Աստուած միայն գիտէր
գոյն : Այս բանիս վրայօք մէկու մը բան չէին
բած . ասկէ զատ առանձին ասլրելով իրենց
բարեկամներէն հեռացեր էին ի սպառ . Ման-
ֆրէտ գղեակը կը բնակէր . և երկար առենէ
ի վեր հիւր մասսնջականութիւն չէր գտուծ
այդ բերդին մէջ : Եղական կեանք մը կը վաս-

թէին նոքու : Քիչ կը տեսնէին զիրար . իրարու
հետ բնաւ չէին խօսեր . և կտոմ կարճ խօսքե-
րով միտքերնին կը հաղորդէին իրարու : Ման-
ֆրէտ խիստ գունաթափ եղեր էր . խորին
ախրութիւն մը կը տիրէր վրան . և հրատոչոր
արտառւնքն այտիցը վրայ տրտմութեան և ցա-
ւոց անջնջելի հետքերը թողացեր էին : Եթէ
լուս բախտի Հէնրիկոսի հանդիսէր առանձին
տեղ մը , յուսահատարար նորա ձեռքերը սեղ-
մելով , յանկարծ իւր անողոք ցաւերը դուրս
կըզեղուր : — Եթէ՛ լ , Եթէ՛ լ , կ'ըսէր հեկեկալով-
ինչո՞ւ տկարացանք , ինչո՞ւ թողացինք զնու-
թէ , վայ ինձ , վայ ինձ : Հէնրիկոս , երկու
հողի էինք մեք , կրնայինք նորա վրայ հսկել ,
կորու էինք պահուանել ու սրաշտանել զնու-
թէ դիսէ հիմա ուր է . դուցէ մեռա՛ծ , դուցէ
սրդեա՛ր ըլլայ :

Երբ սա երկրորդ մտածութիւնը մտքէն ան-
ցընէր , վայրենական կայծակիներ աշացը մէջ
փայլատակելով , մահառիթ սարսուռ մը մտ-
դերուն տակ կ'ընթանար : Հէնրիկոս ի զուր
կը ջանար հանդարտեցունել զնու , մօտալուտ
և արիւնահեղ վրէժինդրութեան ակնկալու-
թեամբը . բայց Մանֆրէտի յուսահատութիւնը
Հէնրիկոսին տուած մսիթարանքէն հզօրագոյն
ըլլալուն համար՝ այդ խորհրդով շատ օրեք
բուռն դրդութեան մը ուր կ'ըլլար :

Գվազեր մը , ամէն մարդ քուն էր եղած գլուխուկին մէջ , պահնասկը միայն ամենէն բարձրարերձ աշտարակին վրայ կը հսկէր և կէս դիշերը սակաւ մ'անցեր էր , գուրսն ուրիշ ծացն չէր լսուեր բաց միայն հեղեղին միօրինակ կարկածիւնը որ անգնդէն մանչելով կը բարձրանոր : Բերդին մեծ դուռը անձայն բացուելով Մանֆրէտ , Հէնրիկոս ու ծերունին դուրս եցեր էին : Գորշագոյն երկայն պատմուճաններ հագած էին . մինագոյն և բայնեղը գըլխարկ մը դլուխնին կը ծածկէր , և դէմքէրնին թաւիչէ դիմակի տակ պահելու փոյթն ունեցեր էին :

Ճանապարհէն դանդաղաքացը իջնելով լեռան ստորոտը գտան երեք ծփ , զոր իրենց համար պատրաստեր էին : Խրաքանչիւր ոք անքարբառ ծիռն վրայ հեծնալով արշաւաց այր աներեւթացան : Անրեր և ամայի դաշտաց մէջ երկու ժամու չափ այնպէս արշաւեցին , առանց ուշ դնելու սոսկալի դահամբէժներու՝ որոց քովին կ'անցնէին , և ոչ ալ խռայատակ հեղեղներու՝ որոց վրայէն անցնելու հարկադրուած էին : Պոհեմիոյ գաշտօքէից տխուր տեսքը նկարագրելն անկարելի է : Մանուանդ այն պահուն , լուսնի աղօտափացը նշոյլովը , բնութիւնը կարծես տարօրինակ կերպարան մը կը դգենու : Ամէն կողմէն ու-

ըիշ բան չես տեսներ բայց միայն կարճաբերձ
թուփեր , ողորմելի դալարիք , ապօտածուա
հող մը , որոյ վրայ քայլելը գրեթէ անկարելի
է . անոր համար ամէն քայլափոխին երեք հեծ-
եալներուն ձիոց ռատքերը ժայռից բաղիսելով
հազարաւոր փայլակնացայտ կայծեր կը հանի-
ին , և կենդանիք իսկ ճանապարհին խոցրն-
դուաներին սարսափած՝ կանկ կ'առնէին : Բայց
հեծեալներն անհամբերութեամբ նոցա զօրա-
ւոր հողերը մորակելնուն հստար՝ ընդ հուպ
նոր եռանդեամբ կը տրոփէին : Այդպէս ան-
դադար արշաւելնէն յետոյ՝ բազմաթիւ միա-
կտուր յատաքարերէ շուրջ պատեալ տեղ մը
հասնելով՝ իսկոյն ձիերէն վար իջան :

— Հո՞ս է , ըստւ Մէսայնի սեպուհը :

— Բայց մարդ չկայ , կրկնեց Հէնրիկոս :

— Սպասե՞նք . . . պատուախանեց Մանֆրէտ :

Ժայռի մը վրայ նստան , ու կ'սպասէին :

Մանֆրէտ անհամբերութիւնն ընկերացը
չէր յայտնէր , սակայն տեղն ալ չկարենալով
կենալ , շարունակ կերթար կուդար՝ ամէն շր-
շուկի ականջ տալով : Իսկ ծերունին հանդար-
տութեամբ բազմած տեղէն չէր շարժեր : Բա-
զուկները կրծիցը վրայ ամփոփած , զլուխու-
ի վայր խոնսարհած , կարծես իւր շուրջն եղած
իրերուն բնաւ ոչ չղնելով՝ Հէնրիկոսի և Մանֆր-

թէտի խոկ չէր նայէր թէ ի՞նչ կ'ընէին : Բայց
Հէնրիկոս յապուշ կրթեալ հօրը վրացէն աչքերը
չէր վերցունէր : Նորա լոռոթիւնը և անշար-
ժութիւնը կը խռովէին զինքը : Մերթ ընդ մերթ
շարագուշակ խորհուրդ մը մորէն կանցնէր .
կը կարծեր թէ հայրը խելագար եղեր է :

Վայրացս տեսարանն ալ այն երեք անձանց
սարսափելի կերպարան մը տալով զնոտա այն-
պէս անշարժ և անբարբառ տեսնողը՝ հոն տե-
ղի ամայի ժայռից խորհրդաւոր և չար ոգիները
կրնար համարիլ :

Յանկարծ Մանֆրէտ , որ եկեր նստեր էր ,
տեղէն ոստնլով՝ ընթացաւ հոն , ուստի կը նըշ-
մարուէր իրենց հետևած ուղին :

— Ոտքի ձայն լսեցի , ըստաւ ընկերացը դառ-
նալով :

— ի՞նքն է , աղաղակեց Հէնրիկոս :

Ծերունին տեղէն շարժեցաւ :

Մանֆրէտ ետ դառնալով երեքն ալ իրա-
րու մերձեցան . յայնժամ , իրենց պէս երկացն
սպատմուճան մը և լայնեզր դԱսարկ հագած-
մարդ մը տեղւոյն մուտքն երեցաւ , դեղեցիկ
ձիու մը վրայ նստած :

Թէպէտե լուսինն նոյն ատեն ամազի մը ետին
ծածկուեր էր , սակայն կրցան երեք ուղևոր-
ները տեսնել , և ձիէն վար իջնելով՝ նոցա
մերձեցան , ու .

- Դո՞ւ ես, Մաթիաս, ըստ Հնրիկոսի :
- Ես եմ, պատասխանեց, ասի :
- Դո՞ւ ես, Կօթֆրայտ, յաւել՝ Մանֆրէտի
կողմը դառնալով :
- Ես եմ, պատասխանեց Գրօնչթատի ու
պուհը :
- Դո՞ւ ես, Պէրթօլու, ըստ հուսկ ուրեմն
ձեռնն իթէլի հօրը կարկառելով :
- Ես եմ, պատասխանեց ծերունին, ինք-
դինքը զօրացունելով իրեն կարկառուած ծեռ-
նը բռնելու համար :
- Քաջ է, ուրեմն, շարունակեց նորեկ
մարդը. ձեր պարտաւորութիւնները ճշդիւ
կատարելնուդ և ինձ ծառայելու փոյթ ցուց-
կելնուդ համար պիտի վարձատրեմ զձեզ.
բայց երկար ժամանակ հոս չկենանք. ձի հե-
ծէք ու երթանք :
- Ուր որ երթաք, պիտի հետեխնք ձեզ,
պատասխանեցին Հնրիկոս, Մանֆրէտ և ծե-
րունի սեպուհը միանդամայն, իրենց ձիերուն
վրայ նետուելով: Կորեկ մարդուն օրինակին
հետեւելով՝ հեռացան անտի :
- Հետեւեալ իրողութիւնքն աղէկ մը հասկը-
ցունելու նպատակաւ հարկ կը համարինք կան-
խաւ իմացունել որ Անկախ—Պատաւորաց ըն-
կերակցութեան գլխաւորներէն մին եղող գար-
չոյի սեպուհը՝ իւր ամեն արշաւանաց մէջ երեք

«Փրահնապօթ» ուներ հետը, զորո իւր արիւն-
ուուշտ դիտառութեանց լրմանը համար կը
գործածէր։ Նոցա օգնականութեամբն սպա-
ներ էր Մանֆրէտի հայրը, և դարձեալ նոցա
ձեռքովը դիմէլ առեանգեր էր։

Մէսայնի սեպուհը զայս քաջ դիանալով, Ան-
կախ-Գաստառբաց ընկերակցութեան մէջ մըտ-
նելու ատենը, միաքը դրած էր Գարչօյի սե-
պուհին դիշերացին արշաւանաց ընկերներուն-
հետ հաղորդակցութիւն ունենալ, և զնոսա
հրապուրիչ խոստումներով համազել որ մէկ դի-
շերուան համար թոյլ տան իրեն, որդւոյն և
Մանֆրէտի նոցա սբաշտօնը վարելու։

Ծերունացն առաջարկութեան դէմ խոչըն-
դուս մը չէր ելած, թէ պիտե նա կընար ոոկ-
տիլս ամեն դժուարութեանց յաղթել։ Ուստի
Գարչօյի սեպուհը՝ իրեն հետեւզ անձանց իշ-
թէլի հայրը, եղբացը և խօսեցեալն ըլլալնին
չըր դիտէր։

Գրեթէ իրենց առաջուան եկած ճամփուն
գրայ սկսան արշաւել։ Հնրիկոս՝ սեպուհին
աջակողմէն կ'երթար, Մանֆրէտ՝ ճախա-
կողմէն, իսկ ծերունին նոցա ետելն կու-
գար։

Ուստի դղեակէն երկու հարիւր քայլ հե-
ռուէն կ'անցնէին։ Բերդը սեսնելով՝ կարծես
Գարչօյի սեպուհը խռավեցաւ։ Եթէլի հայրն

ալ այս առիթէս օգուտ քաղելով՝ խօսակցութեան մոտաւ :

— Մէկ ժամէն 'ի վեր շարունակ կ'արշուենք,
ըստ սեպուհին, և սակացն, Տէ՛ր իմ, ձեր
մեզմէ ակնկալած ծոռայութեան տեսակը տա-
կաւին չ'յայտնեցիք :

Վերունին այս խօսքերն հանդորու և ան-
յոյզ ձայնով մ'ըստ :

— Զարմանալի՛ բան, պատասխանեց Գար-
չոյի սեպուհը, միթէ այնչափ անդէ՞ւ էք որ
չկարենաք գիտաւորութիւնս դուշոկել . և
միթէ արդէն մոռցե՞ր էք այն գիշերը զօր մէկ-
տեղ անցուցինք անցեալ տարի, զրեթէ այս
առեններս :

— Այս', այս, կը յիշե՞նք, պատասխանեց
Մանֆրէտ :

— Ես ալ կը յիշեմ, կրկնեց Հենրիկոս :

— Աւրեմն, բարեկատմքս, գրեթէ միւ նոյն
ծոռայութիւնն այսօր ձեզմէ կը պահանջեմ :
Վնտարակոյս չք ճանչեր Տէլմօնտի սեպուհին
դուստրը . բայց ժամէ մը զնա տեսնելով՝ կը
հաւանիք թէ բոլոր Գերմանիոյ մէջ նորս պիս
ամենագեղ աղջիկ չ'կայ :

Բարէ՛ ըստւ Հենրիկոս, որ զուարթ ըլլալ կը
կեզծէր կ'երևի թէ, Տէ՛ր իմ, երկար ատեն հա-
ւասարիմ չք մնար ձեր սիրուհեաց : Եւ ներելի
է ինձ, հարցունել թէ ինչ եղաւ արդ եօք միւսը

— Անի՛, չնորհագեղ աղջիկ մ՛է դվեռակս պաշեր եմ, և այսու ամենայնիւ յաճախ կը ուեռնուիմ նորա հետ :

Ծնթերցողները գուցէ զարմանան Գարշօյի Սեպուհի և նորա պիրոհնալոթերու մէջ եղած ընտանութեան վրայ . բայց յիշելու են որ նորա՝ Սեպուհին գտղանի ոճրագործութեանց մէկ մասին տեղեակ ըլլալնուն համար , նոցա ազատախօսութեանը վրայ բնականապէս ուչք գոցելու էր , ապա թէ ոչ ուրիշ առթի մէջ դայլը խստիւ կը սլատուհանէր :

Մակաւաթիւ խմբիս կանկ առած ժամանակը առաւոտեան ժամը չորսն էր : Արշալոյսը ծագելու վրայ էր , երբ ձիերնէն իջան , և Մէսայնի երեք բնակիչքը Գարշօյի Սեպուհին քով խմբեցան :

— Հիմա , բարեկամքս , ըստու Սեպուհը , ձեզնէ մէկը հո՛ս կենայ . իակ միւս մնացած երեկուքն ալ քիչ մը հեռու տեղմը պահուին : Դու կօթֆրայտ , և դու Մաթիաս , ինձ հետ եկէ՞ք :

Պէրթօլտ , դու ալ ճանապարհին վրայ կեցիր , և Տէլմօնտի դուստրը աեսնելուդ պէս՝ մեզ իմաց տո՛ւր :

Այնպիսի իշխանական ձայնիւ այս հրամանները տուու , որ անմիջապէս հնազանդելու էր . սակայն ոչ կօթֆրայտ , ոչ Մաթիաս և ոչ ալ Պէրթօլտ տեղերնէն շարժեցան : Սեպու-

հր պահ մը գարմացաւ «Փրօհնապօթերու» իւր հրամաններուն չհնազանդելնուն վրաց, և դարձ Քաղ կրկնելով ըստաւ :

— Ի՞նչ է այս, կարծեմ թէ այսօր իրար չենք հստակնար, և կը թուի թէ չլսելու կը զարդէք . . . : 0՞ն, իւրաքանչիւր ոք տեղն երթայ, և մի՛ մոռնաք մանաւանդ հանդերձեալ վարձատրութիւնը կամ պատուհասը :

Այս երկրորդ հրամանէս յետոյ մի և նոյն լուութիւնը գարձեալ տիրեց :

— Կրողը տանի՛ զձեզ . աղաղակեց յայնժամ Սեպուհն անհամբերութեամբ . ի՞նչ կ'ու զէք ըսեք Միթէ տաղտուկէ ձեզ կեանքը . և միթէ հարիէ ինձ վիճակեցունել զձեզ Գրօնշթափի Սեպուհին բախտին . . . : Զեզ կ'ըսեմ . սարսափեցէք վրէծ խնդրութիւնս մտածելով . զիս անպատուհաս ծաղրել չըլլաբ : Մաթիսս, դու ալ ե՛կ, եօթ ֆրայտ . խել դու, Պէրթօլտ, թէ որ զմեզ մստնես, գիտնաս որ քու եղբարցդ Անկախ - Գատաւորներու դանակներուն կրմառնեմ զքեզ :

Գարշօյի Սեպուհը մի քանի քայլ յառաջեց, բայց երեք մարդոց իրեն հետևելու պատրաստուիլը տեսնելով՝ կեցաւ : Զարհուրանքը տուկաւ, սրախն մէջ կը մտնէ . մինակ էր : Դաշտաց մէջ, զիշերուան ատեն, մարդկան բնակութիւններէն գարսախ մի հեռի, և ինքդինքը

ողաշտպանելու համար վոքք դաշոյնէ զատ ու
րիշ զէնք չունէր : Զարհուրած աչերով շուրջը
նկատեց . նոյն ատեն առաւոտեան տռաջին
լյատվը ընդ ազօտ կրնար նշմարել շուրջը գըտ-
երուած առարկայները :

Գալոցի Սեպուհն աչերը նոցա վրայ դար-
ձուցած ատեն , Մանֆրէտ , Հէնրիկոս և ծե-
րունին արդէն դիմակնին քաշեր նետեր էին :
— Իւր սովորական ընկերները ըլլալնին տես-
նելով արձանացած մնաց . ։ ։ ։ Պահ մը դու-
ցէ ինքզինք խափել ջանաց , մտածելով որ ի-
րեն տրուած մարդոց անվործութեան պատ-
ճառաւը միայն իւր հրամանները խկոյն չէին
իստարուած : Բայց այդ պատրանքն իսկոյն
ժարանեցաւ . զառն զի ծերունին առ Սեպուհ
մերձնալով , — զմեզ չե՞ս ճանչեր , Սեպուհ :
բառ ծանր և հանդիսաւոր ճայնով մը : — Յե-
տոյ զարդին և զիեւացն ներկայացնելով նմա-
յաւել հզնդնական եղանակաւ մը . — Սակոյն
տռաջին անգամ է որ զմեզ կը տեսնեմ . ար-
դէն իրարու հանդիսակեր ենք :

— ԶԵՐ համեմար , քրիմնչելով մը ըստ Գար-
օցի Սեպուհը :

— Հիմն' կը հասկնառ և կրկնեց ծերունին :
Սա երկու երիտասարդ ներէն մին կը կոչուի
գրօնշթատի Մանֆրէտ իշխանը , որ իմ իե-
սաս է . միւսը Մեսայնի կուն , որ իմ որդիս

է . իակ ես , Սեպուհի քու դղեանկիդ մէջ գըտ-
նուուող աղջկան հայրն եմ . . . :

Այս զարհուրելի և անակնկալ յայտնութիւ-
նը լսելով Սեպուհը սարսափահար մնաց . չը
ինոքրեց իսկ խոյս տալ . և մահը աշքն առաւ :

—Մեր ո՛վ ըլլալը քեզ խմացնելիս յետոյ,
անօպուտ է հիմայ հոս գտնուելուս պատճա-
ռը բացատրել . . . :

—Ի՞նչ կուզէ՞ք յինէն , թոթովնելով հարցուց
Գարշօյի Սեպուհը :

— Ի՞նչ կուզենք քեզմէ , աղաղակեց իշելի
հայրը ձեռնը ուժգինիմն Սեպուհին դողդոջուն
բազկին վրայ դնելով . ի՞նչ կուզենք մենք .
զարմանք : Եթէլի անօպատութեան խորհրդա-
դով այս մէկ տարի եղաւ որ կ'ապրինք երեք-
նիս ալ . գալտ հետքերուդ . հետեւցանք՝
աննշան խօսքերդ . իսկ լրտեսելով , քու ամէն
գործոցդ վրայ հսկելով , նենդաւորաց կամվա-
տերու նման : Ցարի մ'անցաւ , երկարատև՝
տարի մը , և մեր արտէն , Սեպուհ , շարունակ
արիւն կը հոսէր , և յուսահատութիւնը մեր
անմեկին հիւրն էր եղած . իսկ այսօր , երբ
ձեռքերնիս անցար միայնակ , հոս , հեռի ամեն
մարդկային օգնութենէ , ի՞նչպէս կրնաս մեզ
հարցունել թէ քենէ ինչ կուզենք . . . : կամ
յիմար ես , Սեպուհ , և կամ զմեզ անզօր վա-
ռերու տեղ դրեր ես . . . : Վրէ՛ժ , վրէ՛ժ

պէտք է մեզ հիմայ, և այն ալ այնսլիսի վրէ ժ
ժըլլալու է՝ որ մեր տարրան մը մէջ կրած
փշտակրութեանց հաւասարակշխու գայ . . .
այնավախ վրէ ժ մը, որով իմ ընտանեացս ան-
պատռութեան տեղեակ եղողներն իմանան
թէ Մէսայնի աղջատոհմին սերունդն ինչպէ՛ ո
դիսէ իւր ընտանեաց և աղնուականութեան
դէմ եղած անարդ անքը ջնջել: Օ՞ծ վազեցէք;
Հնրիկոս և Մանֆրէտ այսօթ անտահին ճր-
մարիս վրիժառուները պիսի ըլլանք:

Զոյգ ընդ բանիցն, ծերունին կատաղու-
թեամբ դաշնը քաշեց պատենէն, և որդւու-
ցըն յետ յարձակեցաւ Գարշօյի Սեպուհին վրայ
որ շռադած, զարհաւրած ինքզինքը պաշտպա-
նելու խակ չխարհեցաւ: Ծերունոյն դաշնընը
նորա կողը խոցեց: Հնրիկոս կուրծքէն զար-
իսւ, խակ Մանֆրէտ մինչև սիրտը միւեց դա-
նակը:

Գարշօյի Սեպուհն անձայն ինկաւ դիտապատ-
իսկ երեք ընկերք, անբարբառ, անշարժ, պա-
պանձած ուօքի վրայ կեցան նորու մարմնոյն
քովք: զույգ խակ, հայտ ոչ միշտ մայթանա-
ձնաւ իւն, ուն, խուստի զարման սինդացան
չեն սահած ունանի, և մահամք ընկածընաւ
նայ . . . զնոքաց չեն ենա չեն չեն ուզու-
ան ուզու ունու նու: ուստի, ու ուստի

9. զանագույն պատճենահանդ պարզիորդ
պահանջման բայց այս պահը պահանջման մասին պահանջման առաջնահանդ պահը կազմութեան մասին պահանջման առաջնահանդ պահը մը մահական լութիւն մը տիրելն յետոց Մանքրէտ : Հերիկո և ծերունի Աւապունն իրենց ապշութենէն զարթնլով իրենց կացութեան գիտակցութեանը վերադարձան : Տեղի ունեցած եղելութիւնն երազ մը կը թրուէր իրենց համար : Հարկ եղաւ պատկան տրիւնաթաթաւ և անկենդան մարմինը տեսնել և շօշափել մարդասպանութիւն մը բործուած բայց համոզուելնուն համար : Բայց պարտաւորութիւնն տակաւին չը լրացած, ուրիշ աւելի դժարու տիսուր արշաւանք մ'ալ սփռի ընէին : ուստի խորին տրտմութեանը դարձեալ ծիերնուն վրայ հեծնալով իրենց ոճագործութեան վայրէն հեռացան :

Գարշօյի Սնապուհին դղեակն անտի փարսախ մը հեռի եղաղ լերան մը վրայ բարձրաբերձ դիրքի մը վրայ կառառցեալ էր : Խիստ հեռուէն կը տեսնաւէր, և այն երկրին բնակիչքը քաջ կը ճանչէին զայն, ոչ թէ բարի համբաւ ու հեծնալուն համար : ընդ հակառակն Պոհեմիոյ գեղջուկները գարշօյի Սեպուհին հարստահարութեանց յաճախ փորձն առած բայց բայց գեակը և բնակիչքը սրտի մաօք կ'անիծէին :

Ժողովրդոց երեակացութիւնը հնարադիւտ
ըլլալուն համար, Գարշօյի վրայ բազմաթիւ
առասպելական և ցնորական պատմութիւններ
զրուցուելով սատանային մեքենացութիւննե-
րէն սարսափողները (սակաւաթիւ չէին) այն
վայրերու չէին մերձենար :

Ուստի դղեակը, իւր առաջ սարսափին ը-
նորհիւր, անքեր և պմայի երկիրներու վրայ
կը տիրէր : Անոր համար Սեսլուհն իրաւամբ
երկնչելով ցանեալ դրացնոյ մը վրէժխնդրու-
թեան անգամաշտպան զա՛ երթալու վտանգէն,
շուրջը բազմագունդ զօրականներ կը պահէր,
զոր թէ՛ պատերազմի և թէ՛ խաղաղութեան
ժամանակ ըլլայ՝ իրեն ծախքովը կը սնուցանէր,
և նոքա ալ իրենց տիրոջն ամեն ձեռնարկու-
թեանց մէջ նման կը նպաստէին : Այդ մար-
դիկն ամեն տեսակ աւազակներ էին, որ պտ-
տերազմաց դադրելին յետոյ անգործ մնալով
առջի խնդրողին կը վաճառէին ինքզինքնին :
Նոքա դղեակէն դրեթէ չէին հեռանար . շա-
րունակ պահպանութիւն կ'ընէին հոն, և եթէ
լեռնէն վար իջնէին երբեմն անխոհեմ ու-
զեռները թալլելու համար, ընդ հուպ դըլ-
եակը կը վերադառնացին, ուր ովատուական
կերակուրներ և կատարեալ ապահովութիւն
անվրէալ կը գտնէին :

Ծերունի Սեսլուհը, Մանֆրէտ և Հէնրիկոս

իրաց այս վիճակին տեղեամէ ըլլայնուն համար, իրենց ձեռնարկութեան լրմանը վրայ խիստ տպահով չէին . այն անստակ մարդկան ձեռքէն կթէլը կորպելով՝ Մէսայնի գղեակը կ'ուզէին վերադարձունել . բայց կը վախնացին թէ չըլլայ որ դղեակին զօրականքը ընդդիմանան: Ասոյդ է որ «Փրօհնապօթի» զդեստը, զոր հառեր էին, ամենազօր սարսափ կազդէր . բայց միթէ Գարշօյի դղեկին բնակչաց դէմ կրնա՞ր իրենց նպաստել . սա կ'տը տարակուսական էր : Մանաւանդ. Մանֆրէտ ցաւալի յուզմանի կը մերձենոր իւր հակառակորդին դղեկին : Մէսայնի սեպուհին աղջկանը վրայ ունեցած սաստիկ սէրը, երկար առեն թմրելէն յետոյ՝ յանկարծ կը զարթնուը սրտին մէջ: Ժամ' մ'տուած կ'ուզէր տեսնել դիմէլ, բայց կը խորհէր միանդամայն որ դուցէ աւելի անողոք վիշտեր պահուած էին իրեն համար ուզեորութեան վերջը :

Խոսեցեալին առևանգուելէն ի վեր արդէն տարի մ'անցեր էր : Նա անարատ ելածէր հայրական դղեակին . Մանֆրէտ չէր խխեր մտածել որ անարատ վերադառնար բերդը : Աչ թէ միայն Մանֆրէտ կը վշտակրէր այս խորհրդով, այլ և Հէնրիկոս ու Հայրը բուռըն յուզմանց որս եղած նորա ամէն վախերուն և մտատանջութեանց հաղորդամից էին : Կը-

իրար առեն քայլեցին առանց իրարու հետ խօս-
սելու . բայց երբոր լերան ստորոտը ժամանե-
ցին , որոյ դադաթին վրայ բարձրացած էր
Վարչօյի դպեակը , յոնկարծ կանկառին , Ճի-
երնէն վար իջան , և երեքն ալ դողցես Ալ-
փարանէին ճամբանին շարունակելու : Սեպուհը
նախ բռոթիւնը լուծելով ,

— Ահա հասանք մեր ձեռնարկութեան ա-
մենէն տիսուր պահուն , ըստ կորուկ ձայնով
մը . որ կը յայտնէր սրտին դասնակսկիծ յու-
զումը . մեղմէ մէկը դուցէ կուսցն մէջ ինկնայ ,
դուցէ երեքնիս ալ տասկալինք :

Զաւակներս , սուրբ է մեր ձեռնարկութիւ-
նը , և կը յուսամ որ Աստուած գիւղ մեր վր-
րայ . . . : Բայց դուցէ զիրար ընաւ չտեսնե-
լու վախով իրարմէ բաժնուելու պահուս , ըդ-
մեղ յարող կապերն առելի պիտինք , և գորո-
վալիր գրկախառնութեամբ յետին հրաժեշտ
տանք իրարու :

Հէնրիկոս և Մանֆրէտ նետուեցան ծերուն-
ոյն բազկացը մէջ , որ անխօս սեղմեց զնոսո-
սրտին վրայ : Հուսկ ուրեմն , ինքովինք զօրու-
ցանելով ակամայ նոցա ցաւալի դրիմախառ-
նութենէն վանձը կորզելով , Գղետին հանող
ճամբէն սկսաւ ընթանալ : Հէնրիկոս և Ման-
ֆրէտ ալ նորա օրինակին հետևելով ընդ հուս-
կան դադաթը ժամանեցին :

Աւաերնուն վրայ բերեր էին իրենց սլատ-
մուճաններուն երկայն ծալքերը, և իրենց թա-
ղիէ գլխարկներնուն բայն եղեւքը աչերնուն
վրայ իջեցուցեր էին զողեալին դրան առջե-
կեցող զինեալ պահապանաց կողմանի, բնու-
ընդ դիմութիւն մը չտեսան, վասն զի նոքու,
«Փրօհնապօթի» զգեստը տեսնելուն պէս, վու-
թով բերդը մուծին զնուա :

— Ուր է էթէի սենեակը, հարցուց ծերու-
նի Սեսլուհն այն մարդ ոցմէ մէկուն :

Այն անձը յարդանօք ողջունելէն յետոյ,
ճումբան ցուցնելու պատրաստուեցաւ :

Յայնժամ բազմաթիւ բակերէ անցնելէն, և
շատ մը յարկերէն մեր ելնելին յետոյ, հասան
հումկ ուրեմն բարձրագույն աշտարակ մը, որոյ
տակը գահավիժ անդունդ մը բացուած էր :

— Հո՞ս է, ըստ երեք ուղերաց տուաջ-
նորդը :

Մէսայնի մեսպուհը նշան ըրաւ այն մարդուն
որ քաշուի . և խկոյն դողդոջուն ձեռնովի
դուռը հրելով բացաւ, ու ներս մտան :

Այն սենեակը սլարդ ու անարաժոց էր . բա-
ցուած պատռհամին արեդին ձառագայթ-
ներն արդէն խուցին մէջ թափանցեր էին,
և կին մը, գլուխը ձեռնին վրայ կոթքնցու-
ցած մտախորհ կը լինէր, գոգցես մոռնալով
հեշտալիր և խորին մտածոթեանց մէջ ըն-

Ալրզմած՝ իւր չուրջն ակսող կենդանութիւնն
ու շարժումը :

Այն կինը՝ կմէլն էր գէմքը • այտերը վա-
տուժցեր էին, աչերը • որ մերթ ընդ մերթ
հայեցուածով մը կը փայլէին, կարծէս այն
ատեն իրենց լոյար կորուսեր էին, և իւր եր-
կայն ու ուկրուտ ձեռքերը ինկած անշարժ
կը կենային :

Երեսին վրայ խորին վատութիւն և փայ-
րագ յուսահատութիւն կը տեսնուէին :

Թշուառ աղջիկն արդեօք ի՞նչ կ'ընէր հոն :
Միթէ իւր մանկութեան խռւսափած օբերուն
և ոսկեփայլ անդրջոց վրայ կը խորհէր : Միթէ
հայրենի տաղաւարին անրիծ հեշտութիւններն
ու հայրական սիրոյն նուիրական բերկրա՞նքը
մտքէն կ'անցունէր : Միթէ բոլոր այդ երջան-
կութեանց անհետանուրուն վրայ դառնակրա-
կիծ ցաւե՞ր զգալով այդպիսի յուսահատու-
թեան մէջ ընկղմեր էր, և կամ միթէ եղծեալ
սպատրանաց հետեանք եղող սաստիկ տաղտու-
կըն էր որ կը տիրէր նորա սրտին վրայ . . . :

Դրան բացուիլը լսելով, կմէլ գոզցես ելեք-
արական զօրութեամբ սասանեցաւ ուժգին .
գլուխն յանկարծ վեր կանդնեց, և սարսա-
փած՝ բարացաւ մնաց : Ճանչեր էր զվեսուհը,
բայց կարծէք թէ ոնքը նորոգոյն խաղալիկ եղէր է :

Այս առաջին անդամ չէր որ հօրը ազնուական դէմքը կը ներկայանար իրեն՝ խալիուսիկ պատրանքի մը ձեռքով։ Մի քանի անդամ ճակաբին ու մաղերուն տարրաւ ճեռնը, և մի քսնի կտրուկ և անհասկանալի խօսքեր ըսելին յետոյ, տեսածին ստուգութեանը վրայ շտարակուսելով յուղեալ, խռոված, յտփռշտակեալ բարերաստաւթեամբ դոր տակաւին չէր կարող ըմբռնել, մէկողի ըրտու աթոռը յոր նստեր էր, և վաղեց հօրը պարսնոցին պըլլուեցաւ։

— Հայր իմ, հայր իմ, աղաղակեց դըսխօր ծերունոյն կրծիցը վրայ ծածկելով, ո՛հ, ուրեմն Աստուած ողորմեցաւ ինձ . . .

— Եթէ՛լ, ըստ Մեպուհը, քաջորերուէ . . . Մի՛ դողար : Հանդարտէ՛ : Հայրդ քովդ է, իւթէլու : Գիտեմ որ սա գարչելի սպատերը կը ստուեցունեն զքեղ, գիտեմ որ բանտիս օդը կը խեղդէ զքեղ : Արդեօք քանի՛ քանի՛ անդամ խոնարհեցուցած ըլլալու են իմ սիրելի դուռը :

— Սոյն, այն, գոչեց կթէլ, բայց այն բան մը չէ :

— Խնայէ քեղ, մի՛ պատմեր սիրելիս և ամէն բան գիտեմ, հաւատա՛ խօսքիս . քու մեկնելէդ ի վեր կրած ցաւերս աւելի ստուկացուցին քու վրայ ունեցած ոէրու :

— Ամէն բան գիտե՞ս հարցուց թշուառ աղ-

շիկը, խօսեցեալին աշացը մէջ պիշ նայելով :
— Գանձ կը դուշակեմ : Կը դուշակեմ ու դժույք մայ
եթէւ գլուխը դիւրութեամբ շարժեց :
— Ո՛չ, բայտ դանդաղութեամբ, ո՛չ :
— Ի՞նչ է նայինք, բայտ, Վանֆրէտ ան-
համբերութեամբ :

— Ուրեմն, հիմա ալ կ'ուզե՞ս դիտնալ :
Ավ Տէր, Բ'նչ է բաելիքդ : Ազմկել սկսար
դսիրաս, Լու և րաէ՛ : Միթէ ա՛լ չես սիրեր
դիս, Եթէլ :

— Ո՛չ, Տէր իմ, Եթէ զքեզ չսիրէի, սա վան-
դակապառին և սա սոսկալի սկառերուն մէջ
բանտարդեալ չի ըլլար, եթէ զքեզ չսիրէի,
այս ցնցոտիք պիտի չծածկէին զմարմինս, չի
վատուժնար, դունաթափ չի ըլլար, վասն
զի՝ արդ քեզ հետ խօսող աղջիկը՝ տարի մ'ա-
ռաջ խօսեցեալող եղող աղջկան բնաւ չնմո-
նիր, այդպէս չէ՝ Վանֆրէտ :

— Միշտ գեղեցիկ ես, դու, սիրեցի, իմ
եթէլ, հանգայն ցաւօց հրնչուակին : Այս, խօ-
սեցեալի երդումը պահելուդ և զիս յար սի-
րելուդ վրայ բնաւ տարակոյս չունիմ :

— Եւ սակայն, բ'նչ, հարցուց Վանֆրէտ
խանարհեցունելով դառնակսկիծ մտածու-
թեամբ մը :

— Եւ սակայն, բ'նչ, հարցուց Վանֆրէտ :
— Պէտք է, որ հիմա ամեն բան ըստի քեզ

սա անիծեալ բնակութենէս ելնելով օրուան
լոյսը տեսնելէս յառաջ : Այս՝ պէտք է . . . :
Ո՞հ, քանի՛ աղիաալի է ինձ զայն յայտնել .
բայց դու կը սիրես զիս, Մանֆրէտ, և ըս-
տոյդ դիտեմ որ դղեակէս ելնելուդ պէս ին-
սեցեալդ յեկեղեցին պիտի տանիս ։ Կիմայ

— Կ'երգնում . . . :

— Մի՛ երգնուք ։ Ա ալ երգուայ . . . :

— ինչ : Վիշտան առայս ով նորուց առ

— Ե՞ս ալ երդուայ քու կինդ ըլլալ . . . :

— Յետօյ : Խայտան մ ։ Յարանոր պարզած

— Ո՞վ Աստուած իմ, ըստ Էթէլ հեծելով,
և իւր բանտին քարէ նատարանին վրայ գնա-
տեալ ինինալով :

Եւ դէմքը ձեռացը մէջ ծածկած .

— Աստուած իմ, ոզորմե՛ա ինձ, Կ'աղաղակէր:
Մանֆրէտ սարսումած և ապշած աշերով
կը նայէր : Խնայած առաջաւ առաջ գոյ ։ —

— Էթէլ, կը պաղատիմ քեզ, խօսէ՛: Թանկու-
դին ժամանակ մը կը կորուսենք . վտանգի մէջ
ենք հոս, կընայ ըլլալ որ սեպուհին հանդի-
պին ։ Հայրդ ու եղբայրդ անհամբերութեամբ
կ'օպասեն մեզ ։ Կաղաչեմ, գաղանիք մ'ունիս
։ Ճայա ճայա բայդի իսկս զամ ելունդուն

— Այս, ըստ հէդ ակնիկը քրիմնինելով :

— Միթէ այդ դադտնիքդ այնչափ ծանրա-
կէիւ ու սուկալի՞ է ։ մաս ելունդունդուն

— Այլայլաթենէս կրնաս խմանալ զացն :
— Դժբախտութիւն , թէ չէ . . . ոճրագոր-
ծութիւն մ'է :

— Թէ դժբախտութիւն և թէ ոճրագործու-
թիւն միանգամացն :

Մանֆրէտ շառադունեցա ու դեղնեցա
փոփոխակի :

Թէպէտե այդ տեսակ գաղտնիք մը ըլլալը
գուշակած էր , այսու ամենայնիւ մեծապէս
վրդովեցաւ :

Ինքզինք զօրացուց , և այլայլած ձայնով մը
ըստաւ :

— Բայց գուցէ քեզ համար դժբախտու-
թիւն , և նորա համար ոճրագործութիւն ըլ-
լոց :

— Տէ՛ր իմ , աղաղակեց աղջիկն ի ծունք իջ-
նելով , յանձաւորը ես չե՛մ :

— Ո՛տք ելիր , սիրելիս . յայտնի է որ յան-
ցաւորը դու չես : Հանդարակէ՛ : Դժբախտու-
թեան վրէժը լուծեցինք , ոճրագործը պա-
տուհասեցինք : Այս չը՛ր ըսելիքդ , իմէ՛լ : Հե-
մա , սիրելիս , երթանք հօրդ : Ա՛լ այսուհե-
տեւ բարեբաստ պիտի ըլլաս : Երջանկութիւնն
ու առողջութիւնը պիտի վերադառնան քեզ :
Ե՛կ , կմէլս , կըթա՛նք :

— Ո՛չ տակաւին , աղաղակեց իմէ՛լ :
Ասէ՞ . ոճրագործութեան մը աեղի ունենալն

լով, բայց չյայտնեցի տակաւին թէ ի՞նչ կեր-
 պով դործուեցաւ : Այս առանձ քառական առողջութեան
 — Արիշ ատեն կը բաեւ : • • • առանձ այս ի՞նչ
 — Բայց կրնայ ըլլալ որ զիս ալ զործուելից
 կարծեաւ : Առանձ առանձ առանձ առանձ
 — Ո՛չ, Աստուած շրնէ : Առանձ առանձ ի՞նչ
 — Քիչ մ' ալ դեռ, և յետոյ կ' երթանք այս
 — Ըսէ՝ ուրեմն պատպախտնեց Մանֆրէտ
 համակամութեամբ : Առանձ առանձ այս ի՞նչ
 — Մանֆրէ՛տ, այս դղեակս մտնելէս ի վեր
 տարի մ' ամրագի բոլորեցաւ : Մի՛ կարծեր որ
 միշտ այս աշտարակիս մէջ բնտկած ըլլամ :
 Ուժն ամսէ ի վեր միայն հոս բանտարկուած
 եմ : Կախե առաջ Գարջօյի սեպուհն իմ յու-
 սահատութիւնս փարատել ու դելով կեղծ բա-
 րութիւնքն ինձ առատածեռնեց՝ թագուո-
 րագոյել զեղիսութիւն պարգևելով հիդ իս-
 կը բաեւ թէ՝ կը սիրէ ու կը պատուէ զիս ոցը
 ազնուատոհմ աղջիկ մ' ըլլալու համար : Ովհորի
 մեծորէր յիս գործարութիւնս և զազնուակա-
 նութիւնս : Կ' աղաջէր ներել իրեն զիս քեզմէ-
 բանութեամբ կորդելուն համար : Բայց իւր
 սիրոյ ցոյցերուն դառն կշտամբանօք պատաս-
 խանելուս համար հուսկ ուրեմն համբերու-
 թիւնը հառնելով աղաջանքէն յետոյ, սպառ-
 նողիքը ձեռք առաւ : Գանի՛ քանի անգամ
 հաղի եղաւ ինձ նորա վայրենական ցանկու-

թեան կատաղութեանցը դէմ դնել : Խոր չը-
ւայտութեանց մասնակից ըլլալու շկարենա-
լով զիս ստիալել, հարկադրեց դէմ ներկայ
գանուելու, խօնարհեցնելու և կամ եղծե-
լու համար զսիրտս : Ընդդիմութիւնս տեսնե-
լով կատղեցաւ : Ա՛լ սկսաւ ատել, և օր մալ
այս բանախս մէջ նետեց զիաւ :

Հոսքից մ'առաեն ջունչ առի, նորագարշե-
լի դէմքը չտեսնելով ինքզինքս տղատ կը հա-
մարէի : Ինձ տրուտն գէշ սննդեան և անբա-
ւական օդոյն և միջոցին հակառակ, Մեսայնի
դէմեակն ունեցնած երիտասարդական գոյնս
դարձեալ տեզը եկու : Օր մը սակայն սեպուհը
բանախս դուռը բանալ տալով ներս մտաւ և
խոր հրացնայա աչեքը վրաս տնկելով :

— Զարմանո՞նք, ընաւ, ինչ հրաշք գործուէր
է . . . Զինուես կմել, որ առաջուան գեղեց-
կութիւնդ վերստին առացեր ես :

Գողացի ու լուս կեցայ :

— Կ'երդնում որ զքեզ մահուան մօտ տեսնել
կը կարծէի :

Կ'երկեփի թէ ցայնժամ դժոխային առաջար-
կութիւն մը կ'երկնէր : Հուսկ ուրեմն մեկնե-
ցաւ :

— Մնաս բարեա՞ւ, սիրուն դստրիկս, ընդ-
հուալ կը տեսնուինք, բաելով :

Ընդ հուսպը բելով զարհօրեցայ մեծասիւ :

— Երեկոյին կերակուրս բերին, բայց ա-
խորժակ չունէի : Տէնդը զիս առջորելուն՝ ա-
ռատ ջուր ըմպեցի : Այն ջուրն անսովոր համ-
մունէր : Քիչ առևնէն խորին, յանկարծա-
հաս և անընդդիմակ քնով մաշերս փակեցի :

Դժբախդութեան մը նախազդացութեամբ
սակաւիկ մը քնոյց զէմ դրի, բայց վերջասկզ
յաղթուեցայ . որովհետեւ Գարշոյի սեպուհին
դալստեան սպառնովիրը ըսած ըլլալուս հա-
մար կուզէի բոլոր դիշերը տքնել : Բայց նո-
րմպելիքին մէջ դեղ մը խառնէր էր :

— Դե՞զ մը, դոչեց Մանֆրէտ, ոնապաշտա-
կան սոսկմամբ :

— Անտարակոյս, վասն զի սցդ քունն ամե-
նեւին բնական չէր : Այնքան արագ թմրե-
ցուց զիս՝ որ անկողինս երթալու ժամանակ
չունեցայ : Սակայն . . .

Կթէլ յանկարծ խօսքն ընդմիջեց :

— Շարունակէ, բաւ Մանֆրէտ յանմու-
թեամբ :

— Սակայն երկրորդ առաւօտ, ըսաւ կթէլ
պած ճայնով, անկողնոյս վրայ կիսամերկ պամ-
կած դտայ ինքզինքս : Զանացի անցած իրո-
դութիւնը միտքս բերել : Գլուխս ծանր էր .
յիշողութիւնս խառնաշփոթ : Հիմակուան քեզ
ըսածս մեծ դժարութեամբ կրցի յիշել ,

Բ' անզդ ամութեանո, տղազակեց Մանֆրէտ

իրատղած : Ո՞հ , ինչո՞ւ շոյտ մեռաւ նա : Ո՞հ
եթէ կենաց վերադառնար , քանի անտանելլ
չորչարանօք պիտի քաւէր ոճրագործութիւն-
ները : Խակ ես կարծէի թէ վրէժդ լուծուեր
է , իթէլս . . . : Ո արդարադատ Տէր . ի՞նչ-
ովս կարելի է այդպիտի եղեռանց հաւատալ :

— Ես ալ կը տարակուաէի , իրկնեց իթէլ :
Եղբոր տուաջին անգամ յայն խորհեցայ , չը-
կըցի հաւատալ խկոյն : Բայց համոզումը շատ
շուշացաւ :

— Ի՞նչ կը կը :

— Ո Մանֆրէտ , այնուհետեւ հատած հր-
բատոչքը արտառնքս ակսարեկ ըրած ըլ-
լալու են սցաներս : Կը պարմանամ թէ ի՞նչովս
ոնկէ ի վեր տակաւին կենդանի մնացեր և՛մ
յուսահասութեամբս , ի՞նչովէս զ լուխս սա սրո-
տերուն բաղխելով չեմ խորտակած : Բայց Աստ-
տած է խմ կեանքիս տէրը , անոր համար կ'ա-
դաշէի իրեն որ զիս յերկինս կոչէ . . . : Մահր
կը խնդրէի , և դու , Մանֆրէտ , դուեկար ,
խոխանակ նորա : Ո՞հ , ի՞նչ խոյստառակութիւն-
ուն'չ , մո'չ ո՞ւր ես :

— Բայց ինչո՞ւ մեռնիս :

— Ո մեհանձն մարդ , միմէ զիս այնչա՛փ
էլք սիրե՞ս որ անարդանքը մառնաս . . . :

— Մի երբէք տարակուաիր , սիրելիդ իմ
իթէլ :

Բայց չ առ ծ ն ս մ ի ս ա ր ա բ ա լ ա ն ա յ ն ը այ տ խօսքերն լսած
ատենն յանկարծ մարեցաւ :

Բայց ի՞նչ ընենք այդ հրէշին զաւակը :

Մանֆրէտ ոսուկիմամբ քարոզած չկրցաւ սկս-
տափանել :

Խւր տրփանաց զօրութենէն մղեալ , կթէլի
յուսահատութենէն ալ հրապարուելով խւր
խօսեցեալին կրած անարդանքը մոռնալու վր-
անմութիւնն ունենալով զնու վերուցերէր այն
անկողնէն՝ ուր որ անդգամին մէկը նետեր էր
զնա , և կուզէր յեկեղեցին տանիզ պէթէլ . ո՞հ
անլըւր վեհանձնութիւն . բայց տոկէ առելի
բան չէր զօրէր կատարել :

Կթէլի վերջին յայտնութիւնը քաջութիւնը .
խորտակելով սկսան ի խոր խոցեր էր :

Այսու ամենայնիւ այդ խեղճ աղջիան կա-
ցութեանը խւր վրայ աղջած քնական ոսուկ-
ման դէմ կուռեցաւ :

Զնա արտասուաթոր ի ծունը իջած տեսնե-
լով պէտթեամբ խւր տպաւորութիւնքը ծած-
կեց :

Ա. Հերմանը կինու լըլալ , կըսէր ինքնորբեն :

Բայց խւր խորհուրդը չէր յայտնէր նմա :

— Կթէլ , կղկնեց , ե՞կ հօրդ երփանք :

Թշուառ աղջիկը մեքենայօրէն ոոր ելաւ :

Բայց նոյն ատեն Մեսայնի մեպուհն և ող-
դին աշտարակին մէջ նետուեցան :

— Եերթանք , աղաղակեց ծերունին , բայլ-
մաթիւ խումբ մը դէսլ ի դղեակը կը յառաջեն :

— Երթանք ըստ Մանֆրէտ դիւրին կը կար-
ժես :

Տակաւին Ժամանակ ունինք :

Մանֆրէտ դլուխը շարժեց բացասական կեր-
ոլով :

— Ի՞նչ ընելու է հապա , ըստ ծերունին

— Եթէ այդ մարդիկ ճշմարտապէս դղեակը:
Դալու միտք ունենան , անտարակոյս իրարու
կը հանդիսավինք ճամփուն վրայ :

— Ի՞նչ կ'ըլլայ :

— Հապա Եթէն . . . :

Եթէն աղջիկու է :

— Այո՛ , բայց միթէ խոհեմութիւնն է ինք-
զինքդ յայտնել այն զօրականաց՝ որք մեր ըս-
տաննած մարդուն բարե կամքն են . . . : Եւ մեր
Անկախ-Գատաւոր ըլլալը միթէ կ'օդտէ զմեկ
պաշտպանելու սեպուհին մոհուամբը կատղած
մարդկան դէմ . . . : Նայեցէ՛ք , ձեզ բան
մ'ըսեմ . . . :

Դաշտաց մէջ լուեցաւ վողագոչ ճայնատու-
ութիւն դղեակին զօրականաց :

Ընդ հուպ սորա պատասխանեցին ճայնա-
տութեան :

Մէայնի սեպուհին դէմքին վրայ ասոտիկ
անձկութիւն մը տեսնուեցու :

— Ի՞նչ ընենք հիմայ , ըստու քրթմնջելով :

— Դոքա գուցէ գեղջուկը ըլլան , պատստի իսանեց Հէնրիկոս արհամարհանօք :

— Գուցէ . . . կրկնեց Մանֆրէտ : Բայց դիցուք թէ այդ պէս ըլլայ . միժէ դղեակին զօրականաց հետ սիստի չկռուեինք Եթէլը տպանելու համար :

— Հէք աղջիկս , հառաջեց Մէսայնի սեպուհը :

— Եթէ մեր պատերազմողաց միայն կեանքը վտանդի մէջ ըլլար , «Երթանք» , կ'ըսէի բայց Եթէլը Փրկելու համար հոր եկեր ենք . ուստի պէտք է ազատել զանի կեանքերնիս դոհելով :

— Ի՞նչնէս , հարցուց Հէնրիկոս :

— Դիւրին կերպով մը , որ միշտ անվրէպ յաջողեր է , պատասխանեց Մանֆրէտ :

— Ո՞րն է այն , հարցուց Մէսայն :

— Մեղմէ մէկը զդեստները Եթէլի տայ , ու նորա հագուստներն զդենու :

— Հապա Եթէլի զդեստները հաղնողը ի՞նչ ընէ , հարցուց Հէնրիկոս :

— Ինքը գիտէ :

— Կ'ըլլայ այնպիսի բան :

— Կամ աշտարակիս մէջ կենաց չեն կամ , Աեպուհին մահուան . պատճառած խռովութենէն օդուտ քաղելով խոյս տայ էսանք Եթէմայն կարող չէր աղջկանը համար զո՞յ եր-

թալ, և ոչ ալ թոյլ տալ որ խը ժառանգը
կեսնքը դնէ քրոջը համար :

— Ոչ, բայս, ևս չեմ հաւանիր : Խջաննը
գղեակին բակը, և մեզմէ երկուքը զիմէլ
պաշտպանած ատեն, երրորդը ասպասանէն
ձինը բերէ մեզ : Աղջիկս ձիուս վրայ կ'առ-
նեմ, ու մեր թշնամեաց մէջէն կ'անցնինք,
և կամ կը մեռնինք :

— Արթոննը ուրեմն, կրկնեց Հենրիկո
աստատովթեամք :

Եւ մինչ չորսն ալ աշտարակին սանցուխն
հասնը էին, կախեալ—կամուրջին իջներուն
ձայնը լսելով դարձեալ կանկ տոին :

Երբ բազմաթիւ հեծեալներու ձիոց արո-
միւնք լսեց, Մանֆրէտ դառնութեամք ժբա-
տելով :

— Կը լսէ՞ք չ բայս :

— Այո՛, պատասխանեցին տխորովթեամք :

— Գտո՞ք ձիերը հիմայ :

— Թշնամիք արդէն բակը մօան : Օխոտու-
րովթենէն հրաժարելու ես, սեպահ :

— Թողէ՛ք զիս, աղաղակեց կմէլ, իմ կեան-
քըս ձեր արեան մէկ կաթիլն իսկ չ'արժեր :

Զիս հոս թողէ՛ք, ու գուք զ ացէ՛ք : Թո-
ղէ՛ք թշուառ աղջիկ միք, արսոյսուհետեւ ոչ
բանի մը փափաքը և ոչ երկիսոյը պիտի զզ այս
Ացէ՛ք զիս յայս քանա, իխաւարի, ՚ի մահ :

- Կու ինչ կըսես , Մանֆրէտ , հարցոց
Հնդիկոս :
- Կը խռոտանա՞ս խորհուրդիս հնագանդիլ :
- Այսո՛ :
- Իսկ դու , Ֆէռայն :
- Ես ալ կը խռոտանամ :
- Էթէլ , դու ալ կը հնազանդէլ՞ս :
- Այսո՛ , կը հնագանդիմ քեզ , ովասասիս-
նեց էթէլ համակամութեամբ :
- Լոռթիւն , ըստ մեսպուհը . վեր ելնե-
րու վրայ են :
- Բազմաթիւ յամբաքայլ ոտից ձայնը լու-
սեցաւ սանդխին վարը :
- Վիճաբանութեան ժոմանակը չէր :
- Աւստի , առանց խօսք մըսելու , ովատամո-
հանք , գլխարկը և դիմակը հանելով էթէլ
ստիպեց որ ծպտի :
- Անկախ դատաւորաց լայնեզր գլխարկին
և երկացն սպատիւնանին տակ տնկարելի էր
հանչել ուղղիկը :
- Գարշօյէ ու պահին դստիկոնին դուռը
բացաւ , և ճամբան ցուցնելով :
- Նիմայ դացէ՛ք , ըստ սանդխին դուռք
աղէկ մը սփափի փակեմ , իսկ դոք փախէք
նոցա՝ դռւոր խորտակելու աշխատելնուն ժո-
մանակ : Եթմաք բորեա՛ :
- Վիճաբանութեան ժոմանակը չըսպան

Համար երեք վրիժառուք իրարու ձեռք թոթ-
ուեցին :

Կթէլ մխայն կը վարանէր , բայց հայրն ու
եղբայրը քաշեցին հանեցին զնա սենեակէն :

— Հապա դու , ի՞նչ ալիստի ընես , ըստ հե-
տանալով :

Մանֆրէտ պատուհանը ցուցնելով .

— Անդունդն է ապաւէնս . պատասխունեց :

Աշտարակը բարձրացեր է գահավէժի վրայ,
որոյ աչքով խորութիւնը հաղիւ հազ կրնար
չափուիլ :

Ցուսահատ Մանֆրէտը անդունդին մէջ նետ-
ուելով մեռնելէն զատ ուրիշ ճար չունէր :

Հիմա պատմենք դղետկը տեղի ունեցած
եղելու թիւնները :

Չոփիւններ սեպուհին անկենդան մարմինը
տեսնելով զարհուրած՝ փախեցր ու ամենուրեք
ոյդ գոյժը տարածեր էին :

Նոյն ատեն Գարշօյի դղետակին քովէն կ'անց-
նէին մի քանի ասպետներ՝ որը Բրակա քա-
ղաքէն ելնելով՝ Պավերիայի դըմին կ'երթային:
Քեղջուկներուն հետ միացան թէ սեպուհին
յիշատակը մեծարելու և թէ նորա մարդաս-
ողանները գտնելով սաստիկ վրէժ մը լուծե-
լու դիսմամբ :

Կոցա ձիերնէն իջնելով՝ բերդին գլխաւոր
դրան մերձենալու ատենը, երեք մարդ տեսան-

նրկայն ոլատմուճո՞ն հառկած և մե թափիչ գլխարկ դրած :

Նոցա՝ Գաղտնի-Ստենին դատաւորներն ըլլալը տեսնելով լութեամբ շարուելով ճամբայ տուին :

Սեպուհին մի քանի ծառայները ուղեցին այն խորհրդաւոր օտարականներուն վրայ յարձակիլ, բայց իմաստնախոհ ասպետք փութով ընդդիմացան նոցա դիտաւորութեանը :

— Չըլայ որ այդ մարդոց դպչիք վասն դի նոցա երեխիլը միշտ մեծ եղեռնաւորի մը մատժուիլը կը գուժէ :

Խըրաքանչիւր ոք յայնծ տմսեպուհին անկենդան մարդմնոյն վրայ դարձոց աչերը : Բայց Պոհեմիացի ասպետներէն մէկը պրուցեց որ ուսպուհն Անկախ-Դատաւորաց ձեռքով չը ըստանուած, վասն զի մահուաւ երկութը վէրքին մէջ չէր թողուած :

Աւստի ամեն մարդ համեզուեցաւ որ Սեպուհն սպաննող մարդուն համար միայն Գաղտնի-Ստենին դատաւորքն ի դղեակս եկերէին . . . :

Մարմինը տարին մեծ սրահն, ուր որ ուսպուհը երբեմն տօնախմբութեանց և զքեզաւշուք հանդէսներու կը նախագահէր :

Գարջօյի դղեակին երկցը մերձեցաւ մեռելոց աղօթքը զրուցելու համար :

Հասդիւ մի քանի խօսք արտասանեց էր , ու
հա մէկուն յամբանայն կրօնական երդ մը նրա
ագելը լուսեցաւ քովի սկզբեկին :

Հանդիսականք ողջոյն սասանեցան և վերա-
յիշեալ Պոհեմիացի տապետն ամենէն տւելի
այլացիցաւ :

Ասուող արիսկան ձայնը հեռաւեկալ երդը
լի երդէր :

«Գիշերն՝ իւր ընթացից ո՞ր սասինանին հա-
սերէ , մահագոյժ թռչունը թէ առաւտեան
հան երդէ ջրաց վերաց : Լուսինը թէ արջա-
լցուը լուսաւորէ զերկին : »

Այն՝ Անկախ—Գառաւորաց երդն էր՝ որ
մէկէն ի զատ , ամեն հանդիսականաց համար
անհասկնալի էր :

Պոհեմիացի տապետն այն ընկերութեան
անդամներին մին ըլլալով՝ այն երդը լուսուն
ալէս խմացաւ վտանգի մէջ եղող եղրօն օդնու-
թիւն խնդրելը , ուստի , հետեւեալ կերպով
սրասամայտանեց :

Դաւարն ևեթ ծածկէ պրնութիւն ընին .
Եզերաց վրայ հսկող թռչիւն չկայ , համայն
տիեզերաց մէջ ձայն մի ևեթ կը քենք՝ որ
արդարութիւն կը խնդրէ :

Այս տարօրինակ տեսարանին ամեն ակա-
նաւուաքը սարտավելով կը նայէին ասպետին :

Յանկարծ աշտարակին որուոք բացուելով՝

Մանֆրէտ երևաւ դունսիթափ, սպառնաւ-
ից կերտարանսւ և դաշոյնն ՚ի ձեռին :

Ուզզատէս մարմնոյն քով երթալով՝ հան-
դիսաւոր ձայնով մը բաւ :

— Յանուն Արբոյն Ատենի սպաննեցի զքեղ,
Նմէւ տը Մէսայնը առևանդելուդ համար :

Եւ որպէս զի ամեն ոք գիտնայ մէջ ոյք պա-
տուհասեցին զքեղ, մէրիդ մէջ կը թողում
զդաշոյնս :

Երկաթը ննջեցելոյն կուրծքը միսելէն յե-
տոյ՝ յամբաքայլ հեռացաւ վսեմական յանդը՝
նութեամբ, սորսափած, ապշած հանդիսակա-
նաց մէջէն :

Պօհեմիացի ասպետներն ոլ ընդ հուպ դրու-
եակէն դուրս ելան :

Սեպուհին սպառաւորներն իսկ չիշխեցին,
իրենց աիրոջը անկենդան մարմնոյն քով ընդ
երկար կենալ ու փախան դացին :

Գիշերն երբ վրայ հասաւ, երէցը՝ որ մի-
այնակ մնացած կաղօթէր, քաջութեամբ և
բարեգործութեամբ Գարշօյի վերջին սեպուհը
նորա նախնեաց դերեզմանը իջեցուց :

Նոյն օրէն սկսեալ, ա՛լ Մէսայնի սեպուհին,
Հէնրիկոսի և Մանֆրէտի վրայ յիշառակու-
թիւն մը չտեսնուիր պատմութեանց մէջ :

Մանֆրէտ իւր Գրօնշթատի կալուածները
ուրիշին լքանելէն յետոյ, պատերազմներով

Դեանքն անցուց և գոցէ խոսվից մէջ ըստ
պանսուեցու :

իսկ էթել, Մանքրէտի երթալէն յետոց չը-
կրցաւ ասլրիլ, ու մեռաւ :

ինչպէս որ ներկայ պատմութենէն կը տեսնուի, վրէծխնդրութիւնը հասուցման տեղը չը ուներ, անոր համար Անկախ-Դատաւորներու արդարութիւնն յաճախ տնտիւղ եղեր է:

462

Գրքիս մի քանի բառերու և յատակ
անուանց վրայ մասնաւոր տեղեկութիւն
տալը կարևոր գասելով, հարկ ուղեցինք
հետեւալ հինդ ծանօթութիւններն ու
ուղնել:

Ա.

Տիւտօնիա .— Պալթիկ ծովուն ափանց վրայ բնակող և այլ Գերմանական ժողովուրդներն առ հասարակ «Տետոնք» անուամբ ծանուցնալ ըլլալով, Գերմանիան ալ «Տետոնիա» կոչուեցաւ :

Տետոնք, կիմրացւոց հետ գանուք գետեն անդին անցան Քրիստոսէ 412 տարի առաջ : Տետոյ ուրիշ ժողովրդոց հետ միանալով Գաղղիոյ մէջ Հռովմայեցւոց շատ անդամ յաղթեցին (411—426 Ք. Ա.) բայց Գոդանոս գետին միւս կողմը Մարիոս զօրսավարը նոցա երկու բանակներուն մեծ ջարդ տալով բորբոքին յաղթեց նոցա զօրութեանք :

Բ.

Գլորչթօք .— Այս Գերմանացի հաջակաւոր քերթողը Մաքսոնից Քէտզէմպուրեկ քաղաքը

Տնու 1724ին, ու մեռաւ 1805ին: Եկեղեցական վիճակն ընտրեր էր: Մեսիա անուն բառնաւուղծական պապանախութեանում մեծ համբաւ ստացաւ: Բաւակրան ժամանակ Կի Գրունհամ լընակեցան, ուր որ Փրէթէրիկոս Աթագուորը թոշակ կապեր էր իրեն: 1771ին Համապորկ անցաւ, ուր և մեռաւ: Իւր վերայիշեալ երկասիրութիւնը քսան երդէ բազկանալով մաս առ մաս հրատարակուած է մեծանուն քերթողին կենդանութեան ժամանակ: Խւր աշխատասիրած տաղերը աւելի փառաւորեցին դիմքը քան ուրիշ ամեն քերթութիւնը որպէ են: «Եղերերզք», երեք հատ «Ողբերզութիւն»: Են: : Գերմանական լեզուին կատարելութեանը օդ տակար կերպով հետամատելու:

Պ.

Ի՞ օթե՛ — ջնու ՚ի ֆրանքֆորթ (Մայնի վրայ)՝ 1749ին: Ծանօթացաւ 1771ին իւր վերթէր անուն հրաշուլի վիմասանութեամբը: Ասոր վրայ վայրիոտս երփառասարդ դքսին պաշտպանութեանն արժանապաւ: Եւ յիշեալ իշխանին դքսութեան պաշտօնեայներէն մին եղաւ երկար ասցենե: Ֆրանոսի մեծ յեղափախութիւնն առեած մի քանի հոչակառոր ողբեր-

դութիւններ հրատարակեր էր : Այնուհետև
բոլոր Եւրոպան գրաւող քաղաքական և պա-
տերազմական ընդհանուր պրազմանց ժամա-
նակ, իրեն աշխատամիտած հիտնալի երկու-
սիրութիւնները Գերմանիան ողջոյն ապշե-
ցացին : Հուսկ ուրեմն ֆառուսթ անուն յոյժ
ծանուցեալ անմահական թատրերդութեամբն
իւր հայրենեաց ամեն հեղինակներն ալ գե-
րազանցեց :

1807ին մեծն Կարօքոն պատրոց լիդէոնի
մեծ—խաչը սբարով և կայ ի մեծարանս Կիօթէի
անուահման հանճորին : Գերմանիոյ պատե-
րազմաց ժամանակ, կոմ' երախտադիտու-
թեամբ և կամ այլ և այլ պատճառով հայրեն-
եացը թընառնեցն դէմ անառրերութիւն-
ցուցնելուն համար՝ սպզակիցը շատ Արդար-
ուցին զինքը : Մինչև մահն անդադար գրեց
ոչ միայն մատենադրական այլ և դիտու-
թեանց վերաբերեալ դանազան երկարիու-
թիւններ : Մեռաւ 1832ին 83 տարեկան հա-
տակին մէջ : Գերմանիոյ գլուխոր հանճարուոր
հեղինակներն մին Ելուծ է Կիօթէ, որ բա-
նաստեղծութեան մէջ նախնի քերթողաց հա-
ւասար կըթուի . իսկ արձակ դրութեանց մէջ
նախնը չունի: Գլուխութեան մասին դարզվ բաղ-
մաթիւ գիւտերու քով իւր անունն ալ յա-
նախ յիշուեր է :



ի ող—Գրուա . — Այս գաղտնի ըներւթեանն նպատակն էր ներքին յայռնութեան ձեռքով բնութեան լաղտնեաց տեղեակ լինել : Կը կարծուի որ 1416ին Ժ.—Վարդեհին անուն մէ կը հիմնած կը լաց զայս : Ընկերակցութեանս անդամները կը ջանացին մարդկութեան կարևոր եղած գիտութիւնները կատարելագործել : բայց ժամանակ անցնելին յետոց մագակրատ համարուեցաւ ու վարեկընին կօրուաին :

Միսի—Տօմինիվի .— (Աւաքեալը տեսան) Այս անուամբ կը կոչուեին Փրանկ թագաւորաց Երկրորդ Հարաստութեան ժամանակ որպայից զրկած նուիրակները , որք , գաւառներուն մէջ , զքսելու և կոմսելու վարքը քննելով , թագաւորին անկ Եղաղ դատելու պրոց աշխատային :

720

2013

ՅԱՆԿ ԳՐՈՑ

Լամբնէ , Բանք հաւ . Գին 1/4 Մէծիս :
Նոր Դաս Ազգ . Պատ . » 3 Ղրշ .
Վ . Հ . Քրս . Երկառու . » 1/4 Մէծիս :
Գաղտնի Ասեան , Անկախ Դատաւորաց .
Գին 1/4 Մէծիս :
և Ալուրատայ Բաժանորդաց համար ,
Գին 4 Ղրշ .



ՄԱՄԱՅ ՏԱԿ

Լամարթին . Ամէ Առկատաց .